1441

Ս. ԱՄԻԴՈՎԻՉ

ԲԱՆՎՈՐՈՒՀԻՆ ՅԵՎ ԳԵՂՋԿՈՒՀԻՆ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵՋ

396
Ս-61

ԶԱԿԿՆԻԳԱ

Ս. ՍՄԻԴՈՎԻՉ

ԲԱՆՎՈՐՈՒՀԻՆ ՅԵՎ ԳԵՂՋԿՈՒՀԻՆ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Թարգմ. ՄԱՐՈ ԶՈՒՐԱԲՅԱՆԻ.

... Ա. Կ Կ Ն Ի Գ Ա

ՀՍԽՀ — ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
1441

01 AUG 2013

С. СМИДОВИЧ
Работница и крестьянка в
Октябрьской революции.

ЗАККНИГА

Թիֆլիս, Ժ.Տ.Բ.Խ. Պոլիգրաֆ. 1-ին տպ., Պլեխանյան պր. № 91. Պատվեր № 862.
Տիրաժ 2000. Պրաուեկ 176։

ԱՌԱՋԱԲԱՆ

Սրանից տաս տարի առաջ կատարվեց Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը։ Ընկ. Լենինի և կոմմունիստական կուսակցության ղեկավարությամբ՝ մեր յերկրի պրոլետարիատն իր ձեռքն առավ յերկրի իշխանությունն ու գյուղացիության հետ հաստատուն դաշինք կնքած՝ սկսեց աշխարհիս $^1/_6$ մասը կառավարել։

Իր անխուսափելի խորտակումն զգալով՝ բանվորների ու գյուղացիների թշնամիները մի անգամ չեր, վոր վայրագ կատաղությամբ հարձակումներ գործեցին աշխատավորների՝ աշխարհիս առաջին հանրապետության վրա։ Կալվածատերերն ու կապիտալիստները, վորոնց հողերն ու ֆաբրիկները խլել եյինք, միացել եյին ոտարյերկրյա բուրժուազիայի հետ։ Նրանք պատերազմի եյին դուրս յեկել մեր պետության դեմ։ Նրանք ապստամբություններ եյին սարքում մեր յերկրի ներսում։ Նրանց՝ թեկուզ կարճ ժամանակով՝ հաջողվում եր ամբողջ շրջաններ գրավել։ Յեվ այդտեղ նրանք իրենց վոխը հանում եյին աշխատավորներից ու նրանց յերեխաներից։ Բանվորուհիներն ու գեղջկուհիները չեն մոռացել, թե ինչպես սպիտակ բանդիտները ծնողների աչքի առաջ սպանում եյին նրանց յերեխաներին, բանվորներին ու գյուղացիներին կենդանի թաղում, իսկ կանանց բռնաբարում և սպանում։

Տաս տարի շարունակ բանվորուհիներն ու գեղջկուհիները լարում են իրենց բոլոր ուժերը, Հոկտեմբերյան հեղափոխության մեծ նվաճումները պաշտպանելով։ Պրոլետարական հեղափոխության մեծագույն վտանգի որերում ծնված Կարմիր բանակի հետ միասին՝ նրանք քաղաքացիական կռվի ճակատումն են յեղել։

Վողջ աշխատավորության հետ նրանք կռվել են քաղցի, տիֆի, ցրտի դեմ, յերբ մեր յերկիրը կործանման շեմքին եր գտնվում այն շրջափակման (блокада) հետևանքով, վոր ամբողջ աշխարհի կապիտալիստներն ու նրանց կառավարությունները եյին հայտարարել։

Այժմ, յերբ մեր թշնամիներն արդեն պարտված են բացարձակ կռվում, բանվորուհիներն ու գեղջկուհիները իրենց ուժերը նվիրում են արտադրությունը բարձրացնելուն, վորն անհրաժեշտ է մեր աղքատ ու տնանկ յերկիրն աշխատավորների բոլոր պահանջներին բավարարություն տվող մի արդյունագործական ծաղկող յերկրի վերածելու։

Չնայած ծանր պայմաններին, նրանք տարեց տարի հիմնարկություններ են կառուցում, վորոնք ժամանակին նրանց կազատեն ընտանեկան ստրկությունից։ Հաղթահարելով բոլոր դժվարությունները, նրանք պայքարում են ցարիզմի ժամանակից մեզ ժառանգություն մնացած մեր պետական հիմնարկությունների բյուրոկրատիզմի դեմ։

Համբերատար, տոկուն և համարձակ՝ նրանք նոր կյանք են կառուցում անխռով, առանց ճրճռան ֆրազների, առանց խուճապի չենթարկվելու իրենց ճամբին պատահած դժվարություններից։ Նրանք հաստատ գիտեն, վոր կհաղթեն։

Թշնամու գնդակներից, տիֆից, սովից, ուժերից վեր աշխատանքից վաղաժամ հանգած, դասակարգային թշնամու դեմ մղված մեծ ճակատամարտերի դաշտում ընկած անհայտ աշխատավորուհիների պայծառ հիշատակին են նվիրվում այս գրքույկի համեստ եջերը. ինչպես և այն բանվորուհիներին, գեղջկուհիներին, բանվորների կանանց, Արևելքի աշխատավորուհիներին, վորոնց յուրաքանչյուր խիզախումն ապրում է Հոկտեմբերյան մեծ հեղափոխության յուրաքանչյուր նվաճման մեջ. նրանց, վոր մինչև այժմ հեղափոխության 10 տարիներում որեցոր իրականացնում են բանվորուհիների և գեղջկուհիների մեծ ուսուցիչ ընկ. Լենինի ավանդը և անխոնջ կերպով կառուցում սոցիալիզմի նոր, մաքուր, լուսավոր շենքը։

---

1. ՄԻՆՉԵՎ ՓԵՏՐՎԱՐԸ

Հոկտեմբերյան հեղափոխությունը, ինչպես պրոլետարական հեղափոխություն, աշխատավորության լայն մասսաներին քաշեց իր շարքերը։ Սա վոչ միայն պրոլետարական հեղափոխության հաղթության, այլ և նրա նվաճումների ամրապնդման հիմնական պատճառներից մեկն է հանդիսանում։ Այս մասսաների մեջ քիչ դեր չեն խաղացել կանայք — բանվորուհիները և գեղջկուհիները. այսինքն՝ ճնշվածներից ավելի ճնշվածները։

Յեվ ինչպե՞ս կարող եր ուրիշ կերպ լինել։ Դարերով կաշկանդված, դարերով զրկված բանվորուհիները չեյին կարող հեռու կանգնել իրենց դասակարգի ազատագրական շարժումից։ Այսպես որինակ՝ 19-րդ դարի վերջերքին լայն ծավալ ստացած մեր բանվորական շարժման մեջ կին-բանվորուհիների ելույթն է նշված։ 1896 թվին Լենինգրադում ջուլհակուհիներն անիծապարտ ցարի ժանդարմների դեմ պակաս հեղափոխական վոգևորությամբ չեյին կռվում, քան կարիքից ու քաղցից ծայրահեղ թշվառության հասած բանվոր-ջուլհակները։ 1905 թվին ռուսական առաջին հեղափոխության ժամանակ, բանվորուհիներն ևս բանվորների հետ միասին մասնակցում եյին հեղափոխական կռվին. Մոսկվայում բարրիկադների վրա բանվորների հետ միասին եյին կին-բանվորուհիները։

Գեղջկուհիները, վշտից ու կարիքից դրդված, ապստամբած յեղայր-գյուղացիների հետ միասին, դեռ Ստեփան Ռազինի և Պուգաչովի ժամանակ մասնակցում եյին գյուղացիական շարժումներին։ Մենք գիտենք, վոր 1905 թվին գեղջկուհին ևս քայլում եր ապստամբած գյուղացիական մասսաների շարքերում։

Վոչ միայն բանվորուհու, այլ և բանվորի կնոջ, քրոջ, մոր տրամադրությունը բոլոր յերկրներում, բոլոր ժամանակներում մեծ դեր է խաղացել բանվորական մասսայական շարժումների ժամանակ։ Անգլիական հանքագործների գործադուլի ժամանակ հանքագործ կանանց հերոսական վարմունքը,—կանանց, վորոնց

շարքերում վոչ մի շտրեյկբրեխերուհի չգտնվեց,—և հանքագործների կանանց անձնազոհ տոկունությունն իհարկե պակաս ազդեցություն չի ունեցել այն հերոսական պայքարի վրա, վոր մեր արտասահմանյան ընկերներն եյին մղում իրենց վրա հարձակվող կապիտալի դեմ։

Բայց արդյոք դա նշանակում եր, թե բանվորա-գյուղացիական ամբողջ կին-մասսան գլխովին հեղափոխական եր։ Իհարկե վոչ։ Բանվորուհու և գեղջկուհու,—ինչպես մոր, ինչպես կնոջ, տանտիկնոջ,—կենցաղային պայմանները բավականաչափ կաշկանդում են նրա ձեռները, դարձնելով նրանց ավելի յերկչոտ, պակաս ակտիվ, քան եյին նրանց դասակարգային ընկերները։

Կին-բանվորուհիները, չափազանց կապված ընտանիքի շահերի հետ, և իրենց դասակարգային ընկերների հետ համեմատած, հետամնաց լինելով, հաճախ կապիտալիստների ձեռքին գործիք են դարձել բանվոր դասակարգի դեմ մղվող կռվում։

Այսպես, որինակ, Պետերբուրգում (այժմյան Լենինգրադում), «Նոր Այվազ» գործարանում, մի անհաջող գործադուլից հետո, յերբ աշխատավարձը բավականաչափ իջել եր, տղամարդ փականագործներին մասամբ փոխարինել եյին կանայք։ Իզուր չեր, վոր կապիտալիստները դեպի արդյունագործությունն եյին քաշում կանանց աշխատանքը։

Նրանք միանգամայն ճիշտ եյին դատում, վոր կանայք անկազմակերպ են և ավելի քիչ գիտակից, ուստի և նրանց ավելի կարելի յե շահագործել, քան բանվորներին։

Կանանց դեպի արտադրություն քաշելն ինչ նպատակներից ել առաջացած լիներ, առաջին քայլը հանդիսացավ, վոր նրանք հասկանային իրենց դասակարգի շահերը, կազմակերպված և գիտակից դառնային։

Մարքսը և Լենինը գտնում եյին, վոր կնոջը դեպի արդյունագործությունը քաշելը քանդում ե կյանքի նահապետական կառուցվածքը և բարձրացնում կնոջ ինքնագործունեությունը։ Այս իսկ պատճառով, դա առաջադիմական յերևույթ ե։ Ինքն ըստ ինքյան հասկանալի յե, վոր այդ ժամանակ կնոջ աշխատանքը պետք ե դրված լինի առողջապահական պայմաններում, քանի վոր կնոջ որգանիզմի դրությունից ե կախված ապագա սերնդի առողջությունը։

Ահա ինչ եր գրում ընկ. Լենինը իմպերիալիստական պատերազմի ժամանակ կնոջ աշխատանքի մասին. «Բուրժուազիայի գործն ե

տրեստներ զարգացնել, կանանց և յերեխաներին գործարան քշել տանջել այնտեղ նրանց, մոլորեցնել, ծայր աստիճան կարիքի դատապարտել։ Մենք այդպիսի զարգացում չենք պահանջում, չենք աջակցում նրան, մենք պայքարում ենք այդպիսի զարգացման դեմ։ Բայց ինչպես ենք պայքարում։ Մենք գիտենք, վոր տրեստները և կնոջ գործարանային աշխատանքն առաջադիմություն ե։ Մենք չենք ցանկանում յետ գնալ դեպի արհեստը... դեպի կնոջ տնային աշխատանքը։ Առաջ տրեստների միջոցով և նրանցից հեռու դեպի սոցիալիզմ։

Պատերազմի ժամանակ արդյունագործության մեջ աշխատող բանվորուհիների կազմերը մեծացան այն պատճառով, վոր բնակչության աշխատունակ տղամարդկանց մի մասը գնաց կռվի ճակատ, և գնացողներին փոխարինեցին կանայք. նաև այն պատճառով, վոր պատերազմական ժամանակի պահանջների հետեվանքով ինքն՝ արդյունագործությունն ել զարգացավ։ Այդ ժամանակ կնոջ թույլատրվեց աշխատել յերկաթահանքերում, մետաղամշակման գործարաններում և հանքային արդյունաբերության մեջ։ Յերևացին կառապան կանայք, բարձողներ, յերկաթուղային բեռնակիրներ։

Գործարանային տեսչության տվյալներով, վոր առաջ են բերված Ս. Կապլանի «Կնոջ աշխատանքն ու այդ աշխատանքի պահպանությունը խորհրդային Ռուսաստանում» գրքում, արդյունագործության մեջ աշխատող կանանց քանակությունը աճել ե 1914-1916 թվի շրջանում 8,2% (1914 թ. կնոջ աշխատանքը կազմում եր 31,8%, 1917 թ.—40%)։

Պատերազմի առաջին յերեք տարիներում կնոջ աշխատանքն աճեց յերկու անգամ ավելի, քան ամբողջ առաջին տասնամյակում (1904 թ.—27,6%, 1914 թ.—31,8%, 1917 թ.—40%, այսինքն՝ տասը տարվա ընթացքում 1904-1914 թիվը աճել ե 4,2%, յերեք տարում 1914-1916 թիվը—8,2%)։

Գյուղում ավելացել ե գյուղատնտեսական բանվորուհիների և բատրակուհիների թիվը։

Արդյունագործական բոլոր ճյուղերում, վորտեղ կինը փոխարինել ե տղամարդուն, նա յենթարկվել ե անասելի շահագործման։ Նրա աշխատավարձը բանվորի աշխատավարձի հետ համեմատած՝ հավասար աշխատանքի համար բավական ցածր ե յեղել (30-50%), իսկ արդյունագործության այն ճյուղերում, վորտեղ պատերազմի ընթացքում առաջին անգամ գործադրվեց կնոջ աշխատանքը, բո-

լորովին աշխատանքի պաշտպանություն չմտցվեց։ Կինն ստիպված էր առավոտից մինչև յերեկո, որեկան 12-14 ժամ, ամենածանր աշխատանքը կատարել։ Նրանք բարձում էին վագոնները, հանքահորերում վագոնետկաները քշում, և այդպիսի աշխատանքի համար, որինակ Ուրալի լեռնահանքերում, որական 25 կոպեկ աշխատավարձ ստանում այն ժամանակ, յերբ տղամարդը նույն աշխատանքի համար ստանում էր 40 կոպեկ։ Շատ ֆաբրիկաներում աշխատում էին 12-13 տարեկան աղջիկներ։ Ինքնին հասկանալի յե, վոր պատերազմի ընթացքում դեպի արդյունագործություն քաշված կանանց աշխատանքի ծանր պայմաններն անդրադարձան նաև այն կանանց աշխատանքի պայմանների վրա, վորոնք դեռ մինչև պատերազմն աշխատում էին ֆաբրիկաներում։ Իսկ կանանց ցածր աշխատավարձն ազդեցություն գործեց ամբողջ բանվոր դասակարգի աշխատավարձի վրա։

Դրան պետք է ավելացնել այն, վոր առաջին անհրաժեշտության մթերքների թանգանալու հետ, պատերազմի ժամանակ բանվոր դասակարգի դրությունը խիստ վատացավ, վորն ի հարկե հավասար չափով անդրադարձավ բանվորուհու դրության վրա։

Պատերազմի սկզբում կանանց շարքերում գոյություն ունեցող մեծ անգործությունը իր ազդեցությունն ունեցավ նրանց աշխատանքի պայմանների վրա՝ պատերազմի ժամանակ։

Կենսամթերքների և բնակարանների գները խիստ թանգացնող պատերազմի հետ միասին՝ չափազանց վատացավ բանվորական ընտանիքի դրությունը, վորը մեծ մասամբ զրկվելով ընտանիքը կերակրողից, թողնված բանվորուհի մոր խնամակալությանը՝ քաղցի, ցրտի և լիակատար անհուսության էր մատնված։

Ֆաբրիկաների և գործարանների տերերը պատերազմի ժամանակ յեղած համագումարներում ու խորհրդակցություններում իրենց ելույթների ժամանակ մատնանշում էին, թե բանվորների աշխատավարձը բարձրացել է։ Սակայն թվերը հերքում են նրանց ասածները։ Այսպես, որինակ՝ այն ժամանակ Բագվի բանվորները գրում են, թե հացը թանգացել է 40%, հագուստը և կոշիկը՝ 200—300%, իսկ աշխատավարձը մնացել է նույնը, ինչքան վոր պատերազմից առաջ է յեղել։

Բանվորուհիները լրագրների խմբագրությանն ուղարկած իրենց թղթակցություններում մատնանշում էին, վոր թեյ խմելու սովորությունը վաղուց արդեն վերացել է, իրենք միայն յեռացրած ջուր են խմում, իսկ լայն մասսաների գլխավոր ուտելիքը միայն սև հացն է։ «Զգում. ես,—գրում է մի բանվորուհի,— վոր ուժից վեր աշխատանքից և սննդի պակասությունից հազիվ ես վոտքի վրա կանգնած մնում»։

Պարզ է, վոր աշխատանքի և կյանքի անտանելի ծանր պայմանները բանվորուհիներին հասցրին մի շարք հիվանդությունների և մեծացրին վոչ միայն բանվորուհիների, այլ և մանուկների մահացության թիվը։ Պետք է ուշադրության առնել նաև այն, վոր մինչհեղափոխական Ռուսաստանում մայրության և մանկության պաշտպանության վոչ մի հիմնարկություն չի յեղել։

Ապա գեղջկուհիները։ Ի՞նչպես էին ապրում նրանք այդ ծանր տարիներում։

Ամուսիններն ու յեղբայրները անխնա քշված էին դեպի պատերազմ, մասամբ հաշմված, մասամբ սպանված։ Ձմրանը ցուրտ խրճիթում մանր յերեխաները գլխին թափված, ամառն իր ամբողջ յեռանդը ծանր, ուժերից վեր աշխատանքին տալով՝ իր վիշտն էր լալիս ընտանիքի գլուխը մնացած գեղջկուհին։ Անխնա շահագործման էր յենթարկվում բատրակուհին և գյուղատնտեսական բանվորուհին։ Գեղջկուհին ոգնության էր կանչում գոյություն չունեցող աստծուն, խնդրելով նրան շուտ վերջ դնել իր տանջանքներին, վորովհետև նա այլ ևս ույժ չուներ։

Արագությամբ քայքայվում էր գյուղական տնտեսությունը, ավելանում էր ձի չունեցող և հողազուրկ գյուղացիության թիվը։ Միջակները գլորվում էին դեպի չքավորները, իսկ կուլակները, վորոնք ոգտագործում էին չքավորության դառն կարիքը, ավելի շատ էին հարստանում պատերազմից։ Պատերազմը մինչև հաղթական վախճան,—կանչում էին նրանք կապիտալիստների հետ միասին։ Բայց գյուղացիության գլխավոր մասսան, վորն իր ծանր դրության պատճառը պատերազմի մեջ էր գտնում, դեմ էր պատերազմին։

Գյուղացիության հեղափոխական տրամադրությունն աճում էր։ Զորքն աստիճանաբար կազմալուծվում էր, աճում էր դասալիքների թիվը, գյուղն էր հասնում հրամանատարական կազմի կողմից դեպի գյուղացիների զավակ գյուղացիները ցույց տված տմարդի վարմունքի լուրը։

Գեղջկուհիներն ուշադրությամբ ականջ էին դնում բոլշևիկյան ագիտացիային, վոր մղվում էր ընդդեմ պատերազմի, ցարիզմի, կալվածատերերի ու կապիտալիստների, վորոնք և առաջացնում են պատերազմը։

Պատերազմը հայտարարելուց հետո, շուտով Ռուսաստանում կանանց խռովությունների (բունտերի) մի ալիք ծավալվեց․ խռովություն սկսողները զինվորների կանայք եյին․ այսինքն՝ նույն բանվորուհիներն ու գեղջկուհիները։ Հա՛ց, — ահա սա յեր պատերազմից և սովից տանջված կանանց հիմնական լոզունգը։

Լենինգրադում, այն ժամանակվա Պետերբուրգում, դժգոհությունը արտահայտվեց պարենի խանութներ թալանելով։

Անկարգություններ ծագեցին Մոսկվայի շուկայում, վորտեղ քարուքանդ արին մսի վրանները, ջարդեցին հացի և այլ խանութներ, վորոնք առանձնապես բարձրացրել եյին գները։

Անկարգությունների տեղն ե հասնում վոստիկանությունը, բայց քարերի տարափ ե տեղում վոստիկանապետի գլխին։ Նման անկարգություններ են տեղի ունենում 1915 թվի ոգոստոսին Կալպենում, վորտեղ չնայած ամբոխը ցրող վոստիկանության միջամտությանը, կին-բանվորուհիները կրկին հավաքվում են շուկայում և շարունակում խանութների թալանը։ Գիշերը կարգը վերականգնվում ե, բայց մեծ քանակությամբ կանայք են ձերբակալվում։

Կովկասում, Յեկատերինոդարում, Մայկոպում և Յեյսկում նույնպես խանութներ են թալանվում։

Պատերազմի ժամանակ տեղի ունեցող գործադուլներում կանայք մեծ մասնակցություն ունեյին։

1915 թվի գարնանը Լենինգրադում, Մոսկվայի և Նևսկու ուղեկալներում կին-բանվորուհիները ցույց են կազմակերպում պատերազմի և կյանքի թանգության դեմ։ Ցույցին մասնակցող բանվորուհիները ձերբակալվում են և դատապարտվում յերեք ամսվա բանտարկության։

Նույն Պետրոգրադում կանայք թալանում են կենտրոնական շուկան, գոչելով՝ «կորչի պատերազմը»։

1915 թվի ամառը Կոստրոմայում և Իվանովո-Վոզնեսենսկում գործադուլներ են տեղի ունենում, վորոնք փոխվում են ցույցերի։ Վոստիկանությունը կրակում ե։ Սպանվածների և վիրավորվածների մեջ կային բանվորուհիներ։ 1916 թվին ևս Պետրոգրադում բանվորուհիները մասնակցում եյին գործադուլներին և ցույցերին։

Պատերազմի դեմ կռվելու կոչն առաջին անգամ արավ ընկ. Լենինը, վորն այդ ժամանակ ապրում եր Զվիցերիայում։ Ընկ. Լենինը մեծ նշանակություն եր տալիս կանանց մեջ տարվող աշ-

խատանքին և բանվորուհիներին ու գեղջկուհիներին դեպի պատերազմի դեմ մղվող պայքարը քաշելու խնդրին։

Նրա ղեկավարությամբ աշխատում եյին մի խումբ հին բոլշևիկներ — ընկ. ընկ. Կրուպսկայա, Ինեսսա Արմանդը, Լելինան, Ստալը։ Ընկ. Ինեսսան այն ժամանակ գրում եր արտասահմանյան մեծամասնական լրագրում, թե մեծամասնականները պետք ե հատուկ ուշադրություն դարձնեն բանվորուհիների վրա և արթնացնեն նրանց մեջ հեղափոխական պայքարի վոգին ընդդեմ պատերազմի։ Այդ ընկերներն աշխատանք եյին տանում նաև Արևմտյան Յեվրոպայի բանվորուհիների մեջ։ Նրանք դիմեցին ընկ. Կլարա Ցետկինին, վորն այդ ժամանակ, ինչպես և հիմա, ղեկավարում եր կանանց միջազգային բանվորական շարժումը, առաջարկելով կանանց միջազգային կոնֆերենցիա հրավիրել ընդդեմ պատերազմի։ Ընկ. Կլարա Ցետկինան մի կոչով դիմեց բոլոր յերկրների սոցիալիստ կանանց, վորպեսզի նրանք իրենց պատվիրակուհիներին ուղարկեն Շվեյցարիայում կայանալիք կոնֆերենցիան։

1915 թվին, կռվող յերկրների մեծ մասի ինտերնացիոնալիստ-կանայք, պատերազմն սկսվելուց հետո, յերբ դավաճան սոցիալ-դեմոկրատների շնորհիվ բոլոր յերկրների բանվորների կապը խզված եր, առաջին անգամ յեկան Շվեյցարիա, վորպեսզի միասին քննեն պատերազմի հետ կապված խնդիրները։ Ռուսաստանի ներկայացուցիչներն եյին՝ բոլշևիկներ — ընկ. ընկ. Կրուպսկայան և Ինեսսա Արմանդը։ Կլարա Ցետկինայի առաջարկությամբ Գերմանիայի ներկայացուցչուհիների և ռուսական դելեգացիայի կողմից առաջադրվեց մի բանաձև, վորը խիստ կերպով դատապարտում եր պատերազմը և առաջարկում պրոլետարներին իրենց զենքը դարձնել իրենց կառավարությունների դեմ։

Այս բանաձևը չընդունվեց, վորովհետև մեծամասնությունը չհամաձայնվեց դատապարտել բուրժուազիայի հետ համաձայնող սոցիալ-դեմոկրատներին։

Հետաքրքիր ե մատնանշել, վոր ռուս բանվորուհիների ներկայացուցիչներն այն ժամանակ արդեն միանգամայն ճիշտ լենինյան տեսակետն եյին արտահայտում։

2. ԲԱՆՎՈՐՈՒՀԻՆԵՐԸ ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

1917 թվի փետրվարի վերջին «Կորչի պատերազմը», «Կորչի միապետությունը» լոզունգների տակ Լենինգրադի և Մոսկվայի խոշոր գործարաններում մեկը մյուսի յետևից գործադուլներ հայտարարվեցին։ Այս շարժումը ղեկավարում էյին բոլշևիկները։ Բանվորուհիներն ակտիվ մասնակցում էյին։

Բաղցից և պատերազմից տանջված Լենինգրադի բանվորուհիների տարերային յելույթը, բանվորուհիների, վորոնք իրենց Միջազգային որը փողոց դուրս յեկան՝ «խաղաղություն, հաց», «ամուսինների վերադարձ պատերազմի ճակատից» բացականչություններով, պրոլետարիատի և զինվորների ընդհանուր ապստամբության համար վորոշ ազդանշան ծառայեց։ Այդ յելույթը տարերային եր, անկազմակերպ։ Սակայն... «բոլորովին պատահական չեր, —գրում է ընկ. Ինեսսա Արմանդը,—վոր փետրվարյան հեղափոխության առաջին որը մեզանում զուգադիպեց «կանանց որին», և վոր այդ որը բանվորուհիների մասսայական փողոցային ցույցն առաջին խթանը հանդիսացավ դեպի հեղափոխություն։ Այդ բոլորը բղխում եր պատերազմի հետևանքով առեղծված ընդհանուր կացությունից։ «Դեռ մինչև պատերազմը, բանվորուհիներն սկսեցին հասկանալ, վոր իրենք կհասնեն լիակատար ազատության միայն այն ժամանակ, յերբ բոլորովին միանան պրոլետարիատի դասակարգային կռվին. բայց այն ժամանակ նրանց մասնակցությունն այդ պայքարի մեջ մեծ կշիռ չուներ։ Պատերազմի ժամանակից նրանց շարժումն իր զարգացման ավելի բարձր աստիճանին է հասնում։

«Պրավդան» հետևյալ ցայտուն խոսքերով է գրում բանվորուհիների այդ պատմական յելույթի մասին.

«Մի շաբաթ առաջ, փետրվարի 23-ին, Լենինգրադում հին իշխանությունը խանգարեց կանանց՝ բանվորուհիներին տոնել իրենց որը։ Այդ պատճառով Պուտիլովի գործարանում տեղի ունեցավ առաջին ընդհարումը, վորը փոխվեց ցույցի և հեղափոխության։

Հեղափոխության առաջին որը կանանց որն եր, կանանց բանվորական Ինտերնացիոնալի որը։ Փառք կնոջ՝ փառք Ինտերնացիոնալին։ Պետրոգրադում կանայք առաջինը դուրս յեկան փողոց իրենց կանանց որը։ Մոսկվայում շատ դեպքերում կանայք էյին վորոշում զորքի բաղդը. նրանք մտնում էյին զինվորների կազարմաները, նրանք համոզում էյին զինվորներին հեղափոխության կողմն անցնել։ Փառք կնոջ։

Կանանց միջազգային որը տարավ մինչև հեղափոխություն, և հեղափոխությունը հավատարիմ կմնա այդ որին։

Հեղափոխությունը կազատե կին-բանվորուհուն պատերազմի դաժանությունից և սարսափից։ Հեղափոխությունը կվերածնե չը տեսնված ուժով բոլոր յերկրների բանվորների յեղբայրությունը, կստեղծե Ինտերնացիոնալ։ Փետրվարի 23-ը—կանանց որը, ռուսական հեղափոխության որն է, Յերրորդ Ինտերնացիոնալի առաջին որը։ Մեծ որ ամբողջ աշխարհի բանվորների համար»։

Ահա ինչ է գրում Ռ. Բաբելյովան «Պրավդայի» № 5-ում բանվորուհիների նույն ցույցի մասին. «Ընկեր բանվորուհիներ, մեզ վրա յել ծագեց այս գարնան կարմիր արևը, մեզ համար էլ շողաց ազատության արշալույսը։ Յեվ նա ծագեց հենց մեր կանանց որվանից, փետրվարի 23-ից։ Մենք առաջինը գնացինք հանելու ընկեր բանվորներին աշխատանքից, մենք առաջինը հեղեղեցինք, անցանք դեպի փողոցները, դեպի քաղաքային դուման, սկսեցինք կանգնեցնել տրամվայները և բոլոր անցորդներին առաջարկել միանալու մեզ հետ։ Մեր տոնն ընդհանուր գործադուլի առաջին որը հանդիսացավ. գործադուլ, վորը կանգ չառավ մինչև հին կառավարության վերջնական անկումը։ Մենք բախտավոր ենք յեղել, ընկերներ։ Մեր ձեռքը—ինչպես ասում են,—թեթև եր, վորից և սկսվեց ամեն ինչ»։

Փետրվարյան հեղափոխության առաջին որերից, բանվորուհիներն անմասն չեն մնում այն բոլորում, ինչ վոր կատարվում է։ Ամբողջ բանվորական մասսայի հետ նրանք գնում են դեպի բանդ՝ ազատելու բանդարկյալ ընկերներին։ Ավելի գիտակիցներն ագիտացիա յեն անում զորքերի մեջ, աշխատում են բանվորական պատգամավորական խորհուրդներում, արհմիություններում։ Ահա ինչ է գրում Մոսկվայի Ռոգոժսկո-Սիմոնովսկայա շրջանի «Կարմիր աստղ» գործարանի բանվորուհի ընկ. Լագուտինան.

«Փետրվարյան հեղափոխությանը յես այսպես մասնակցեցի. ընկա Դոլգորուկովսկի փողոցի մի տուն, վորտեղ զինվորներ

էին ապրում (կարծեմ, կրեստովիկների դրուժինան էր—լավ չեմ հիշում)։ Նրանք յերկար ժամանակ անձնատուր չէյին լինում, բայց ահա յեղբայրս դարձավ բազմությանը. «Գնանք նրանց մոտ—շենքը, և առաջինը ինքը գնաց, յես էլ նրանց հետևեցի՝ տղամարդկանց գոչելով. «ընկերնե՛ր, վախկոտությունն ամոթ է։ Յես—կինս՝ կգնամ առաջից, իսկ դուք հետևեցեք ինձ։» Յեվ ահա, յերբ մենք զորանոց մտանք, զինվորները խիստ հուզված էին։ Նրանց մեջ դեռ կանգնած էր սպան, վորը համոզում էր անձնատուր չլինել։ Յես մահճակալի վրա յելա և սկսեցի զինվորներին համոզել՝ միանալու հեղափոխությանը, իսկ սպան զայրույթից գոռաց. «Ի սվին դրանց»։ Բայց վոչ մի զինվոր ձեռք չմեկնեց հրացանին։ Նրանցից մեկը խփեց սպային, վորը գլորվեց, և համարյա բոլորն «ուռա» կանչելով ու հեղափոխական յերգեր յերգելով, մեզ հետ յեկան դեպի «Կարմիր հրապարակը»։

Ահա Կինեշեմյան բանվորուհի ընկ. Պավլովսկու կյանքից մի կտոր։

«Փետրվարյան հեղափոխության առաջին օրերից յես արդեն տեղական տեքստիլ կոլլեկտիվի անդամ էյի և ագիտացիա էյի անում կանանց շարքերում, վոր արհմիության մեջ մտնեն։ Գործարանային կոմիտեյի նախագահության անդամ եմ ընտրվել և աշխատանքից հանվել։ Կին-բանվորուհիների կողմից ընտրված, տղամարդկանց հետ գնացել եմ Մոսկվա՝ բանակցելու գործատերերի հետ բանվորների կենցաղը բարելավելու համար։ Ընտրվել եմ բանվորական, զինվորական և գյուղացիական խորհրդի անդամ Կինեշմա քաղաքում։ Մասնակցել եմ Իվանովո-Վոզնեսենսկ քաղաքում Իվանովո-Կինեշեմսկ շրջանի հյուսակայինների (Текстилей) միության կազմակերպման պատգամավորական ժողովներին։ 1917 թ. մտել եմ կուսակցության մեջ կոմմունիստական առաջին բջիջի կազմակերպվելուն պես։ Հոկտեմբերյան հեղափոխությունից առաջ ծառայության եմ անցել մանողների արհմիության վարչության Կինեշմայի յենթաբաժինը, իսկ հետո ժողդատարան...»։

Բանվորուհի ընկ. Ալեքսանդրա Յակովլևան հաղորդում է. «1917 թվին, լսելով Նիկոլայի տապալումը, մենք հանդիսավոր յերթով գնացինք Ռևել քաղաքը։ Յերբ մենք յեկանք հրապարակը, վորոշեցինք առաջին հերթին բանտից ազատել մեր ընկերներին. դրա համար անցանք դեպի նավերը՝ նավատորմին՝ միանալու։ Յես գնացի «Բայան» նավը ընկերների մոտ, կոչ անելով նրանց կազմակերպվել և սերտորեն միանալ ազատագրողների շարքերին։ Սեղմ շարքերով՝ մենք դիմեցինք դեպի բանտ։ Յերբ մոտեցանք բանտին, յերկաթացանց պատուհաններից դեպի մեզ տոմսակներ թռան, ու կարմիր թաշկինակներ ծածանվեցին։ Բանտապետը բաց արավ բոլոր խցերը և բաց թողեց բանտարկյալներին։ Վոմանք 1905 թվից էին և նստած էին շղթայակապ։ Այստեղ յես հանդիպեցի յերեք բանտարկյալների, վորոնք դատվել էին ինձ հետ։

Ազատելով բանտարկյալներին, մենք խմբակների բաժանվեցինք ու անցանք՝ վոստիկաններից և ժանդարմներից զենքերը վերցնելու։ Յես իմ խմբի հետ գնացի վոստիկանապետի մոտ։ Դուռը բաղխելուն պատասխանեց մի կին, իսկ վորովհետև գիշերն էր այդ, նա ասաց, թե տանը վոչ վոք չկա։ Յես իմ հերթին ասացի նրան, վոր այստեղ կին կա, և նա վախենալու առիթ չունի։ Նա մեզ ներս թողեց։ Մենք պահանջեցինք հանձնել զենքերը, և ստացանք մի հրացան, մի ատրճանակ, 60 հատ փամփուշտ։ Յերբ չորրորդ օրը յես վերադարձա տուն, մայրս ինձ առողջ տեսնելով, ուրախությունից լացով ու աղոթքով ընդունեց։ Նա կարծում էր, թե ինձ արդեն սպանել են։ Դեռ լավ չէյի հանգստացել, յերբ ինձ մոտ յեկան մեր ընկերները, և մենք գնացինք զինվորականներին զինաթափելու։ Շատ սառը զենքեր ու ատրճանակ-հրացաններ հավաքեցինք, և վորովհետև իմ բնակարանն ամենից հարմար ու անվտանգ տեղը համարեցին, ուստի և զենքերն ինձ մոտ դրին. իսկ հետո, յերբ կազմակերպվեց միլիցիան, յես բոլորը նրան հանձնեցի...»։

Փետրվարյան հեղափոխությունից հետո միտինգներ, ժողովներ հաճախած, նոր միայն հասարակական կյանքի մեջ մտած բանվորուհիների համար սկզբում դժվար էր պարզ հասկանալ, թե ինչ է կատարվում իրենց շուրջը. ով է բարեկամը, ով թշնամին։

Կային զանազան կուսակցություններ. մեծամասնականներ, փոքրամասնականներ, սոցիալիստ հեղափոխականներ։ Բոլորն իրենց թերթերն էին հրատարակում, դուրս էին գալիս միտինգներում, կոչեր էին տպում և փակցնում փողոցներում։

Ահա ինչպես է նկարագրվում այդ ժամանակը Կիևի բանվորուհի Նադյա Լավինսկու կենսագրության մեջ. «Փետրվարյան հեղափոխության... Վաղ առավոտյան Նադյան—պրոֆմիության անդամ մի ընկեր-աղջկա հետ Կիևի բանվորական թաղերն է անցնում եւ ու թռուցիկներ ցրում։ Այս գործի ժամանակ նրան հեղափոխու-

թյան լուրն է հասնում։ Նադյան վազում է դեպի միության շենքը։ Այնտեղ արդեն, իրենց մեքենաները, կայանները թողած հազարավոր մարդիկ եյին համախմբվել և լարված ուշադրությամբ հեռավոր Պիտերի դեպքերին վերաբերող յուրաքանչյուր բառն եյին որսում։

Ցուցարարների բազմության մեջ մտած՝ Նադյան դեպի բանտ է սլանում՝ ազատելու քաղաքական բանտարկյալներին։ Հաղթության ուրախությունը հուզում է նրանց, արբեցնում։

Դրանից հետո ամեն յերեկո տեղի եյին ունենում միտինգներ և ժողովներ, վորտեղ ներկա եյին լինում հազարավոր բանվորներ։ Հռետորները պաշտպանում եյին զանազան տեսակետներ, և Նադյան ամեն որ հայացքը հառած ամբիոնին, ագահաբար լսում եր հռետորներին, աշխատելով վորոշել—նրանցից վո՞րն է իրավացի։

Հեղափոխության սկզբում տարբեր հոսանքների շատ քաղաքական կուսակցություններ կային։ Այնպես վոր խեղճ Նադյան չեր կարողանում միանգամից ըմբռնել բոլոր տարաձայնությունները և շարունակ տանջալից մտածմունքի մեջ եր, թե վորին հետևի։ Բայց աստիճանաբար, շնորհիվ ընկերների լավ շրջանի, վորոնք կարողացան բացատրել նրան կատարվող դեպքերի միտքը, Նադյան հասկացավ, վոր միակ հեղափոխական կուսակցությունը, վորը պաշտպանում է բանվոր դասակարգի շահերը, կոմմունիստ-բոլշևիկների կուսակցությունն է, վորին և անդամ դարձավ նա 1917 թ. մարտին»։

3. ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄՂՎՈՂ ԿՌՎՈՒՄ

Տասնյոթ թ. փետրվարից մինչև հոկտեմբեր յեղած շրջանը մեր հեղափոխության պատմության մեջ նշված է իբրև Համամիութենական Կոմկուսի ղեկավարությամբ խորհուրդների իշխանության համար տարվող պրոլետարական մասսայի կատաղի կռվի մի շրջան։ Բանվորուհիներն ու գեղջկուհիները ջերմ մասնակցություն են ունեցել այդ կռիվներում։

Իշխանության գլուխն եր կանգնած բուրժուազիան։ Հողը դարձյալ մնում եր կալվածատերերի ձեռքին, բանվորների և բանվորուհիների աշխատանքի պայմանները չեյին լավանում, հափշտակողական պատերազմը շարունակվում եր։

Ճիշտ է, բուրժվական կառավարչական մարմինների կողքին տարերային կերպով բանվորների, գյուղացիների և զինվորների խորհուրդներն եյին ծագում, բայց այն ժամանակ նրանք գտնվում եյին փոքրամասնականների (մենշևիկների) և եսերների ձեռքին, վորոնք իրենց խոսքով և գործով ոգնում եյին բուրժուազիային՝ հիմարացնելու բանվորներին, գյուղացիներին և զինվորներին։ Դեպքեր եյին լինում, վոր առանձին բանվորուհիներ անգամ, վորոնք մասսայորեն գնում եյին բոլշևիկների հետ, բանվոր դասակարգի թշնամիների ագիտացիային եյին յենթարկվում։

Ահա ինչպես է նկարագրում մի քանի նման դեպքեր Իվանովո-Վոզնեսենսկու բանվորուհի ընկեր Կուրկինան.

«Պատահում եյին այսպիսի դեպքեր. իմ քույրը, այն ժամանակ դեռ փոքրիկ աղջիկ, աշխատում եր Մարակուշևի գործարանում և պատահմամբ ընկել եր մի եսերկայի ազդեցության տակ ու մտել եսերների կուսակցության մեջ։ Վոչինչ չեր հասկանում, միայն ասում եր, թե այնտեղ շատ ք ա ղ ա ք ա վ ա ր ի և կ ա ր գ ի ն մարդիկ են, այնտեղ լավ է»։

Մի ժողովում բոլշևիչկա բանվորուհիները, ընկ. Կուրկինայի ասածների համաձայն, այնպես եյին «կակղել», վոր նույնիսկ

Гос. Публ. Библиотека ՀՍՍՀ—ОСРА

իրեն ել են սկսել դեպի եսերները քաշել. «գանք, գրվենք այդ կուսակցության մեջ, աշխատենք, գյուղացիներին ոգնություն հասցնենք»: Ընկ. Կուրկինան ինքնուրույնև ռազմիկ բանվորուհի յե: Ընկ. Կուրկինան չի թողել բանվորուհիներին այդպիսի սխալ քայլ անելու: Եսերների քարոզարը նույնպես չի ցանկացել գրել նրանց կուսակցության մեջ, քանի վոր նրանց հետ յեղել ե եսերների վոխերիմ թշնամին — ընկ. Կուրկինան: Նա համոզված եր, վոր այստեղ գործը մաքուր չե: «Գնացեք,— ասել ե նա բանվորուհիներին,— դուրս գրվեցեք ձեր կոմիտեյից և հետո յեկեք մեզ մոտ»: Բանվորուհիներն ուշքի յեն գալիս, յերբ ընկերները բացատրում են, թե գյուղացիության ինչպիսի պաշտպաններ են եսերները, և վոր կալվածատերերից հողը խլելու համար գեղջկուհիներին ոգնում են միայն բանվորներն իրենց առաջավոր ջոկատ - բոլշևիկների ղեկավարությամբ:

Բոլշևիկներն ամեն ջանք գործ եյին դնում, վորպեսզի լայն մասսայի աչքերը բանան՝ թե իրենք ինչ խաբեբայության են յենթարկվում Կերենսկու և նրա սպասավորների ժամանակավոր կառավարության կողմից: Դա մարտական մի տաք ժամանակ եր:

Ահա այն ժամանակ Իվանովո-Վոզնեսենսկում տեղի ունեցած մի միտինգի գեղեցիկ նկարագրությունը: Այդ միտինգին մասնակցել են բանվորուհիները, վորոնցից մեկը և տալիս ե սույն պատկերը.

«Միտինգ: Գլուխների ծով: Ամբիոնի վրա մի բոլշևիկ, վորը բացատրում ե բուրժուազիայի քաղաքականությունը: Հռետորն ասում ե, թե վոչ Կերենսկին, վոչ Միլյուկովը, վոչ մյուս բուրժուական ղեկավարներն իրավունքներ չեն տալ բանվորներին ու գյուղացիներին: Դա կանեն միայն խորհուրդները: Հետո դուրս են գալիս փոքրամասնականները և սոցիալիստ հեղափոխականները (եսերները), վորոնք ասում են. «Խորհուրդները միանգամից չի կարելի. բանվորները չեն կարող այդ աշխատանքը գլուխ բերել. նրանք դեռ խավար են, անգիտակից»: Բայց, վոչ «ուչրեդիլկան», վոչ Կերենսկին, վոչ կադետ Միլյուկովը չկարողացան գրավել մեր բանվոր հերոսներին: Մի գլուխ գոռում են. «անպայման խորհուրդները, մեզ խորհուրդներ են հարկավոր»: Կողքիս կանգնած մի ծանրաբարո գյուղացի, խուզած մազերով ասում ե. «Իսկ դու ինչ ես գոռում, քեզ ինչ խորհուրդներ: Կնիկ ե, բայց գոռում ե»: Իսկ յես նրան հայտնեցի, վոր յեթե բոլոր կնիկները միասին գոռան, այն ժամանակ էլ կլինեն խորհուրդներ»:

Ճիշտ եր դատում Իվանովո-Վոզնեսենսկու բանվորուհին: Նա իր դասակարգային հոտառությամբ հասկացել եր, վոր պրոլետարական հեղափոխությունը հնարավոր ե միայն բանվորուհիների և գեղջկուհիների լայն մասսաների մասնակցությամբ, և վոր միայն այդ հեղափոխությունն ե, վոր կհասցնե խորհուրդների իշխանությունը:

Զինվորների կանանց - գեղջկուհիների մասին կարելի յե դատել հետևյալ տեղեկությունից, վորը տպվել ե 1917 թ. հուլիսի 3-ին (հունիսի 20-ին) բոլշևիկյական «Սոցիալ - դեմոկրատ» թերթում:

«1917 թվի հունիսի 4-ին կայացավ Բրոննիցկի գավառի Ռամենսկի վոլոստի սալդատկաների (զինվորների կանանց) ժողովը, վորտեղ ընդունվեց հետևյալ վորոշումը. «Մենք, Ռամենսկի վոլոստի քաղաքացուհի - սալդատկաներս մեր գործարանում հաճախ տղամարդկանցից հարձակում գործելու կոչեր ենք լսում, բայց մեր ամուսինները, հայրերը, վորդիները խրամատներից մեզ գրում են, թե իրենք հարձակում չեն գործելու, իսկ ում վոր հարկավոր ե այդ հարձակումը, թող գնան պատերազմի ճակատը և հարձակում գործեն. մենք առանց այդ էլ տանջվել - տառապել ենք յերեք տարվա այս արյունահեղ պատերազմում:

Մենք, սալդատկաներս, խնդրում ենք ժամանակավոր կառավարությունից, վոր նա ավելացնի պատերազմի կանչված զինվորների ընտանիքներին տրվող պետական պարենը մինչև 16 ռուբլի, և միաժամանակ միջոցներ փնտռե շուտով վերջ դնելու այս յեղբայրասպան, արյունահեղ պատերազմին»:

Այս բանաձևն ընդունվել ե միաձայն:

4. ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒՀԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Բոլշևիկները միշտ հասկանում էյին բանվոր և աշխատավոր կանանց բանվոր դասակարգի ընդհանուր կռվին մասնակից դարձնելու վողջ կարևորությունը։ Դեռ ցարիզմի ժամանակները նրանք բանվորուհի կանանց բացատրում էյին, վոր նրանց շահերը բանվոր դասակարգի շահերի հետ ընդհանուր են՝ մեկ են, և վոր նրանք պետք է գնան նրանց հետ միևնույն շարքերում։ Բոլշևիկները բացատրեցին բանվորուհիներին, վոր նրանց ճանապարհը տարբեր է բուրժուական կանանց — ֆեմինիստկաների ճանապարհից, վորոնց առաջին համագումարը տեղի ունեցավ 1908 թ. Պիտերում։

Վորպեսզի բանվորուհիներն ավելի պարզ հասկանան բուրժուա կանանց և իրենց պահանջների տարբերությունը, բոլշևիչկանները վորոշեցին մասնակցել իրավահավասարուհիների համագումարին և կռվի մտնել ֆեմինիստկաների հետ։ Մի շարք զեկուցումներով, վորոնք հետո տպվում էյին համագումարի աշխատություններում, բանվորուհի բոլշևիչկանները տալիս էյին կնոջ աշխատանքի դրության պատկերը ֆաբրիկաներում և արհեստանոցներում։

Համագումարի բոլոր հիմնական հարցերի վերաբերմամբ՝ բոլշևիչկաներն իրենց բանաձևերն առաջարկեցին դասակարգային պահանջներով։ Այդ բանաձևերը մերժվում էյին համագումարի անդամ բուրժուա կանանց կողմից։ Յուրաքանչյուր քիչ թե շատ կարևոր հարցի շուրջը ուժեղ պայքար էր տեղի ունենում։

Յերբ բոլոր զեկուցումները վերջացել էյին, և կանանց կազմակերպություն ստեղծելու, այդ կազմակերպության նպատակների ու խնդիրների հարցն էր դրված, բանվորուհի բոլշևիչկանները, վորոնց թվում էր նաև ընկ. Կլավդիա Նիկոլաևան, հայտնում են, թե նման կազմակերպությունը վնասակար է բանվորուհիների համար, վորովհետև նա նրանց բաժանում է բանվոր

դասակարգից, վորոնց հետ նրանք ունեն մի նպատակ — կռիվ սոցիալիզմի համար։ Այսպիսի հայտարարություն անելով, բոլշևիչկանները հեռանում են համագումարից, իսկ հետո մի շարք ժողովներում բանվորուհիների մասսաներին ծանոթացնում, թե ինչ կար համագումարում։ Բանվորուհիները հասկացան, վոր իրենց և բուրժուա ֆեմինիստկաների ճանապարհները տարբեր են, քանի վոր նրանք ձգտում են իրավահավասարության տղամարդկանց հետ բուրժուական հասարակակարգի շրջանակում, վորովհետև նրանք իրենց բոլոր արմատներով և թելերով կապված են պրոլետարիատին թշնամի այդ հասարակակարգի հետ։

Իրավահավասարուհիների 1917 թվին Մոսկվայում գումարված հաջորդ համագումարին, ի հարկե, բոլշևիչկաներն այլ ևս հրավիրված չէյին, սակայն, նրանք ներկայացան այնտեղ և առանց հրավերի, վորովհետև Մոսկվայի բոլշևիկյան կոմիտեն վորոշել էր. «համագումարում դուրս գալ դեկլարացիայով և հետո հեռանալ»։ Ֆեմինիստկա զեկուցողներն ապացուցում էյին հատուկ կին կազմակերպություններ ստեղծելու անհրաժեշտությունը, վորոնք պետք է միացնեն բոլոր կանանց՝ առանց կուսակցության և համոզմունքների խտրության։ Մոսկվայի կոմիտեյի կողմից ուղարկված ընկերն այդ հայտարարությունից հետո հայտնում է, թե չի ճանաչում նման կին կազմակերպություններ, վորտեղ մտնում են բոլոր կանայք՝ առանց դասակարգային խտրության, և վոր դա պրոլետար կանանց տեղը չէ, քանի վոր նրանց շահերը նույնն են, ինչ վոր բանվորներինը և միանգամայն հակառակ բուրժուական կանանց շահերին։

Դահլիճում անասելի աղմուկ էր բարձրանում, բայց ընկերոջը հաջողվում էր կարդալ Մոսկվայի կոմիտեյի հայտարարությունը, վորով բողոք է հայտնվում համագումարի դեմ։ Այս բանաձևը հայտարարելուց հետո Մոսկվայի կոմիտեյի ներկայացուցչուհին համագումարից հեռանում է։ Նրա հետ հեռանում են և բոլոր բանվորուհիները։

Ֆաբրիկաներում և գործարաններում իբրև պատասխան իրավահավասարուհիների ագիտացիային՝ բանվորուհիներն ընդունում են այսպիսի բանաձևեր.

«Ընդունելով մեզ իբրև իրավահավասար անդամ ընդհանուր բանվորական պրոլետարական ընտանիքի, մենք, Երիկսոն գործարանի բանվորուհիներս, թվով 150 հոգի՝ ապրիլի 20-ի ընդհանուր ժողովում ամենակտրուկ կերպով բողոքում ենք հատուկ կա-

ն ա ց կ ա զ մ ա կ ե ր պ ո ւ թ յ ո ւ ն ն ե ր ստեղծելու դեմ (նույնիսկ դեմոկրատական) և, ընդհակառակը, կոչ ենք անում բոլոր բանվորուհի-ընկերներին ամրապնդել մեր դասակարգային, պրոլետարական ու սոցիալիստական կազմակերպությունները»։

(Միաձայն ընդունվել է Երիկսոն գործարանի բանվորուհիների ընդհանուր ժողովում)։

«Մենք, Սիմենս-Շուկերտ գործարանի բանվորուհիներս, հայտարարում ենք, որ միայն կապիտալի դեմ սոցիալիզմի համար մղվող պայքարում տղամարդ ընկերների հետ ձեռք ձեռքի տված գնալով՝ մենք կհասնենք կնոջ լիակատար ազատագրմանը։ Իսկ դրա համար, մեզ, բանվորուհիներիս, անհրաժեշտ է մտնել պրոֆմիությունները և բանվորական կազմակերպությունները, որով մենք կուժեղացնենք բանվոր դասակարգի՝ սոցիալիզմի համար մղվող կռիվը»։

Այսպես, բոլշևիկյան կուսակցության ղեկավարությամբ, ամբողջ բանվոր դասակարգի հետ միասին, զորանում էր բանվորուհին և մարտիկ դառնում սոցիալիզմի համար։

5. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

Միապետության տապալումից հետո առաջավոր բանվորներն ու բանվորուհիները շատ շուտ սկսեցին հասկանալ, որ բանվոր դասակարգի թշնամիները — բուրժուազիան և նրա սպասավոր փոքրամասնականներն ու սոց.-հեղափոխականները դեռ շարունակում են իշխանության գլուխը մնալ։

Բանվորների և գյուղացիների լայն մասսաների անբավականությունն աճում էր, որովհետև բանվորների դրությունը չէր լավացել, իսկ գյուղացիությունը հող չէր ստանում։ Առաջավոր բանվորներն ավելի ու ավելի լավ էին հասկանում, որ հարկավոր են հեղափոխական միջոցներ, որ միայն իշխանության ղեկը իրենց՝ բանվորների և չքավոր գյուղացիների ձեռքն առնելով կարելի կլինի լայն մասսաներին այդ ծանր դրությունից հանել

Փետրվարյան հեղափոխությունից հետո մյուս բոլշևիկ ընկերների հետ միասին տարագրությունից և աքսորից Ռուսաստան վերադարձան նաև «Բանվորուհի» ամսագրի նախկին խմբագրության անդամ ընկերները։

Այդ ամսագիրը դեռ 1914 թվին էր լույս տեսել, ընկ. Լենինի թելադրանքով։ «Բանվորուհու» մեր կուսակցության Կենտրոնական կոմիտեյի կողմից հաստատված խմբագրության մեջ մտնում էին էմիգրացիայում գտնվող ընկեր Կրուպսկայան, Ինեսսա Արմանդը, Զ. Լիլինան, Ստալը, իսկ Ռուսաստանում աշխատողներից ընկ.՝ Ցելիազարովան, Կ. Սամոյլովան, Կուդելլին, Ռոզմիրովիչը, Մենժինսկայան և մի քանի բանվորուհիներ — կայանքից։

1917 թվի մայիսից կրկին սկսում է լույս տեսնել մեր հին, ազնիվ «Բանվորուհի»-ն, որն աշխատավոր կանանց բարձրաձայն կոչ է անում կանգնել բանվորական գործի մարտիկների առաջավոր շարքերում, և ամբողջ աշխարհի բանվորների ու բանվորուհիների հետ միասին կռվել պատերազմին վերջ տալու համար, կռվել սոցիալիզմի համար։

Կուսակցության ղեկավարությամբ բանվորուհիներն աշխատանք տարան շրջաններում. միտինգներ եյին գումարվում բուրժուական կառավարության և նրա կարգերի դեմ ու Խորհրդային իշխանության օգտին բանաձևեր եյին ընդունվում։

1917 թվի հուլիսի 16—18-ը (3—5) Լենինգրադի և Մոսկվայի բանվորությունը կուսակցության ղեկավարությամբ փողոց դուրս յեկավ։ Նա մարտական կոչ արավ—«Իշխանությունը Խորհուրդներին»։ Բայց մասսան դեռ պատրաստ չեր, վոր կարողանար պաշտպանել բանվոր դասակարգի առաջավոր գնդին։ Այդ ժամանակ չհաջողվեց իշխանությունը խլել ժամանակավոր կառավարությունից։

Ժամանակավոր կառավարությունը ջարդարար ագիտացիա տարավ, կեղտ ու մուր թափելով բանվոր դասակարգի առաջավոր գնդի—բոլշևիկների գլխին։ Բոլշևիկների ձերբակալությունները կատարվեցին։ Իլիչն ստիպված եր թաքնվել Կերենսկու ժանդարմներից, վորով և չձերբակալվեց։ «Պրավդա»-ի տպարանը ջարդի ու թալանի յենթարկվեց։

Այն ժամանակ միայն «Բանվորուհի» թերթն եր, վոր մեր լավագույն ընկերների—Ա. Ի. Ցելիագարովայի, Նիկոլաևայի, Կուդելլինի և Կ. Ն. Սամոյլովայի ղեկավարությամբ՝ միակ օրգանը մնաց բոլշևիկների ձեռքին։ Յեվ ահա, հուլիսյան համարում դետեղված են մեր կուսակցության Կենտր. Կոմիտեյի անդամների հոդվածները, վորոնք բացատրում եյին բանվորական լայն մասսաներին հուլիսյան դեպքերը և ցուցմունքներ տալիս, թե ինչ պետք է անել հետո։ Յերբ ժուռնալի լույս տեսնելու հետևյալ առավոտը Կերենսկու պոլիցիան յեկավ խմբագրատուն, այնտեղ արդեն վոչ վոքի և վոչինչ չգտավ։ Բանվորուհիները թերթի թարմ համարը դեռ գիշերը տարել եյին գործարանները և ֆաբրիկաները՝ տարածելու։

Բանվոր դասակարգը և նրա ղեկավար կուսակցությունը հուլիսից մինչև հոկտեմբեր յեռանդագին նախապատրաստություն տեսան ապստամբության համար։

«Բանվորուհու» խմբագրությունը, վորը գործարաններում և ֆաբրիկաներում մեծ կապեր ուներ բանվորական մասսաների հետ, բանվորուհիների շարքերում մեծ աշխատանք տարավ։ Հազարավոր բանվորների մասնակցությամբ միտինգներ եյին կազմակերպվում, վորտեղ զայրալից բանաձևեր եյին հանվում բանվոր դասակարգի, նրա մամուլի դեմ հարուցած հալածանքի վերա-

բերմամբ, առաջարկելով իշխանությունը հանձնել խորհուրդներին և պրոլետարիատի դիկտատուրա ստեղծել։

Աշխատավարձի քչությունը, վարչության կոպտությունը, տուգանքները և շարունակվող համաշխարհային պատերազմը բանվորուհիների մեջ վրդովմունք եր առաջացնում դեպի ժամանակավոր կառավարությունը։

Յերբ միտինգներում ճառախոսները հանդես եյին գալիս պաշտպանելու ժամանակավոր կառավարությանն ու պատերազմը, «կորչի» աղաղակներով նրանց ցած եյին քաշում ամբիոնից։

Ահա ինչպես է նկարագրում Մոսկվայի բանվորուհի ընկ. Պողչուֆարովան 1917 թվի ամառվա ընդհանուր տրամադրությունը և իր տարած աշխատանքը.

«Յես լավ եմ հիշում, թե ինչպես եր ծագում անբավականությունը ժամանակավոր կառավարության դեմ։ Հիմնադիր ժողովի ընտրությունների ժամանակ մեր ֆաբրիկայում բանվորների կեսից ավելին ձայն տվեց № 5-ին, վորով քվեարկվում եյին բոլշևիկները։ Նրանք չենթարկվեցին բուրժուական տիկին Գուբեյի խաբեբայություններին, վորն աշխատում եր կաշառել բանվորներին զանազան խոստումներով, ստիպելով նրանց հեռանալ բոլշևիկներից. Նա հաճախ գալիս եր ինձ մոտ, զարմանում մեր չքավորության վրա և խոստանում օգնություն ցույց տալ ամեն կերպ, յեթե յես ագիտացիա անեմ հոգուտ կադետների։ Ի միջի այլոց ասեմ, վոր նա իր առաջարկներն անում եր միշտ ամուսնու միջոցով, վորովհետև յես յերբեք տանը չեյի լինում. և այն օրվանից, յերբ մի անգամ մենք հանդիպեցինք փողոցում, և յես նրան կտրուկ կերպով հայտնեցի, վոր համակրում եմ բոլշևիկներին, նա դադարեց ինձ մոտ հաճախելուց, և մեր բնակարանի աղքատությունը դադարեց նրան անհանգստացնել։

Այն ժամանակ յես շրջանային դումայի անդամ եյի, իսկ Կոչետուրովը՝ նախագահ։ Այն ժամանակա մսի սակավության պատճառով մեծ յերթեր կային. չնայած դրան, նախագահ Կոչետուրովի համար յետևի դռնից քսան գրվանքա միս բերին։ Այդ ժամանակ քիչ մնաց, վոր բանվորուհիները թալանեն մսի խանութը և Կոչետուրովի բնակարանը։ Իսկ յես իբրև կարգը խանգարելու գլխավոր դրդիչ, ձերբակալվեցի. բայց իբրև շրջանային դումայի անդամ ազատվեցի։ Խորհրդի նիստի ժամանակ յես հայտարարեցի, թե նախագահը կաշառքներ է վերցնում և բանվորներին վիրավորում։ Համարյա բոլոր ներկա գտնվող-

ների կողմից, որտեղ բանվորներ քիչ կային, մեծ զայրույթով ընդունվեց իմ խոսքը։

Հիշում եմ, թե ինչպես մենք՝ բոլշևիկներս օգտագործում էինք մեր ագիտացիայի համար հերթերը, որտեղ հաճախ ձերբակալում էին ինձ և կրկին ազատ թողնում, որովհետև շրջանային դումայի անդամ էի։

Ֆաբրիկայում ես միաձայն ընդունվեցի գործարանային կոմիտեյի անդամ։ Հոկտեմբերին ինձ հաջողվեց բանվորների կեսին դուրս քաշել գործարանից՝ բարրիկադներում կռվողներին օգնելու։

Զոհված ընկերների թաղման ժամանակ մեր գործարանի բանվորները գնում էին կազմակերպված։

---

6. ԲԱՆՎՈՐՈՒՀԻՆ ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ

1917 թվին, մինև հոկտեմբերը, բոլշևիկները մեծ աշխատանք էին տարել Լենինգրադի բանվորուհիների մեջ։ Լենինգրադում վորոշված եր հրավիրել շրջանային կոնֆերենցիա։ Տասնյակ հազարավոր թռուցիկներ էին տարածվում ֆաբրիկաներում և գործարաններում։ Հարյուրի չափ միտինգներ էին կայացել։ Լենինգրադի բանվորուհիները յեռանդով պատրաստվում էին իրենց խորհրդակցության համար։

Հոկտեմբերյան կռիվները վրա հասան բանվորուհիների այս աշխատանքի միջոցին։ Խորհրդակցության համար ընտրված պատգամավոր-բանվորուհիները Լենինգրադի ամբողջ բանվորական մասսաների հետ, մեծ հոկտեմբերի օրերին, մարտնչում էին Լենինգրադի փողոցներում բուրժուական կառավարության դեմ, պրոլետարիատի դիկտատուրայի համար։

Խորհրդակցությունը գումարվեց այն ժամանակ, յերբ լռեցին թնդանոթների վերջին տրաքոցները, և իշխանությունն անցավ խորհուրդներին։ Դա հեղափոխության լուրջ մոմենտներից մեկն եր։ Ամբողջ հակահեղափոխությունը, բանվորների և գյուղացիների բոլոր թշնամիները միացել էին, վորպեսզի միասնական ճակատով հարվածեն հեղափոխության կրակից նոր ծնված, աշխարհում դեռ չտեսնված խորհրդային իշխանությանը։ Ամեն ինչ կախված եր բանվոր դասակարգի առաջավոր գնդի միաձույլ լինելուց։

Կենտր. Կոմիտեյի մեծամասնության մեջ վոչ մի կասկած, վոչ մի տատանում չկար. վոչ մի զիջում մենշևիկներին և եսերներին. անողոք կռիվ եր հայտարարված հակահեղափոխության դեմ։

Կենտր. Կոմիտեյի մեծամասնության դեմ դուրս յեկան միայն յերկուսը—ընկ. ընկ. Կամենևը և Զինովևը։ Նրանք չէին հավատում, թե պրոլետարիատը կկարողանա իշխանությունն իր ձեռքում պահել, առանց մյուս դասակարգերի ներկայացուցիչների։

Նրանք կողմնակից եյին գիջումներ անելու մենշևիկներին և եսեռներին։ Նրանք իրենց կողմից մի կոչով դիմեցին Լենինգրադի բանվորությանը։ Նրանք հեռացան կուսակցության կենտկոմից։

Յեվ հեղափոխության այդ ամենավտանգավոր մոմենտին գումարվում ե Լենինգրադի բանվորուհիների առաջին խորհրդակցությունը, վորին մասնակցում եյին հինգ հարյուրից ավելի պատգամավորուհիներ՝ Լենինգրադի և նրա մոտակա քաղաքների 80,000 բանվորուհիների կողմից ընտրված։ Նրանք ընդունեցին մի բանաձև, վորով կարգի եյին հրավիրում սխալվող ընկերներին։ Բանաձևի մեջ ասված ե.

«Բանվորուհիների խորհրդակցությունը պահանջում ե յենթարկվել կուսակցական դիսցիպլինային և աշխատել մի յելք գտնել դուրս գալու ստեղծված դրությունից հանուն միասնականության և ամբողջականության կուսակցության, վորը ներկայումս միջազգային պրոլետարիատի համաշխարհային հեղափոխության ավանգարդն ե հանդիսանում։ Միմիայն դասակարգային հեղափոխական քաղաքական գիծ վարելով՝ Ռուսաստանի պրոլետարիատը կկարողանա պաշտպանել միջազգային պրոլետարիատի կողմից սոցիալիզմի համար տարվող հեղափոխական շարժումը»։

Ընտրվեց մի պատվիրակություն, վորն ուղարկվեց հեղափոխական կռվի Լենինգրադի շտաբը՝ Սմոլնի, վորպեսզի տատանվողներին ծանոթացնեն նրանց վարմունքը դատապարտող բանվորուհիների ռազմական տրամադրության հետ։

Վորոշումն ընդունվեց ուշ գիշերը։ Դանդաղել չեր կարելի։ Պատվիրակությունը գիշերն ուղևորվեց դեպի Սմոլնի։ Այդ մասին հիշատակում ե դելեգացիայի անդամներից մեկը—բանվորուհի Վասիլևան. «Բանվորուհիները թողին խորհրդակցությունը՝ խորապես համոզված, վոր իբրև բանվորուհիների լիազորներ՝ իրենք կկարողանան իրենց խոսքն ասել և ազդել կուսակցական դիսցիպլինայից շեղված ընկերների վրա։ Բանվորուհիները զայրանում եյին այն առթիվ, վոր մի այդպիսի պատասխանատու մոմենտում, յերբ ամբողջ աշխարհի բանվորությունն իր հայացքն եր հառել Ռուսաստանին, նրանք կուսակցության շարքերում պառակտում են մտցնում, և մեր թշնամիները կհրճվեն, այս սպառնալից փաստը տեսնելով»։

Սմոլնում նրանք նախ գնացին Իլյիչի մոտ, վորը հանգստացրեց նրանց, ասելով, թե այն ընկերները, վորոնք դեռ ևս համա-

տում են այսպես կոչված դեմոկրատական կազմակերպությունների հետ համաձայնության գալու հնարավորությանը, շուտով կհասկանան իրենց սխալը։

«Վերցրեք իշխանությունը, ընկ. Լենին, դա բոլոր բանվորուհիների ցանկությունն ե»,—ասացին պատվիրակուհիները։

«Յես չե, այլ դուք պետք ե վերցնեք իշխանությունը։ Գնացեք ձեր գործարանները և հայտարարեցեք այդ մասին բոլոր բանվորուհիներին»։

Հետո պատվիրակությունը յերկար ժամանակ խոսում եր ընկեր Կամենևի և Զինովևի հետ, հայտնելով նրանց կոնֆերենցիայում բանվորուհիների ընդունած բանաձևը։

Ընկեր Լենինն իրավացի յեր, հետևյալ որը յերեկոյան միջադեպը հարթված եր. ընկերները հասկացան, վոր մեր ուղին տարբեր ե կեղծ դեմոկրատներից։

Իհարկե Լենինգրադի պրոլետարիատի հաստատուն տրամադրությունը, պրոլետարիատի, վորն ինչպես մի մարդ գնում եր ընկ. Լենինի և մեծամասնական Կենտկոմի հետ, այդ մոմենտին վճռական նշանակություն ունեցավ. բանվորները պատշաճ բարձրության վրա գտնվեցան։ Շնորհիվ Կոմ. կուսակցության կատարած աշխատանքի, ճիշտ քաղաքական ղեկավարության և դասակարգային հոտառության, նրանք արդեն Լենինգրադի հեղափոխական պրոլետարիատի հետ միևնույն շարքերումն եյին, վորոնք այն ժամանակ իրենց ձեռքում եյին պահում Հոկտեմբերյան հեղափոխության բախտը։ Մոսկվայում, Կիևում, Խարկովում և այլ մի շարք քաղաքներում բանվորուհիները բանվորների հետ միևնույն շարքերումն եյին առաջանում և մասնակցում կռիվներին, վիրավորների վերքերը կապում և աշխատում սննդակայաններում։

---

7. ԲԱՆՎՈՐՈՒՀԻՆԵՐՆ ՈՒ ԳԵՂՋԿՈՒՀԻՆԵՐԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՌՎԻ ՃԱԿԱՏՈՒՄ

Հոկտեմբերյան կռվի մեջ բանվորուհիները մասնակցում եյին ինչպես կարմիր գվարդիայի ոժանդակիչ գնդեր, կատարելով նաև հիվանդապահի պարտականություններ: Այդ ոգնությունը խոշոր դեր կատարեց հոկտեմբերյան կռիվների ժամանակ: Բանվորուհիներն ոգնություն եյին ցույց տալիս վիրավոր կարմիր գվարդիականներին, աշխատում եյին սննդակայաններում:

Կային բանվորուհիներ, վորոնք հրացանը ձեռքին կռվում եյին բարրիկադների վրա. բայց դրանք անհատներ եյին:

Հիշենք Լազուտինային—փետրվարյան հեղափոխության ակտիվ մասնակցին, վորը կազարմաներից դուրս բերեց զինվորներին և տարավ Կարմիր հրապարակը: Հոկտեմբերյան որերին նա իբրև գթության քույր՝ ոգնում է կարմիր գվարդիային Կրասնոխոլմսկի կամուրջի մոտ, յերբ ռմբակոծում եյին ինտենդանտական պահեստը:

1917 թվին Խարկով քաղաքում գերմանացիների դեմ կռվելու համար կազմակերպված կոմմունիստական ջոկատներից մեկի հրամանատարը գրում է ուկրայինյան «Հոկտեմբերի դըստերք» ժողովածուի մեջ.

«Իմ հիշողության մեջ դեռ մնացել են այն մոմենտները, յերբ շնորհիվ կին կարմիր գվարդիականների տոկունության, բանվորուհու ղեկավարությամբ գունդը նահանջից հարձակման եր անցնում և հասնում խոշոր հաղթությունների»:

Կարմիր բանակում կային կանայք — շարքային կռվողներ, և նրանք քիչ չեյին: Նրանք կռվում եյին հասարակ կարմիր բանակայինի հագուստ հագած, և համարյա չեր կարելի տարբերել շարքային կարմիր բանակայինից:

Ընկ. Կիրսանովան պատմում է գնդացիր բանեցնող մի գեղջկուհու մասին, վորի հետ ինքը կռվի ժամանակ մի վաշտում է յեղել. Նա վոչնչով չեր տարբերվում շարքային կարմիր բանա-

կայինից: Աստրախանից, վորտեղ նույնպես գնդացիր եր բանեցրել, իր ջոկատով Ուրալյան ճակատը յեկավ: Նա աչքի յեր ընկնում իր համարձակությամբ և փորձառությամբ: Նրա հետագա վիճակի մասին վոչինչ հայտնի չե: Քաղաքացիական կռիվների բեմից նա այնպես անլուր հեռացավ, վորպես յեկել եր անաղմուկ, առանց ֆրազների: Ո՞վ գիտե նրա անունը: Ո՞վ է հիշատակելու նրան պատմության մեջ:

Յեվ վորքա՜ն այդպիսի անանուն հերոսներ ունի հեղափոխությունը: Հարյուրներ, թերևս հազարներ:

Բայց բանվորուհիները և գեղջկուհիները քաղաքացիական կռիվների ճակատում ամենից առաջ, իբրև կանոն, ոգնում եյին Կարմիր բանակին առաջին հերթին իբրև կարմիր քույրեր և սանիտարներ:

1918 թվի նոյեմբերին բանվորուհիների առաջին համագումարը բանաձև ընդունեց ճակատին ոգնություն ցույց տալու, կարմիր քույրերի և սանիտարների խմբեր կազմելու մասին: Սակայն կռվի ճակատում նրանք սկսում են գործել միայն 1919 թվի նոյեմբերից, իբրև նախապատրաստական դասընթացներ անցած կարմիր քույրերի գնդեր՝ բաղկացած բանվորուհիներից և գեղջկուհիներից:

Բանվորուհիների տրամադրությունն այնպես եր, վոր Առժողկոմի կազմակերպած կարմիր քույրերի դասընթացները լցված եյին: Շատ ցանկացողների ստիպված եյին մերժել: Պետք է նկատի ունենալ, վոր կիսագրագիտության պատճառով բանվորուհիներ հանդիպում եյին շատ դժվարությունների:

Բանվորուհի, դեպի ճակատ,— այս եր այն ժամանակ կուսակցության մարտական կոչը, վորը ջերմ արձագանք գտավ միլիոնավոր բանվորուհիների սրտերում:

Ահա ինչ է գրում կարմիր քույրերի մասին, Սազոնովան, վորին Առժողկոմի կողմից հանձնարարված եր դասընթացների կազմակերպման գործը. «Կռվի ճակատը և թիկունքն անմիջապես զգացին կարմիր քույրերի աշխատանքը: Աշխատում եյին ամենատոկալի պայմաններում, առանց ժամանակի սահմանափակման, կրակի անմիջական սահմաններում, հավաքելով յերկաթուղու կայարաններում հիվանդներին և վիրավորներին, վորոնք յերբեմն թողնված եյին լինում շտապ նահանջի ժամանակ, կամ վորոնք կռվի դաշտից մի կերպ գալիս եյին սայլակներով:

1919 թվին խորհրդային միությունում բաց է թողնված յեղել

1105 սանիտարուհի. նրանցից 440 միայն Մոսկվայում։ Նույն թվին դասընթացները տվել են 1264 կարմիր քույրեր, որոնցից 280 սովորել են Մոսկվայում։ 1920 թվին չեղել է 1193 սանիտարուհի և 2442 կարմիր քույր։

Թե կարմիր բանակի հաշվետվության մեջ և թե բժշկական կազմերի տված գնահատականում կարմիր քույրերի և սանիտարուհիների աշխատանքը ճանաչվում է որպես լուրջ և կարևոր աշխատանք։

Նրանք կարողացան փոխորություն մտցնել կռվողների շարքերում, դեպի վիրավորներն ունեցած իրենց վերաբերմունքով նրանք կարողացան օգնել բանակին դժվար րոպեներում։

«Լրագրները լիքն են հիվանդների ու վիրավորների կողմից խնամողներին հայտնած իրենց անկեղծ շնորհակալության արտահայտություններով»,—գրում է Սոժոլկոմ Սեմաշկոն «Կարմիր բանակը և կարմիր բժշկական կազմերը» վերնագիրն ունեցող հոդվածում։

Ճակատներից մեկից հաղորդեցին, թե կարմիր քույրերն առաջավոր դիրքերում այնպես էին փոխորվել վիրավորներ հավաքելու իրենց աշխատանքով, որ կարմիր բանակայիններն ստիպված էին կանչել.—հետ քաշվեցեք, մեզ խանգարում եք կրակելու»։

Դենիկինի հարձակման միջոցին Որյոլ քաղաքի մոտ սպիտակները շրջապատել էին հիվանդներով և վիրավորներով լի սանիտարական գնացքը։ Վողջ կազմը գնդացիրային կրակից վախեցած՝ փախչում է։ Փախչում են և գնացքի ծառայողները. կարմիր սանիտարուհիներն իրենց չեն կորցնում. նրանք գտնում են մեքենավարին, ստիպում են քշել գնացքը և գնդակների տարափի տակ՝ դուրս տանում, ազատում—վիրավորներին և հիվանդներին։

Ցեվ նման դեպքեր շատ կան։

Կարմիր քույրերը հին ժամանակի գթության քույրերը չեն, որոնց հավաքում էին զանազան տիկիններից և պահում կարմիր խաչի պաշտպանության տակ, նույնիսկ թշնամու մոտ գերի ընկնելիս՝ զինվորական օրենքներով խնայվում որպես ռազմական գործողությունների հետ անմիջական կապ չունեցող անձինք։ Ոչ։ Մեր կարմիր քույրերը միաժամանակ և ընկերներ էին, համարյա միշտ զինված և միանգամայն՝ պատրաստ հարկավոր ժամանակ զենքը ձեռքին հրապարակ գալու կողք-կողքի, ընկ. կարմիր բանակայինների հետ։

Երբ նրանք գերի էին ընկնում, նրանց ծաղրանքի էին ենթարկում, ծեծում գազանաբար և մահապատժի ենթարկվում։ Նրանց միևնույն դասակարգային թշամիներն էին ընդունում։ Նրանք չէին գնում ճակատ բարեգործություն անելու. նրանք գնում էին կատարելու իրենց պարտքը պրոլետարական հեղափոխության առաջ՝ իբրև բուրժուազիայի անհաշտ թշնամիներ. նրանք մեծ հոկտեմբերի նույն կարմիր մարտիկներն էին։

Ահա Կազանի վառոդի գործարանի բանվորուհի ընկ. Լեոնտևայի կենսագրությունից մի կտոր.

«Չեխերի՝ քաղաքի վրա հարձակում գործելու ժամանակ ես գնացի Կազան և կամովին մտա Կարմիր Բանակը Ջերոկսար գյուղում՝ իբրև սանիտարուհի։

Կազանը վերցնելիս՝ ես Կինդերի գյուղի դիրքերի առաջին գծի վրա էի։ Երբ Կազանը վերցրինք և այնտեղ կազմվեց 11 բանակը, ես կրկին կամովին նրա շարքերը մտա։ Կազանը վերցնելուց շատ չանցած, ընկ. Ազինի հրամանատարության տակ գտնվող 28-րդ հրացանաձիգ դիվիզիայի հետ ես անցա արևելյան ճակատը, որտեղ 19 ամիս անընդհատ գտնվում էի կռիվներում։ Ցեղա սովորող-քույր, սովորում էի հենց այնտեղ գնդակների տարափի տակ և շարունակ գտնվում հեծելազորի 28-րդ գնդի առաջին էսկադրոնում։ Ամենաջերմ մասնակցությունն եմ ունեցել բոլոր կռիվներում»։

Իսկ ահա ինչ է գրում ընկ. Ռադչենկոն Կրասնոդարից.

«1919 թվի փետրվարի մեկին ես կամավոր մտա ընկ. Սորոկինի հետևակ զորամասը։ Այդ օրվանից սկսվեց իմ ռազմական կյանքը Կարմիր բանակի շարքերում։ Տիխորեցկ կայարանից ընկ. Սորոկինի գունդը հարձակվեց Կրասնոդարի վրա, դրան ես մասնակցեցի կարմիր մարտիկների շարքերում։ Ջորս որ անընդհատ շարունակվում էր կռիվը։ Կրասնոդարը վերցնելուց հետո մեր զորամասերը հետ կանչվեցին դեպի Ռոստով քաղաքը՝ գերմանացիների դեմ կռվելու համար, որտեղ մի բատարեայում գտնվում էի և ես։ Թնդանոթային կրակի ժամանակ ես ռումբից կորցրի լսողությունս։ Հետո մեր զորամասը փոխադրվեց Նեվինոմըսսկայա կայարանը, որտեղից 1918 թ. առաջ շարժվեց մինչև Բատալպաշինսկ։

Սպիտակների ուժեղ կրակի տակ մենք ստիպված էինք նահանջել Բատալպաշինսկ քաղաքից։ Նահանջը շարունակվեց մինչև Հաշտարխան քաղաքի ավազուտները։ Այդ նահանջի ժամանակամիջոցում շատ անգամ եմ ուժեղ կրակի տակ ընկնել։

7. ԲԱՆՎՈՐՈՒՀԻՆԵՐՆ ՈՒ ԳԵՂՋԿՈՒՀԻՆԵՐԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՌՎԻ ՃԱԿԱՏՈՒՄ

Հոկտեմբերյան կռվի մեջ բանվորուհիները մասնակցում էյին ինչպես կարմիր գվարդիայի օժանդակիչ գնդեր, կատարելով նաև հիվանդապահի պարտականություններ։ Այդ օգնությունը խոշոր դեր կատարեց հոկտեմբերյան կռիվների ժամանակ։ Բանվորուհիներն օգնություն էյին ցույց տալիս վիրավոր կարմիր գվարդիականներին, աշխատում էյին սննդակայաններում։

Կային բանվորուհիներ, վորոնք հրացանը ձեռքին կռվում էյին բարրիկադների վրա. բայց դրանք անհատներ էյին։

Հիշենք Լազուտինային—փետրվարյան հեղափոխության ակտիվ մասնակցին, վորը կազարմաներից դուրս բերեց զինվորներին և տարավ Կարմիր հրապարակը։ Հոկտեմբերյան օրերին նա իբրև գթության քույր՝ օգնում է կարմիր գվարդիային Կրասնոխոլմսկի կամուրջի մոտ, յերբ ռմբակոծում էյին ինտենդանտական պահեստը։

1917 թվին Խարկով քաղաքում գերմանացիների դեմ կըռվելու համար կազմակերպված կոմմունիստական ջոկատներից մեկի հրամանատարը գրում է ուկրայինյան «Հոկտեմբերի դըռները» ժողովածուի մեջ.

«Իմ հիշողության մեջ դեռ մնացել են այն մոմենտները, յերբ շնորհիվ կին կարմիր գվարդիականների տոկունության, բանվորուհու ղեկավարությամբ գունդը նահանջից հարձակման էր անցնում և հասնում խոշոր հաղթությունների»։

Կարմիր բանակում կային կանայք—շարքային կռվողներ, և նրանք քիչ չէյին։ Նրանք կռվում էյին հասարակ կարմիր բանակայինի հագուստ հագած, և համարյա չէր կարելի տարբերել շարքային կարմիր բանակայինից։

Ընկ. Կիրսանովան պատմում է գնդացիր բանեցնող մի գեղջկուհու մասին, վորի հետ ինքը կռվի ժամանակ մի վաշտում է յեղել. Նա վոչնչով չէր տարբերվում շարքային կարմիր բանակայինից։ Աստրախանից, վորտեղ նույնպես գնդացիր էր բանեցրել, իր ջոկատով Ուրալյան ճակատը յեկավ։ Նա աչքի յեր ընկնում իր համարձակությամբ և փորձառությամբ։ Նրա հետագա վիճակի մասին վոչինչ հայտնի չէ։ Քաղաքացիական կռիվների բեմից նա այնպես անլուր հեռացավ, վորպես յեկել էր անաղմուկ, առանց ֆրազների։ Ո՞վ գիտե նրա անունը։ Ո՞վ է հիշատակելու նրան պատմության մեջ։

Յեվ վորքա՞ն այդպիսի անանուն հերոսներ ունի հեղափոխությունը։ Հարյուրներ, թերևս հազարներ։

Բայց բանվորուհիները և գեղջկուհիները քաղաքացիական կռիվների ճակատում ամենից առաջ, իբրև կանոն, օգնում էյին Կարմիր բանակին առաջին հերթին իբրև կարմիր քույրեր և սանիտարներ։

1918 թվի նոյեմբերին բանվորուհիների առաջին համագումարը բանաձև ընդունեց ճակատին օգնություն ցույց տալու, կարմիր քույրերի և սանիտարների խմբեր կազմելու մասին։ Սակայն կռվի ճակատում նրանք սկսում են գործել միայն 1919 թվի նոյեմբերից, իբրև նախապատրաստական դասընթացներ անցած կարմիր քույրերի գնդեր՝ բաղկացած բանվորուհիներից և գեղջկուհիներից։

Բանվորուհիների տրամադրությունն այնպես էր, վոր Առժողկոմի կազմակերպած կարմիր քույրերի դասընթացները լըցված էյին։ Շատ ցանկացողների ստիպված էյին մերժել։ Պետք է նկատի ունենալ, վոր կիսագրագիտության պատճառով բանվորուհիներ հանդիպում էյին շատ դժվարությունների։

Բանվորուհի՛, դեպի ճակատ,—այս էր այն ժամանակ կուսակցության մարտական կոչը, վորը ջերմ արձագանք գտավ միլիոնավոր բանվորուհիների սրտերում։

Ահա ինչ է գրում կարմիր քույրերի մասին, Սազոնովան, վորին Առժողկոմի կողմից հանձնարարված էր դասընթացների կազմակերպման գործը. «Կռվի ճակատը և թիկունքն անմիջապես զգացին կարմիր քույրերի աշխատանքը։ Աշխատում էյին ամենատոկալի պայմաններում, առանց ժամանակի սահմանափակման, կրակի անմիջական սահմաններում, հավաքելով յերկաթուղու կայարաններում հիվանդներին և վիրավորներին, վորոնք յերբեմն թողնված էյին լինում շտապ նահանջի ժամանակ, կամ վորոնք կռվի դաշտից մի կերպ գալիս էյին սայլուղիներով։

1919 թվին խորհրդային միությունում բաց է թողնված յեղել

1105 սանիտարուհի. Նրանցից 440 միայն Մոսկվայում։ Նույն թվին դասընթացները տվել են 1264 կարմիր քույրեր, վորոնցից 280 սովորել են Մոսկվայում։ 1920 թվին յեղել է 1193 սանիտարուհի և 2442 կարմիր քույր։

Թե՛ կարմիր բանակի հաշվետվության մեջ և թե՛ բժշկական կազմերի տված գնահատականում կարմիր քույրերի և սանիտարուհիների աշխատանքը ճանաչվում է վորպես լուրջ և կարևոր աշխատանք։

Նրանք կարողացան վոգևորություն մտցնել կռվողների շարքերում, դեպի վիրավորներն ունեցած իրենց վերաբերմունքով նրանք կարողացան ոգնել բանակին դժվար րոպեներում։

«Լրագրները լիքն են հիվանդների ու վիրավորների կողմից խնամողներին հայտնած իրենց անկեղծ յերախտագիտության արտահայտություններով»,—գրում է Առժողկոմ Սեմաշկոն «Կարմիր բանակը և կարմիր բժշկական կազմերը» վերնագիրն ունեցող հոդվածում։

Ճակատներից մեկից հաղորդեցին, թե կարմիր քույրերն առաջավոր դիրքերում այնպես եյին վոգևորվել վիրավորներ հավաքելու իրենց աշխատանքով, վոր կարմիր բանակայիններն ստիպված եյին կանչել.—հետ քաշվեցեք, մեզ խանգարում եք կրակելու»։

Դենիկինի հարձակման միջոցին Որյոլ քաղաքի մոտ սպիտակները շրջապատել եյին հիվանդներով և վիրավորներով լի սանիտարական գնացքը։ Վողջ կազմը գնդացիրային կրակից վախեցած՝ փախչում է։ Փախչում են և՛ գնացքի ծառայողները. կարմիր սանիտարուհիներն իրենց չեն կորցնում. Նրանք գտնում են մեքենավարին, ստիպում են քշել գնացքը և գնդակների տարափի տակ՝ դուրս տանում, ազատում—վիրավորներին և հիվանդներին։

Յեվ նման դեպքեր շատ կան։

Կարմիր քույրերը հին ժամանակի գթության քույրերը չեն, վորոնց հավաքում եյին զանազան տիկիններից և պահում կարմիր խաչի պաշտպանության տակ, նույնիսկ թշնամու մոտ գերի ընկնելիս՝ զինվորական որենքներով խնայվում վորպես ռազմական գործողությունների հետ անմիջական կապ չունեցող անձինք։ Վոչ։ Մեր կարմիր քույրերը միաժամանակ և ընկերներ եյին, համարյա միշտ զինված և միանգամայն՝ պատրաստ հարկավոր ժամանակ զենքը ձեռքին հրապարակ գալու կողք-կողքի, ընկ. կարմիր բանակայինների հետ։

Յերբ նրանք գերի եյին ընկնում, նրանց ծաղրանքի եյին յենթարկում, ծեծում գազանաբար և մահապատժի յենթարկվում։ Նրանց միևնույն դասակարգային թշնամիներն եյին ընդունում։ Նրանք չեյին գնում ճակատ բարեգործություն անելու. Նրանք գնում եյին կատարելու իրենց պարտքը պրոլետարական հեղափոխության առաջ՝ իբրև բուրժուազիայի անհաշտ թշնամիներ. Նրանք մեծ հոկտեմբերի նույն կարմիր մարտիկներն եյին։

Ահա Կազանի վառոդի գործարանի բանվորուհի ընկ. Լեոնտևայի կենսագրությունից մի կտոր.

«Չեխերի՝ քաղաքի վրա հարձակում գործելու ժամանակ յես գնացի Կազան և կամովին մտա Կարմիր Բանակը Ջերոկսար գյուղում՝ իբրև սանիտարուհի։

Կազանը վերցնելիս՝ յես Կինդերի գյուղի դիրքերի առաջին գծի վրա եյի։ Յերբ Կազանը վերցրինք և այնտեղ կազմվեց II բանակը, յես կրկին կամովին նրա շարքերը մտա։ Կազանը վերցնելուց շատ չանցած, ընկ. Ազինի հրամանատարության տակ գտնվող 28-րդ հրացանաձիգ դիվիզիայի հետ յես անցա արևելյան ճակատը, վորտեղ 19 ամիս անընդհատ գտնվում եյի կռիվներում։ Յեղա սովորող-քույր, սովորում եյի հենց այնտեղ գնդակների տարափի տակ և շարունակ գտնվում հեծելազորի 28-րդ գնդի առաջին եսկադրոնում։ Ամենաջերմ մասնակցությունն եմ ունեցել բոլոր կռիվներում»։

Իսկ ահա ինչ է գրում ընկ. Ռադչենկոն Կրասնոդարից.

«1919 թվի փետրվարի մեկին յես կամավոր մտա ընկ. Սորոկինի հետևակ զորամասը։ Այդ որվանից սկսվեց իմ ռազմական կյանքը Կարմիր բանակի շարքերում։ Տիխորեցկ կայարանից ընկ. Սորոկինի գունդը հարձակվեց Կրասնոդարի վրա, դրան յես մասնակցեցի կարմիր մարտիկների շարքերում։ Չորս որ անընդհատ շարունակվում եր կռիվը։ Կրասնոդարը վերցնելուց հետո մեր զորամասերը հետ կանչվեցին դեպի Ռոստով քաղաքը՝ գերմանացիների դեմ կռվելու համար, վորտեղ մի բատարեայում գտնվում եյի և յես։ Թնդանոթային կրակի ժամանակ յես ռումբից կորցրի լսողությունս։ Հետո մեր զորամասը փոխադրվեց Նեվինոմըսկայա կայարանը, վորտեղից 1918 թ. առաջ շարժվեց մինչև Բատալպաշինսկ։

Սպիտակների ուժեղ կրակի տակ մենք ստիպված եյինք նահանջել Բատալպաշինսկ քաղաքից։ Նահանջը շարունակվեց մինչև Հաշտարխան քաղաքի ավազուտները։ Այդ նահանջի ժամանակամիջոցում շատ անգամ եմ ուժեղ կրակի տակ ընկնել։

Իմ գլխավոր աշխատանքը վիրակապությունն եր. բացի այդ յես զենքը ձեռիս մասնակցել եմ կռիվներին։ Պոդյե կայարանի մոտ, մի կռվի ժամանակ, սպիտակ գվարդիականների կողմից կրծքից վիրավորված մի մարտիկի—ընկ. Մորոզովին ազատելու համար՝ ինձ պարգևատրեցին ժամացույցով (վիրավորին ձիով փախցրի կրակի շրջանից)։ Նույն թվի օգոստոսին, Սոլոդուցկ գյուղում յես վիրավորվեցի գլխից, վորի համար ստիպված եյի յերկու ամիս բժշկվել Հաշտարխան քաղաքում»։

1919 թվին բանվորուհի Պատրիկեևան գնաց Կարմիր բանակը։ Առաջավոր դիրքերում, սոսկալի կրակի տակ, նա վիրավորների վերքերն եր կապում։ Ռումբի կտորից վիրավորվելով հանդերձ՝ նա չհեռացավ շարքերից։ Յերեք անգամ վիրավորվելով, այնուամենայնիվ մնաց ֆրոնտում մինչև պատերազմի վերջը։ Հեծելազորի մի գրոհի ժամանակ, յերբ թշնամին ճնշեց մեր մի թևը, նա լեռնական մի զորասյունի վրա խոյացավ, իր հետ տանելով վողջ գունդը։ Կարմիր քույր-բանվորուհի Պատրիկեևան պարգևատրվել է Կարմիր դրոշի շքանշանով։

Բանվորուհի ընկեր Բալանդինան աշխատում եր իբրև քույր չեխոսլովակյան ճակատում։ Նա Կոլչակի բանակի ձեռքը գերի ընկավ, բայց կարողացավ փախչել և վերադարձավ իր գունդը։ Նրան ուղարկեցին ամենավտանգավոր տեղերը, և կրկին գերի ընկնելով՝ դատապարտվեց գնդակահարման։ Սակայն կարողացավ ագիտացիա անել այն զինվորներին, վորոնք նրան տանում եյին գնդակահարելու, և նրանց հետ միասին հասավ կարմիր զորամասերին։

1920 թվին ընկ. Բալանդինային մոբիլիզացիայի յեն յենթարկում և ուղարկում արևմտյան ճակատ, վորտեղ նա աշխատում է հիվանդանոցում և սանիտարական մասերում։ Այս անգամ գերի յե ընկնում լեհացիների ձեռքը, բայց մեկ ամսից փախչում է գերությունից։ Այստեղ նա ծանր կոնտուզիա յե ստանում, վորից հետո աշխատում է զինվորական հիվանդանոցում։ 1921 թվին միայն ընկ. Բալանդինան ազատվում է զինվորական ծառայությունից։

Ահա ինչ ենք կարդում մենք Ուկրայինայի «Հոկտեմբերի դստերք» ժողովածուի մեջ ընկ. Բալաշևայի մասին.

«Նա հրամանատարական պաշտոններ չի վարում. նա ավտոմոբիլով չի շրջում, նա Ուկրաինայի Կենտգործկոմի անդամ չե, նա լոկ Բախմուտ գավառի կին կազմակերպչուհի յե, բայց նրա

հետևից գնում է գյուղացիական կին մասսան, նրան կոշտերով ծածկված ձեռների մի անտառ է հետևում։ Փոքրուց վարձու աշխատող է յեղել, իր մեջքի վրա զգացել է կապիտալիզմի ճնշման վողջ ծանրությունը, աղայական ծաղրանքների ամբողջ գարշելիությունը։

Կարմիր բանակում գթության քույրեր ունենալու հենց առաջին պահանջին նա շտապում է լինել մարտիկների շարքում։ Իզուր է մայրն աշխատում նրան հետ կասեցնել։

— Մայրիկ, յես գնում եմ, յես այնտեղ պետք է լինեմ, վորտեղ բանվորական ձեռքերն են,—ասում է նա։

Ճակատում նա քրոջ և մարտիկի կյանք է վարում ու մասնակցում գերմանացիների դեմ տեղի մղած ճակատամարտին։ Բալաշովան առաջինն է հետախուզական խմբերում, նա մարտիկ է և ամեն տեղ առաջին շարքերում։ 1918 թվի անվերջ ճակատամարտերը և Ցարիցինի հերոսական օրերը Բալաշովային իր դիրքերում են գտնում։ Նա 12-րդ դիվիզիայի շարքերում կռվում է Դուտովի, Կրասնովի, Դենիկինի դեմ։ Նա ապրեց նահանջի բոլոր սարսափները, յերբ այրվում եյին վիրավորներով լի գնացքները. յերբ գնդացիրների անվերջ ճռճռոցների տակ յուրաքանչյուր քայլ բարակ եր՝ թելի նման։

Պրոլետարական հեղափոխության պաշտպանության գործում բանվորուհիների և գեղջկուհիների մասնակցությունը միայն սանիտարական քույրերին վերաբերող աշխատանքով չեր սահմանափակվում։ Նրանք խրամատներ են քանդում, աշխատում են ռնդակայաններում, կապի (ճանապարհների) ծառայություն են կատարում, աշխատում են զորքի պարենավորման գործում։ Նրանք կռվում են հրացանը ձեռքներին՝ ինչպես շարքային կարմիր բանակային, պայքարում են դասալքության դեմ, նրանց կարելի յե տեսնել և պարտիզանական խմբերում։

Հիշենք Լենինգրադի բանվորուհիներին, յերբ նրանք դիմադրում եյին սպիտակ բանակային գեներալ Յուդենիչին։ 14 հազար բանվորուհիներ ցուրտ աշնանը խրամատներ եյին փորում, բանվորուհիներից առանձին ջոկատներ կազմվում, վորոնք կանգնեցնում եյին ճակատից փախչող դասալիքներին։ Նրանք և՛ կրակում եյին գնդացիրներից, և՛ կապի ծառայություն կատարում։

Լուգանսկ քաղաքի բանվորուհիներն իրենց մասսայական մասնակցությամբ, բառիս լայն իմաստով, փրկեցին քաղաքը սպիտակ գվարդիական բանդաներից։

— Դենիկինը միայն մեր դիակների վրաից անցնելով Մոսկվա կգա,—ահա ինչ հայտարարեցին Տուլայի բանվորուհիներն այն ժամանակ, յերբ Դենիկինի բանդաները պատրաստ եյին արդեն հարձակվելու զենքի պահեստների վրա, վորով հարուստ եր Տուլան, վորպես զենքի արդյունագործության կենտրոն։

Պարտիզանական կռիվներն էլ ունեն իրենց հերոսուհիները բանվորուհիներից և գեղջկուհիներից։

«Կրասնայա Սիբիրյաչկա» հանդեսում (1923 թ. հուլիսի համարում) ընկ. Լեբեդևա-Խոխրիկովան իր հիշողություններն է տալիս պարտիզանական խմբերում իր տարած աշխատանքի մասին։

1919 թվին ձերբակալվելով, փախչում է բանտից և ընկնում մի մարտական խմբի մեջ, վոր պարտիզանական կռիվ եր մղում։

«Մենք, վոր ստիպված եյինք շարունակ թափառել և թաքնըվել թմբերի տակ, յերբեք չեյինք վհատվում։ Ընդամենը 15 հոգի եյինք։ Սովորել եյինք թմբերի տակ քաղցի ու ցրտի դիմանալ, յերբեմն որերով առանց հացի մնալ։

Թշնամու խմբերի հետ ունեցած ընդհարումներից մեկի ժամանակ մեր խումբը յերեք կողմից շրջապատվեց։ Ընկ. Խոխրիկովան վիրավորվել եր ուսից. գրեթե վոչնչացել եր ամբողջ վաշտը։

Նաստյա Խոլոդովան անձամբ մասնակցում է պարտիզանական խմբի կազմակերպմանը. հավաքում է 1917 թվին սպիտակ գվարդիականների կողմից Տրոիցկոսավսկում (Սիբիր) կատարած հեղաշրջումից հետո, ջարդված ուժերի մնացորդները։ Նոր կազմակերպված խումբը գնում է դեպի Մոնղոլիայի սահմանները և ճակատամարտներ ունենում սպիտակ գվարդիականների հետ։

Նաստյա Խոլոդովան չորս ամիս Սիբիրիայի տայգայում (կուսական անտառներով) տառապալից ճանապարհ է կտրում։

Իրկուտսկում ձերբակալվում է (նրա ամուսինը գնդակահարվել եր) և հիսուն հոգի պարտիզանների հետ հանձնվում է ռազմա-դաշտային դատարանին։ Նրան դատապարտում են ցմահ տաժանակիր աշխատանքի։ Բայց մերոնք արդեն մոտ եյին և նրան բանտից ազատեցին քաղաք մտնող կարմիրները։

Հաղթելու համար՝ բանակն ամենից առաջ պետք է սերտորեն կապված լինի բնակչության հետ և գտնի աշխատավորության համակրանքն ու օգնությունը։ Աշխատավորության կեսը, իսկ պատերազմի ժամանակ—կեսից ավելին՝ կանայք են կազմում։

Աշխատավորուհիների համակրությամբ և օգնությամբ՝ ուժեղ ու անպարտելի յէ մեր Կարմիր Բանակը։

Քաղաքացիական կռիվը կարմիր-գվարդիականների, պարտիզանների, կարմիր-բանակայինների հետ ձեռք-ձեռքի տված թըշնամու դեմ կռվող բանվորուհիների ու գեղջկուհիների հերոսական խիզախությունների շատ օրինակներ գիտե, ինչպես և գեղջկուհիների լայն մասսաների կողմից ցույց տրված համակրանքի ու օգնության օրինակներ։

Ահա Կուբանի գեղջկուհին, Աննա Դեբրովան, վորի հերոսությունը կայանում է նրանում, վոր նա, իմանալով, թե սպիտակները հենց այդ գիշեր ցանկանում են կոտորել կարմիր գարնիզոնը, աննկատելի կերպով իջնում է իր տան վերին հարկից և զգուշությամբ սողալով դավադիրների մոտից, հասնում է կարմիրներին և զգուշացնում նրանց պատրաստվող վտանգի հանդեպ։ Նույն գիշերը կարմիրները շրջապատում են Դեբրովայի ցույց տված բնակարանը և ձերբակալում սպիտակ բանդիտների վողջ կազմակերպությունը։ Հետո, յերբ կարմիրներն ստիպված եյին նահանջել, Դեբրովան գնում է նրանց հետ միասին, բայց ճանապարհին տիֆով հիվանդանալով, մնում է հարևան ստանիցայում, վորը շուտով անցնում է սպիտակների ձեռքը։ Դեբրովան գերի յէ ընկնում։ Նրան կրկին իր բնակավայրն են ուղարկում, վորտեղ սպիտակ բանդիտների կողմից անխնա տանջանքների յէ յենթարկվում։ Նրան ծեծում են հրացանի շամփուրով. նրա ամբողջ մարմինը բզկտվել եր թրի հարվածներից։ Շնորհիվ իր ամրակազմության՝ Դեբրովան դիմանում է այդ սոսկալի տանջանքներին և կենդանի մնում։

Լապինան Տամբովի նահանգի գյուղացու աղջիկ եր, վորին դեռ մանուկ հասակում բերել եյին Կուբան։ Փետրվարյան և Հոկտեմբերյան հեղաշրջման ժամանակ նա ծառայում եր Բատալպաշինսկի հիվանդանոցում։ Քաղաքական խնդիրներում թույլ եր, բայց, իր ասելով, «սրտի խորքում զգում եր, վոր մի ինչ վոր մեծ ու լավ բան է կատարվել, և դա կթեթևացնի չքավորների վիճակը»։

Կուբանում, խորհրդային իշխանության ժամանակ, նա վոչնչով չի կարողանում իրեն ցույց տալ։ Բայց Կարմիր բանակի նահանջից հետո, Լապինան մնում է Կուբանում, վկա լինելով այն սոսկալի վրիժառության, վոր սպիտակ գվարդիականներն

են ցույց տալիս բանվորների և գյուղացիների դեմ, վորոշում ե ինչպես էլ լինի, զոհելով իրեն, ուժերը նվիրել աշխատավորության ընդհանուր գործին։

Նա լայն ծանոթություն ե հաստատում կազակ սպաների և վոստիկանների հետ, վորոնցից կարելի յեր իմանալ սպիտակգվարդիականների ծրագրերի և մտադրությունների մասին. Թաքցնում եր իր մոտ կարմիրներին և ճանապարհ ձգում նրանց դեպի բոլշևիկյան ֆրոնտը, յուրաքանչյուր րոպե վտանգելով իր կյանքը։

Լապինի մասին հաղորդում են վոստիկանությանը, սակայն մահվան դատապարտելու համար բավարար փաստեր չունենալով, ճիպոտներով ծեծի յեն յենթարկում։ Մի ամիս հիվանդանալուց հետո, ավելի մեծ յեռանդով ե սկսում աշխատել, կապվելով կարմիրների հետ և ագիտացիա մղելով բնակչության մեջ։

Մեծ աշխատանք կատարեցին բանվորուհիները և գեղջկուհիները սպիտակների գալու ժամանակ։

Նրանց միջոցով կապ եր հաստատվում կարմիր ճակատի հետ։ Նրանք թաքցնում եյին նրանց, վորոնց սպիտակ գվարդիականների կողմից սպասվում եյին տանջանքներ։ Նրանք կաթ կամ մրգեղեն վաճառողի անվան տակ հետախուզական աշխատանք եյին կատարում ամենավտանգավոր տեղերում։ Նրանք կապ եյին պահպանում մեր շարքերի հետ և ագիտացիա մղում թշնամու զինվորների շարքերում։

Գեղջկուհիները դեպի խորհրդային իշխանությունն ունեցած տրամադրությամբ հետ չեյին մնում գյուղացիության ընդհանուր չքավորական խավերից։

«Լինում եյին դեպքեր,—պատմում ե մի ականատես,—յերբ գեղջկուհին փրկում եր ջոկատի դրությունը։ Առանձին կարևոր նշանակություն ուներ անտառի խորքում գտնվող վաշտերի պարենավորումը։ Այդ աշխատանքն ամբողջովին ընկնում եր գեղջկուհիների վրա»։

Պատմում են մի արտակարգ դեպք Ուկրաինիայի կռիվներից, յերբ 70—100 մարդ գտնվում եր անտառի խորքում, բոլորից կտրված, թշնամիներով շրջապատված։ Մոտակա գյուղի աղջիկները գալիս են ջոկատի մոտ և առաջարկում՝ գերմանացիներին անծանոթ կածանով մի քանի սայլ պարեն հասցնել։ Յեվ իրոք, նրանք այդ արին։

Գեղջկուհիներն ոգնում եյին կարմիրներին՝ շատ անգամ հակառակ իրենց ամուսինների, վորդիների կամ յեղբայրների կամքին, նրանց կողմից ամեն տեսակ ծաղրանք տանելով։

Մեր թշնամիները շատ լավ հաշվի եյին առնում կանանց լայն մասսաների մասնակցությունը քաղաքացիական կռիվներին։ Ահա Կուստանայի սպիտակ գվարդիական գարնիզոնի գնդապետ Տոմաշևսկու № 16 հրամանը 1913 թվի ապրիլի 23-ին ուղղված Կուստանայ քաղաքի գարնիզոնին և Կուստանայ շրջանի վողջ բնակչությանը։

«Անձամբ համոզվեցի, վոր բոլշևիկյան բանդաների ապստամբության ժամանակ Կուստանայ քաղաքում և շրջակա գյուղերում փաստական մասնակցություն են ունեցել վոչ միայն տղամարդիկ, այլ և կանայք, թույլ տալով իրենց կրակ բաց անել տանիքներից, պատուհաններից և մութ անկյուններից մեր հայրենիքի փառապանծ պաշտպանների վրա։ Մինչև հիմա այդ դավաճանուհիները մնացել են մի կողմ, արժանի հատուցում չստանալով հայրենիքին դավաճանելու համար։ Նրանց կախելը կամ գնդակահարելը միանգամայն կիրառելի չեմ գտնում, վորովհետև արժանի չեն այդ պատվին, ուստի հայտնում եմ, վոր հիշյալ անձերի համար միայն ճիպոտներ են գործադրվելու՝ մահվան հասցնելու չափ։ Ավելի քան համոզված եմ, վոր այս տնային միջոցը հարկ յեղած ազդեցությունը կթողնի այդ թույլ ուղեղների շրջանում, վորոնք իրենց կոչման համաձայն բացառապես կզբաղվեն իրենց խոհանոցով, ամաններով և յերեխաների դաստիարակությամբ, ապագայի համար ավելի լավ սերունդ պատրաստելու և վոչ թե քաղաքականությամբ զբաղվելու, վորը միանգամայն ոտար ե նրանց հասկացողությանը։

Իսկականն ստորագրեց՝

Գարնիզոնի պետ Տոմաշևսկի։

Իսկականի հետ ճիշտ ե՝ ավագ ադյուտանտ

պոդպորուչիկ Շևչենկո»։

Ինչպես յերևում ե այս հրամանից, քաղաքացիական կռիվների հերոսուհիները բանվորների և գյուղացիների թշնամիների վրա կրակում եյին անկյուններից, պատուհաններից, տանիքներից, ապահովելով կարմիր մարտիկների հաղթանակը։ Ցարական գնդապետը չի իմանում՝ ինչպես ստորացնել իրենց անիծյալ թշնամիներին։ Տոմաշևսկու կարծիքով՝ այդ կանանց խեղդելով սպանելը մեծ պատիվ եր, նրանց պետք եր սպանել ճիպոտների

հարվածներով։ Ամենախայտառակ պատիժը—մտրակով պատժելը, նրա կարծիքով, կարող է խելքի բերել նրանց և վերադարձնել դեպի վառարանն ու կաթսաները։

Պարոն գնդապետն իզուր աշխատեց, ամենափողոցային հայհոյանքներ թափելով մեր կարմիր հերոսուհիների հասցեյին։ Պատմությունն արդեն կարողացել է նրանց սխրագործություններն իր էջերի մեջ դրոշմել, իսկ բանվորներն ու գյուղացիք կարողացել են հարկ յեղած պատիժը տալ պարոն գեներալներին՝ ըստ իրենց գործերի։

Կանանց — բանվորուհիների և գեղջկուհիների հերոսական կռիվը հեղափոխության թշնամիների դեմ՝ արդեն նշված է պատմության էջերում։

Նրանցից շատերն ընկան ռազմի դաշտում, շատերը գերի ընկան, շատերը տանջանքների յենթարկվեցին ու մահապատժի ստացան։ Շատերը ծանր վիրավորվելով՝ ընդմիշտ հաշմանդամների շարքն անցան։

Հազարավոր են այն կանանք, վորոնք այդպիսով հեռացել են շարքերից։

Կան բանվորուհիներ և գեղջկուհիներ, վորոնք պարգևատրվել են Կարմիր դրոշի շքանշանով։

Փառք իրենց կյանքը չխնայող բանվորուհիներին և գեղջկուհիներին։

Շատերն են ընկել Դենիկի, Կոլչակի, Յուդենիչի, Կորնիլովի, Կալեդինի, Շկուրոյի և ուրիշների դեմ մղվող պատերազմի դաշտում։ Թեև մոռացվել են նրանց անունները, բայց նրանց սխրալի գործն ապրում է։

—

8. ԲԱՆՎՈՐՈՒՀԻՆԵՐԻ ԵՎ ԳԵՂՋԿՈՒՀԻՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Քաղաքացիական կռիվների հետ կապված դժվարին ժամանակը, վորը բաժին ընկավ իմպերիալիստական պատերազմում բզկտված բանվորա-գյուղացիական բնակչությանը, յերբեմն հիվանդագին կերպով եր անդրադառնում աշխատավոր կանանց լայն մասսաների տրամադրության վրա։

Ամուսին-բանվորներն իրենց արյունն են թափում ֆրոնտում, իսկ նրանց կանայք ու յերեխաները սովամահ լինում։ Վերտեղ է բոլշեվիկների խոստացած խաղաղությունն ու հացը։ Ո՞ւր է հեղափոխության խոստացած՝ մարդկային բոլոր պահանջների բավարարումը, յերբ հազիվ կարելի յե քարտով ստանալ միայն մեկ ութերորդական գրվանքա ամենավատ տեսակի հաց։

Այսպես եյին դատում անգիտակից բանվորուհիները և գեղջկուհիները։

Հասկանալի յե, վոր հեղափոխությունն անխուսափելիորեն կապված է դժվարությունների հետ, և վոր միայն բանվոր դասակարգի հետ ձեռք ձեռքի տված պետք է դիմադրել ու վերացնել նրանց. իսկ դա այնքան էլ հեշտ չեր։ Մանավանդ վոր դեռ մեր թշնամիներն էլ քաղցր ճառեր եյին խոսում կաթնահոս գետերի և մեղրափերի մասին, վորոնք կհոսեն անմիջապես, խորհրդային իշխանության ընկնելուց հետո։

Ահա որինակ ինչպես է նկարագրում բանվորուհի Մալուսյան Սամարայի «Կոմմունա» թերթում այդպիսի կանանց տրամադրությունը, յերբ չեխո-սլովակները գրավում եյին Սամարան.

«Վառ պատկերանում է տեսարանը. գարնան լուսավոր առավոտ և թնդանոթների վորոտ։ Այդ վորոտը շարունակվում եր մեկ և կես շաբաթ և հանկարծ լռեց։ Զքնաղ գարնան փոխարեն յեկավ խոր աշունը։ Կարմիր բանվորների և գյուղացիների փո-

խարեն փողոցների անկյուններում չեխերը հայտնվեցին։ Քաղաքը գտնվում եր սպիտակ գվարդիական եսեր-մենշևիկյան կառավարության ձեռքում։

Պետք է նկատել, վոր այդ տխուր որը կանայք ավելի եյին կատաղել. Նրանք չհասկացան այն սարսափը, վորը յեկավ այդ փոփոխության հետ։

Յեթե ուրախանում ու հրճվում եյին բուրժուա կանայք, դա հասկանալի յեր, բայց այդ սոսկալի ամբոխի մեջ, մեր ընկերներին հոշոտող այդ սարսափելի ամբոխի մեջ կային և՛ բանվորուհիներ։ Նրանք մարդասպաններին ցույց եյին տալիս կոմմունիստների բնակարանները և իրենք մասնակցում ակումբների թալանին։

Այդ «ժողովրդի բարեկամների» չորսամսյա իշխանությունը ցույց տվեց, թե վորքան անողոք կերպով եյին խաբվել այն անգիտակից բանվորուհիները, վորոնք ուրախանում եյին խորհրդային իշխանության անկումով։

Հացի և ազատության փոխարեն, վորը խոստանում եյին նոր իշխողները, նրանք իրենց վրա զգացին անգործության ամբողջ սարսափը, յերբ շուկան լեփ-լեցուն եր ապրանքներով, իսկ մայրն անկարող եր յերեխայի համար կաթ գնել։ Նրանց ամուսիններն ու յեղբայր-բանվորները հարյուրներով տարվում եյին Սիբիր և թնդանոթային մսի դեր կատարում։ Իսկ յերբ, վերջապես, Սամարայի պրոլետարիատը հասկացավ իր սխալը և ապստամբեց, նա խիստ տուժեց։ Միայն Իվաշենկովում գնդակահարվել է 1500 մարդ, չհաշված այն յեակլի անհայտներին, վորոնք գիշերով գաղտնի տարվում եյին քաղաքից դուրս և գնդակահարվում։

Այս դառը փորձն անհետևանք չանցավ Սամարայի բանվորների և բանվորուհիների համար։ Մենք ի մի ձուլվեցինք և այլ ևս թույլ չենք տա այդ սխալները կրկնելու»։

Բայց այդպիսի դեպքերը յեզակի եյին։ Ընդհանրապես բանվորուհիներն ու գեղջկուհիները միշտ ոգնություն եյին ցույց տալիս Կարմիր բանակին, վորի շարքերում կռվում եյին նրանց ամուսինները և ընկերները։

Ահա ինչպես է նկարագրում այդ ժամանակը ընկ. Պոդչուֆարովան.

«Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, յերբ պարենի պակաս զգացվեց, և արդեն սկսվեց քաղաքացիական կռիվը, բան-

վորուհիների հեղափոխական բարձր տրամադրությունն աստիճանաբար սկսեց ընկնել, և յերբ նրանց բացատրում եյին պատճառները, թե ինչու մենք դժվարություն ենք կրում, նրանք պատասխանում եյին. «Դուք մեզ խաբեցիք. ասում եյիք, թե ամեն բան կունենանք մեծ քանակությամբ, իսկ դուրս յեկավ ընդհակառակը, — կյանքն ավելի դժվարանում է»։

Միտինգներում և ժողովներում բանվորուհիներն աշխատում եյին պարզել իրենց համար ամենատանջող հարցը, թե ինչու՞ յե խորհրդային իշխանությունը պատերազմը շարունակում։ Նրանք լավ չեյին հասկանում, վոր դա կալվածատերերի և կապիտալիստների հանցանքն է, վորոնք բոլոր ուժով աշխատում են իրենց վերադարձնել իշխանությունը և աշխատավորությունից խլել հողերը, գործարանները և մյուս արժեքները։

Բանվորուհիներին և գեղջկուհիներին կուտակված ցավոտ խնդիրները պարզաբանելու համար, վորպեսզի նրանք ևս գիտակցորեն վերաբերվեն հեղափոխության խնդիրներին, ինչպիսի վերաբերմունք բանվոր դասակարգն է ցույց տալիս, Համամիութենական Կոմ. կուս. Կենտր. Կոմիտեն գործարանի բանվորուհիների և գյուղի ներկայացուցիչների համագումար հրավիրեց Մոսկվայում։ Դա գլխավորապես ընկ. Լենինի և ընկ. Սվերդլովի (Համամիութեն. Կենտգործկոմի Նախագահ.) միտքն եր։

Դրա սկիզբը դրված եր 1917 թվի մայիսին Մոսկվայի բանվորուհիների առաջին կոնֆերենցիայում, վորտեղ վորոշվել եր բանվորուհիների և գեղջկուհիների Համամիութենական առաջին համագումարը հրավիրել և ընտրել տասնմեկ հոգուց բաղկացած մի հանձնաժողով այդ համագումարը կազմակերպելու համար։ Հանձնաժողովի մեջ մտան ընկ. ընկ. Ինեսսան, Կոլոնտայը, Ստալը, Կալինինան, Ա. Դ. Բարինովան, Գրաչովան, Ռոդիոնովան, Մոյրովան, Պոդչուֆարովան, Անուչկինան, Մոդեստովան, Սիմյոնովան։

Ահա ինչպես է նկարագրում ընկ. Բարինովան համագումարի նախապատրաստումը.

«Ամբողջ հանձնաժողովը վարակված եր աշխատելու և համագումարն ստեղծելու ցանկությամբ։ Մենք զգում եյինք, վոր դա անհրաժեշտ է։ Բանվորուհիներն իրենք թերթիկներ եյին գրում, բացատրելով համագումարի նշանակությունը, իրենք հանձնում եյին տպարանին, և վորովհետև մենք պահեստներ չունեյինք, թերթիկները բարձում եյին ավտոմոբիլներին և տանում իրենց տները։ Հենց այստեղ ել գալիս եյին պրոպագան-

դայի և համագումարի պատգամավորուհիների ընտրությունների համար գավառ գնացող ընկերները։ Պոդչուֆարովան ուղարկվեց Տուլա, Աբաշկինան գնաց Մոսկվայի գավառները, Գրաչովան՝ Բրյանսկ, յես՝ կենտրոնական շրջանները։

Կամպանյան անցավ մեծ հաջողությամբ։

Յերկու ամսվա ընթացքում մեզ հաջողվեց ամենահեռավոր անկյուններից մոտ 1000 մարդ ջոկել, մեզ հաջողվեց դուրս քաշել ամենահետամնաց գեղջկուհիներին և բատրակուհիներին, վորոնք ակտիվ կերպով մասնակցում եյին համագումարում։

Վերադարձող ընկերները շատ բնորոշ դեպքեր եյին պատմում։ Որինակ՝ մեր ագիտատորներին մի քանի տեղերում ընդունում եյին իբրև հակաքրիստոնեական սպասավորների, նրանց մոտենալիս՝ խաչակնքում եյին և հարցնում, թե, արդյոք, պիղծ վոգիներ չե՞ն,—այնքա՜ն հասկանալի, գեղեցիկ ճառ են խոսում կին-բանվորուհիները։ Գեղջկուհիները հարցնում եյին.—արդյոք այնտեղ հակաքրիստոնեական կնիք չե՞ն դնելու իրենց վրա, ուր հրավիրում են նրանց. իսկ, յերբ նրանց պատգամավորուհի եյին ընտրում, նրանցից մի քանիսը հայտարարում եյին. «Ահա, սիրելիք, յես մարդ եյի, իսկ հիմա հանկարծ պատգամավորուհի դարձա»։

Բանվորուհիների և գեղջկուհիների առաջին Համառուս. համագումարի նախապատրաստական աշխատանքները խորապես շարժեցին կին մասսաներին։

Ընտրությունները կատարվել եյին գավառական փոքր քաղաքներում և հեռավոր շրջաններում։ Բանվորուհիների մասսան առաջին անգամ հաստատապես զգաց, վոր իրոք ինչ վոր բան փոխվել է, վոր այնպիսի ժամանակ է յեկել, յերբ կինն էլ մարդ է դարձել. մի խոսքով, վոր իշխանությունը բուրժուազիայի ձեռքից անցել է բանվոր դասակարգի ձեռքը։

Իվանովո-Վոզնեսենսկում բոլոր գործարաններում ընտրություններ կայացան բանվորուհիների Համառուսական համագումարի համար։ Կինեշեմսկի կոմիտեն թերթիկներ եր բաց թողել։ Առաջին անգամ բարձող-կանանց և տրակտիրների ծառայողների ժողովները գումարվեցին ըստ պրոֆմիությունների։

Շրջաններում գումարվում եյին նաև շրջանային նախընտրական կոնֆերենցիաներ։ Հետամնաց, խղճուկ կին մասսան ուշադրությամբ լսում եր հռետոր-բանվորուհիներին, վորոնք յեկել եյին ֆրոնտում։

«Հանձնաժողովի անդամների մեջ,—պատմում է ընկ. Բարինովան,—կասկած եր ծագում. «Կկարողանա՞նք արդյոք այս կարճ ժամանակամիջոցում բավարար թվով ներկայացուցիչներ հավաքել։ Բայց, աշխատանքներն սկսելուց յերկու շաբաթ անց, զանազան անկյուններից սկսեցին գալ պատգամավորուհիները։ Մեր տրամադրությունը ռազմական դարձավ։ Մեր սպասած 500 հոգու փոխարեն յեկան 1200 մարդ պատգամավորուհի վճռական և 40 էլ՝ խորհրդակցական ձայնով,

Այստեղ մենք մտահոգվեցինք—որտեղ տեղավորել, ինչպես կերակրել նրանց։ Սակայն, շնորհիվ Մոսկվայի խորհրդի ուշադրության, բոլորը զետեղվեցին զանազան հանրակացարաններում և քիչ թե շատ կերակրվեցին։

Յեթե հիշենք այն ժամանակ պարենի հետ կապված դժվարությունները, ապա զարմանալու վոչինչ չի լինի, վոր համագումարի նախորյակին կազմակերպած ընկերական թեյը մենք խմեցինք ամենավատ տեսակի սև հացով և չտեսնված դեղին, թաց շաքարով, իսկ թեյը պատրաստված եր ինչ վոր սրճանման խառնուրդից։ Ամանները հավաքել եյին — մեկը մի տեղից, մյուսը մի ուրիշ տեղից. մեկը բերել եր ինչ վոր անագի թաս, մյուսը՝ պոմադի աման։ Հեշտայեռը ժամանակավորապես վերցրել եյինք դռնապանի կնոջից մի փունտ սև հացով, կոմիսարիայի անդամներս դնում եյինք հերթով, կրակը յերկարավիզ հին կոշկի ճիտկով փչելով»։

Յերեկոն փառավոր անցավ։ Պատգամավորուհիները պատմում եյին, թե ինչպիսի դժվարությամբ հաջողվեց նրանց համագումար գալ։ Նրանց վախեցնում եյին, թե կգնդակահարեն, բանտ կնստեցնեն։ Մի պատգամավորուհի պատմում եր, թե ինչպես կուլակները հարբեցրել եյին նրա ամուսնուն և գյուղական ժողովում համոզել, վոր նա կնոջը չթողնի։

«Էլ ինչպիսի ամուսին ես դու, վոր կնոջդ յետ պահել չես կարողանում»—ասում եյին նրան։ Յերբ նա հարբած քնեց, կինը 10 վերստ վոտով գնաց կայարան։ Համագումարի մանդատն արդեն իր ձեռքումն եր։

— Համագումարն անցնում եր գործնական,—պատմում է նույն ընկ. Բարինովան,—ամեն մի հարցի շուրջը հարյուրներով եյին դուրս գալիս խոսելու։ Բնորոշ եր, վոր բանվորուհիները և գեղջկուհիները, վորոնք առաջին անգամ եյին ամբիոն բարձրանում խոսելու, զգում եյին, վոր այստեղ բոլորն իրենց ունկնդիր-

ներն են, իրենց մարդիկը, որ ուշադիր լսում են իրենց յուրաքանչյուր բառը և որ իրենց գործնական առաջարկները կընդունվեն:

Հսկայական տպավորություն թողեց կին-կարմիր բանակային ընկ. Սավելովայի՝ Կարմիր Ցարիցինի քաջարի պաշտպանի ճառը: Դուրս եկին գալիս և գեղջկուհիները: Նրանցից մեկը — Օրլովսկի նահանգի Բրյանսկ գավառի գեղջկուհի Պավլյուխինան, հագին քուրք (տուլուպ) և տրեխ, ամբիոն բարձրացավ, մի տաք ճառ խոսեց. «մեր գյուղում,— ասաց նա,— ամբողջ չքավորությունը դուրս է յեկել պատերազմի, իսկ բուրժուաները չքավորական կոմիտեների մեջ են խծկվել, դժվար է նրանց հետ կռվել: Նա հասկանում էր բանվորուհիների ծանր վիճակը և օգնություն խոստացավ նրանց: Նա ասում էր, թե անհրաժեշտ է գյուղատնտեսական մեքենաներ տալ գյուղին,- որպեսզի գյուղացին բերքի վրա շատ ժամանակ չկորցնե. և այն ժամանակ,— ասում էր նա,— գեղջկուհին հետ չի մնալ բանվորուհուց»:

Այն ժամանակ Պավլյուխինան յերիտասարդ էր, կենսաթըրթիռ, կարմրաթուշ, մշտածիծաղ դեմքով: Յերբ նրան Համառուսական համագումարի անդամ ընտրեցին, նրա համագյուղացիները կատակով ասում էին. «Նա աստծուն չի հավատում, տերտերներին հայհոյում է, ահա և նրան ձերբակալել են և քշում են Կարմիր բանակ»:

Պավլյուխինան — անգրագետ գեղջկուհին — հոգով կարողացել էր հասկանալ, թե ինչ են ուզում կոմմունիստները:

Համագումարում դառնորեն գանգատվում էր այրի սալգատկա Անուֆրիվցևան: Արցունքն աչքերին նա պատմում էր, թե որքան ծանր է գյուղի չքավորության կյանքը և կուլակի ճնշումը:

Մի կուլակի կնոջ ուզում էին համագումարի անդամ ընտրել, բայց Անուֆրիվցևան խոսք վերցրեց ընտրական ժողովում և ասաց. «Նրան ընտրելը մի բան չէ: Նա Մոսկվայում կաշխատի միայն իրեն ցույց տալ, բայց վոչ մեզ համար աշխատել. ընտրեցեք չքավորներից»:

«Մեր հոգին շատ է ցավել,— գանգատվում էր նա:— Պետք է հիմա մեր ուսերի ծանր քարը գցել բուրժուազիայի ուսերին»:

Համագումարի պատգամավորուհիների մեջ կային շատ հասակավոր կանայք, ինչպես օրինակ՝ Իվանովո-Վոզնեսենսկու Ալյուշկին գյուղի ընկ. Սիզովան: Այն ժամանակ նա 57 տարեկան էր և արդեն 11 թոռնիկ ուներ: Նա կիսագրագետ էր, բայց վոչ

կիսագրագիտությունը, վոչ հասակը չխանգարեցին նրան իր բոլոր ուժերը նվիրել ընդհանրության օգտին: Փետրվարյան հեղափոխությունից հետո, յերբ եսերները նրանց գյուղում սկսեցին զեմստվո կազմակերպել, Սիզովան թերահավատությամբ էր վերաբերվում դեպի նրանց. «խոսքով վոսկի սարեր խոստացան, իսկ գործով՝ նրանցից մի քսակ հարդ էլ չես ստանա: Լավ է սպասենք և խորհուրդներ կազմակերպենք»: Զեմստվոյում ինքնակոչ կազմակերպիչներին նա ասաց. «խոնարհաբար խնդրում եմ ձեզ՝ հեռանալ»: Իսկ յերբ գյուղացիք ցանկանում էին նորից տանուտեր և գրագիր դնել, Սիզովան նրանց դեմ դուրս յեկավ: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, նա իր վորդու հետ միասին սկսեց աշխատել չքավորական կոմիտեներում, յեռանդագին տանելով հացի հաշվառումը:

Ընկ. Բարինովան ցայտուն կերպով է հիշատակում մի բատրակուհու յելույթը, վորը նկարագրեց կուլակի շահագործման ծանրությունը: Այդ բատրակուհին արդեն հասկանում էր, վոր այդ ծանր կյանքից կարելի յե ազատվել միմիայն ամբողջ աշխատավորության հետ, կեղեքողների դեմ կռիվ մղելու համար, մի կազմակերպության մեջ մտնելով:

Նա հայտարարեց, վոր չնայած իր անգրագիտության, ինքը լավ է հասկանում, թե ինչ է կատարվում իր շուրջը, և յեթե կարիք լինի, նա կվերցնե հրացանը և կգնա ֆրոնտ.

«Նա, ով սրտով թույլ է,— ասում էր նա,— և չի կարող իր ձեռքը հրացան վերցնել, թող գնա ֆրոնտ իբրև գթության քույր և խոսքով վոգևորե ընկերներին»:

Նրա ճառի ժամանակ յեկավ ընկ. Լենինը: Նա նախագահությանը նախազգուշացրեց, վոր չընդհատեն բատրակուհու ճառը: Յեվ մինչև նրա վերջացնելն ինքը կանգնած լսում էր:

Իր վողջույնի ճառն ընկեր Լենինը հիմնեց այդ գեղջկուհու պատասխանի վրա:

Ընկեր Լենինը խոսում էր այն մասին, թե նախկին հեղափոխությունները պարտվում էին, վորովհետև գյուղը չէր պաշտպանում քաղաքին: Բայց այն օրից, յերբ գյուղի չքավորությունը գնաց քաղաքի բանվորների հետ և կազմակերպվեց կուլակի դեմ, մենք անցանք իսկական սոցիալիստական հեղափոխության նոր շրջանը:

Կուլակի դեմ մղվող պայքարը գյուղում քաշում է և կնոջը — գեղջկուհուն: «Պետք է իմանալ,— ասաց ընկ. Լենինը,— վոր հեղափո-

խուԹյունը կախված է նրանից, Թե կանայք փորչափ են մասնակցում։ Այն ժամանակվանից, յերբ կանայք սկսեցին կռվել վոչ միայն ազատուԹյան, այլ և սոցիալիզմի համար (համայնացրած տնտեսուԹյան), սոցիալիստական հեղափոխուԹյան գործը կարելի յե ապահովված համարել։ Կանայք բարձրանում են, սոցիալիզմի հաղԹանակն ապահովված է»,—այսպես վերջացրեց իր ճառը ընկեր Լենինը։

Հետաքրքիր է Սարատովի նահանգի Պետրովսկ գավառի շրջանից համագումար ուղարկված ընկ. Զորինայի հիշողուԹյունները։

«Նիստի դահլիճն է։ Բոլոր տեղերը գրավված են։ Ցածում զետեղված են պատգամավորուհիները, վերևը պատշգամբում՝ հյուրերը։ Համարձակ, աշխուժորեն իրենց տեղերն են գրավում բանվորուհիները. փոքր ինչ յերկչոտ, բայց բանվորուհիներից քաջալերված՝ նստում են և գեղջկուհիները։ Խայտաճամուկ են գլխի Թաշկինակները։ Այստեղ-այնտեղ յերևում են վոչխարի մորԹուց կիսամուշտակներ։ Շատ պատգամավոր-գեղջուհիներ տրեխներով են։ Լսվում է զսպված խոսակցուԹյուն։ Խորհրդակցությունը բաց է անում ընկ. Սվերդլովը։ Տիրում է մեռելային լռուԹյուն։ Լսում են լարված ուշադրուԹյամբ։ Դուրս է գալիս ընկ. Կոլոնտայը։ Նրա հրաբորբոք ճառը ծածկվում է ովացիաներով։ Հետևյալ զեկուցումները լսվում են նույն ուշադրուԹյամբ։ Յուրաքանչյուր զեկուցման առԹիվ դուրս է գալիս բանվորուհիների և գեղջկուհիների անսովոր հռետորների շարան։ Խոսում են իրենց կարիքների մասին։ ՈւրախուԹյամբ վողջունում են յերիտասարդ խորհրդային իշխանուԹյան ձեռնարկած գործերը։

Նիստերից մեկի ժամանակ անսպասելի կերպով յերևում է ընկ. Լենինը։ Յերկարատև, անվերջ ծափահարուԹյուններ։ Ինտերնացիոնալ։ Յեվ վերջապես ընկ. Լենինի ճառը։ Անկարելի յե նկարագրել, Թե հանդիսա արտասանած ճառն ինչպես ընդունեցին պատգամավորուհիները։

Յերբեք չեմ մոռանա մի բանվորուհու դեմք, վորն ինձ նըման՝ պատվարի (բարյերի) մոտ կանգնած, աչքը չեր հեռացնում Իլյիչից։ Նրա աչքերից անընդհատ հոսում եյին արցունքները, վոր նա չեր սրբում, հավանորեն չզգալով նրանց ներկայուԹյունը»։

Պատգամավորուհիները, ընկեր Լենինի զեկուցման առԹիվ արտահայտվելիս, յերդվում եյին իրենց կյանքը դնել սոցիալիզմի համար։ Նիստի վերջում նրանք կարմիր ծաղիկների մի փունջ նվիրեցին նրան։

Ինտերնացիոնալը յերգելու միջոցին նրան մոտեցան յերեք գեղջկուհիներ՝ տրեխներով, կիսամուշտակներով — գյուղի չքավորներից։ Յերբ ընկեր Լենինը ձեռք տվեց նրանց, մեկը ասաց. «Ընկ. Լենինը ձեռք տվավ վոչ Թե ինձ, այլ ամբողջ գյուղացիական չքավորուԹյանը». իսկ մյուսն ավելացրեց. «Կտանք մեր վերջին կաԹիլ արյունը՝ ընկեր Լենինի, հեղափոխուԹյան և մեզ համար»։

Այս խոսքերը ջերմ արձագանք գտան ներկա յեղող կանանց, բանվորուհիների և գեղջկուհիների սրտում։

Վերադառնալով տուն, մեծամասնուԹյունը մտավ Ռ. Կոմ. կուսակցուԹյան (բ) մեջ և ակտիվ մասնակցուԹյուն ցույց տվավ կուսակցական և խորհրդային աշխատանքներին, նոր կյանքի կառուցման աշխատանքներին։

---

9. ԿԻՆ ԲԱԺԻՆՆԵՐԸ

Բանվորուհիների և գեղջկուհիների Համագումարում վորոշվել եր բոլոր մեծ քաղաքներում կանանց շարքերում աշխատանք տանող կոմիսիաներ ստեղծել: Մինչ այդ՝ նման կոմիսիաներ գոյություն ունեյին միայն Մոսկվայում և Լենինգրադում:

1919 թվին կանանց շարքերում աշխատանք տանող կոմիսիաները փոխվեցին բանվորուհիների և գեղջկուհիների շարքերում աշխատանք տանող բաժինների կամ կինբաժինների, ինչպես հետո կոչվեցին:

Կին-բաժինները—դրանք կուսակցական կոմիտեների բաժիններն են. նրանք աշխատում են կուսկոմների անմիջական ղեկավարությամբ: Կին բաժնի վարիչների մեջ ներկայումս շատ բանվորուհիներ կան: Մեր կուսակցության Կենտրոնական կոմիտեյի Կին բաժնի վարիչը նույնպես բանվորուհի յե՝ Համամիութ. Կոմկուսի անդամ—Ջուլհակուհի Արտյուխինան: Առաջ նա «Պրոլետարկա» ֆաբրիկի նախագահն եր և լավ գիտե բանվորուհու կենցաղը:

Կին-բաժինների առաջ դրված խնդիրները սերտ կապ ունեն կուսակցության ընդհանուր խնդիրների հետ: Նրանց գլխավոր նպատակն եր ու կ՚մնա—բանվորուհիների և գեղջկուհիների լայն մասսաներին ակտիվ կերպով մասնակից դարձնել ընդհանուր կռվին և շինարարության աշխատանքին: Քաղաքացիական կռիվների ժամանակ այդ խնդիրը բանվորուհիներին և գեղջկուհիներին խորհրդային իշխանության պաշտպանության ռազմական գործին մասնակից անելու մեջ եր կայանում: Սովի և քայքայման դեմ մղված պայքարի ժամանակ կինբաժինները դեպի այդ կռիվը եյին քաշում հազարավոր բանվորուհիների: Մենք հետո կտեսնենք, թե ինչպես բանվորուհիները, կուսակցության ղեկավարությամբ, հանձինս կին բաժինների՝ հերոսաբար կատարում եյին այդ բոլոր խնդիրները:

Կին-բաժիններն իրենց աշխատանքի մեջ հենվում են կոմկուսի անդամ կին կազմակերպչուհիների վրա: Նրանց ընտրում են ֆաբրիկաների և գործարանների կոմբջիջները. իսկ գյուղերում գավկոմները, վորոնք անմիջական աշխատանք են տանում բանվորուհիների և գեղջկուհիների շարքերում:

Այժմ արդեն բոլոր ֆաբրիկաներում և գործարաններում, ինչպես և մեր Միության վոլոստների մեծ մասում, բանվորուհիները և գեղջկուհիները պատգամավորուհի յեն ընտրվում, վորոնք, ինչպես XII կուսհամագումարում ասել է ընկ. Ստալինը, պետք է դառնան կուսակցությունն անկուսակցական լայն մասսաների հետ կապող փոկը:

Հեղափոխության հենց սկզբից տեղի եյին ունենում կանանց առանձին ժողովներ, քանի վոր կնոջ դարավոր հետամնացության շնորհիվ դեռ շատ բանվորուհիներ և գեղջկուհիներ դժվարանում եյին ազատ արտահայտվել բանվորական և գյուղացիական ժողովներում:

Սակայն վերջին տարիներում կանացի յերկչոտությունն անհետանում է. մենք արդեն տեսնում ենք, թե ինչպես մեր աչքի առաջ աճում են հասարակական աշխատանք տանող բանվորուհիներն ու գեղջկուհիները և ինչպես ավելի ու ավելի տղամարդկանց հետ հավասար, բանիմաց ու համարձակ կերպով իրենց կարծիքն են հայտնում գործարանի և գյուղի ժողովներում:

Կանանց շարքերում աշխատողներն ստիպված եյին իրենց դժվարին աշխատանքը տանել ամենահետամնաց, ամենաճնշված աշխատավոր մասսայի մեջ՝ մեծ մասամբ աննկարագրելի ծանր պայմաններում:

Մյուս կողմից նրանք հարկադրված եյին պարզաբանել նույն կազմակերպության մեջ յեղած ընկերներին հեղափոխության համար կանանց մեջ տարածվելիք աշխատանքի կարևորությունն ու անհրաժեշտությունը: Շատերը դեռ չեյին հասկանում այդ: Յեղել են դեպքեր, յերբ Գավկոմի անդամները, վորոնցից կախված եր կանանց մեջ տարվելիք աշխատանքների ճիշտ գիծը, բոլորովին չեյին ընդառաջում կին բաժիններին, և նրանք քարշ եյին տալիս իրենց խղճուկ գոյությունը: Կուսհամագումարների վորոշումները վոչ մի կերպ չեյին ոգնում:

Կանանց մեջ տարվող աշխատանքների նկատմամբ նման վերաբերմունք ներկայումս շատ հազիվ է պատահում: Ընդհակառակը, կուսակցության նահանգային կոմիտեները մեծ մասամբ ընդառաջ

են գնում կին-բաժիններին, հետաքրքրվում են կանանց շարքերում տարվող աշխատանքով, համարելով այն ընդհանուր կուսաշխատանքի մի անբաժան մասը։

Բացի այդ դժվարություններից, կանանց մեջ աշխատողները՝ մյուս կոմմունիստների նման՝ մահվան վտանգի էյին յենթարկվում սպիտակ գվարդիականների և բանդիտների արշավանքի ժամանակ։

Կանանց մեջ տարվող աշխատանքն ունի գիրքերում զոհված իր] հերոսները։ Օրինակ՝ Պետրոպավլովսկում (Կազակստան), յերբ սպիտակ կազակները վերցնում էյին քաղաքը, զոհվեց կին բաժնի վարիչ ընկ. Ազվոլինսկայան։ Դոնի կին-բաժնի հրահանգչուհի ընկ. Շեչենկոն հրացանը ձեռքին հերոսաբար մարտնչում եր սպիտակ բանդիտների դեմ։ Նա նրանց ձեռքը գերի ընկավ և գազանաբար խողխողվելով սպանվեց։

Լեռնային շրջանի կին-բաժնի վարիչ ընկ. Տիբիլովան՝ լեռնականուհիների կազմակերպչուհին՝ մեռավ սրտի պայթյունից, տալով իր ույժերը արևելքի կնոջը դեպի նոր կյանքը քաշող աշխատանքներին։

1921 թվին բանդիտները գազանաբար սպանեցին Զիգիրինսկ գավառի կին-բաժնի վարիչ ընկ. Յուրչենկոյին և քարտուղար ընկ. Բաբենկոյին։ Նրանք վերադառնում էյին գավառային կանանց համագումարից։ Նրանց այլանդակված դիակները գտնվել են Զիգիրինսկի անտառներում։ Զամոսկվորեցկի շրջանի բանվորուհիների բաժնի կազմակերպչուհի ընկ. Վասիլևան մեռավ իր աշխատանքի միջոցին։ Մի համեստ, նվիրված ընկեր, վորն իր բոլոր ուժերը տվեց բանվոր դասակարգի կռվին։

1922 թվին բանդաները ծրբակալեցին գավկինբաժնի վարիչ ընկ. Կրայմանին, վորը գնում եր Զլատոպոլսկի շրջանը՝ «Մանկան շաբաթն» անցկացնելու։

10. ԸՆԿԱԾՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Այստեղ մենք պետք ե հիշենք նաև Իննեսա Արմանդի և Կոնկորդիա Նիկոլաևնա Սամոյլովի լուսապայծառ հիշատակը, վորոնք մանուկ հասակից իրենց ուժերն ու մտքերը նվիրեցին բանվոր դասակարգի շահերին։ Նրանք շատ են աշխատել նաև կանանց շարքերում։

Ընկ. Իննեսան — կուսակցության հին անդամ—միշտ ընկ. Լենինի և բոլշևիկների հետ ե յեղել։ Ցարիզմի ժամանակ նա բանտարկվել ե, աքսորվել, եմիգրանտ ե յեղել արտասահմանում։ Այնտեղ նա ճանաչեց Իլյիչին և նրա՝ փոքրամասնականների հետ ունեցած պայքարի մեջ դարձավ նրա ամենահավատարիմ կողմնակիցը։

Հոկտեմբերյան հեղափոխությունից առաջ Իննեսան շատ յեռանդ ե նվիրել կանանց բանվորական շարժման հարցին։ Պատերազմի ժամանակ նա մասնակցում եր կանանց միջազգային կոնֆերենցիային՝ իբրև բոլշևիկների ներկայացուցիչ և հրապարակ եր գալիս ընդդեմ իմպերիալիստական պատերազմի, կոչ անելով պրոլետարներին՝ զենքերը դարձնել իրենց յերկրների բուրժուազիայի դեմ։

Միևնույն ժամանակ նա «Բանվորուհի» թերթի խմբագրության արտասահմանյան մասի անդամ եր։

Հեղափոխությունից հետո ընկ. Իննեսան ավելի մոտիկից սկսեց աշխատել բանվորուհիների և գեղջկուհիների մեջ։ Նա լավ եր հասկանում, վոր չի կարելի սոցիալիզմ կառուցել առանց աշխատավորուհիների հսկա բանակի մասնակցության։

Իննեսան ամեն կերպ նպաստում եր կին - բաժինների կազմակերպմանը, և նրանք իրենց արդարացրին։

Նա ստեղծեց բանվորուհիների և գեղջկուհիների պատգամավորական ժողովները։ Նրան ենք պարտական մենք, վոր հեղափոխության օրերից ունենք այնպիսի մի ամսագիր, ինչպես «Կոմմունիստկան» ե, վորը պարզաբանում ե կանանց մեջ տարվող

աշխատանքի բոլոր խնդիրները և օգնում աշխատակիցներին՝ լուծել այդպիսիք։ Ինեսսային շատ էին սիրում բանվորուհիներն ու գեղջկուհիները։

Վո՛րքան միտինգներ, ժողովներ և զրույցներ է կայացրել Ինեսսան բանվորուհիների և գեղջկուհիների հետ հեղափոխության առաջին օրերից, հաշվել անկարելի է։

Նա միշտ ձգտում էր դեպի աշխատավոր կանանց ամենահոծ մասսաները, ագիտացիա էր մղում, կազմակերպում, լուսավորում, այդ մասսաներին էր նվիրում իր մեծ խելքը, իր կամքը՝ դեպի կռիվը, իր վստահությունը՝ դեպի հաղթանակը։

Նա մեռավ 1920 թվին ծանր հիվանդությունից։ Նրա օրգանիզմը խիստ քայքայվել էր տարիների աշխատանքից ու պայքարից։

Մեռավ իր դիրքում նաև Կոնկորդիա Նիկոլաևնա Սամոյլովան՝ Համկոմկուսի հնագույն անդամը և կանանց կազմակերպչուհին, վորը սիրում էր այդ աշխատանքը և վորը տվեց նրան իր բոլոր ուժերը։

Հեղափոխության առաջին օրերից նա անբաժան՝ մասսաների հետ էր։ Ֆաբրիկաներում, գործարաններում, քաղաքում թե գյուղում, միտինգներում թե կոնֆերենցիաներում, ամեն տեղ յերևում էր ընկ. Սամոյլովան, կոչ անելով բանվորուհիներին և գեղջկուհիներին դեպի ընդհանուր պայքար, դեպի համառ աշխատանք։

Ընկ. Կոնկորդիան նկուղային աշխատանքում յեփված մարտիկ էր։ Նա մշտապես հեղափոխական պայքարի մեջ էր, միշտ կլանված աշխատանքով. և այդպես իր վողջ կյանքում։

— Բանվորուհիների բաժնի կազմակերպչական խնդիրները, — սրանք էին՝ մահից առաջ՝ նրա վերջին խոսքերը։

Մեռավ սպիտակ գվարդիականների տարած տանջանքից Եմիլիա Սոլինը — Լենինգրադի Այվազ գործարանի բանվորուհին։ Նա մեկն էր բանվորուհի կոմմունիստկաներից — նկուղային աշխատակից, մինչև վերջը նվիրված մեր կուսակցությանն ու բանվոր դասակարգին։ Աշխատում էր «Բանվորուհի»-ու խմբագրատանը։

Մեր կուսակցությունը շատ բանվորուհիների յե արթնացրել և քաշել դեպի նոր կյանք, դեպի համառ աշխատանք։ Հոկտեմբերյան տասնամյակին հիշենք նրանց, վորոնք այլ ևս չկան մեզ հետ։

Եսերների հրեշավոր չարագործությունը, վորոնք 1919 թվի սեպտեմբերի 25-ին ռումբ նետեցին Մոսկվայի կոմիտեյում, այլ ընկերների հետ խլվեց նաև նվիրված հեղափոխական մարտիկ կանանց մի քանի կյանք։

Ռումբը պայթելիս՝ սպանվեց բանվորուհի Իրինա Իգնատովան — նախկին ներկարարուհի, իսկ պատերազմի ժամանակ՝ կոնդուկտոր։ Հոկտեմբերյան կռիվների ժամանակ ընկ. Իգնատովան կռվում է բարրիկադների վրա և մինչև իր վողբերգական մահը նա անձնատուր է լինում աշխատանքին ու պայքարին։ Նա յեղել է ֆրոնտում, շատ է հոգացել և խնամել կարմիր բանակայիններին, իսկ վերջին ժամանակներն աշխատում էր նաև կանանց մեջ։

Ընկ. Անֆիսա Նիկոլայեվնան — յերկաթուղային շրջանի քարտուղարը, և Անյա Խալդինան, վորն ամբողջովին այրվում էր հեղափոխական կրակով և վորը թողնելով իր ընտանիքը՝ ամբողջովին միացել էր բանվոր դասակարգին, — յերկուսն էլ մեռան ծանր վերքերից, վոր ստացել էին նույն ռումբը պայթելու միջոցին։

Ընկ. Մարիա Վոլկովան — Տրյոխգորնայա մանվածային գործարանի բանվորուհին, վորն այդ ժամանակ բարձր կուս. դպրոցի ունկնդրուհի էր, ծանր վիրավորվեց յերկու վոտից, աջ ձեռքից և զրկվեց աչքից։ «Այս բոլորը դատարկ բաներ են, — ասում էր նա մահվան անկողնում, — յես շուտով կառողջանամ և մեկ աչքով ավելի մեծ չարությամբ կհալածեմ սպիտակ գվարդիականներին։

Յիշենք նաև նրանց, վորոնք համեստությամբ և անձնազոհությամբ օրը օրին լարված աշխատանք տարան ֆաբրիկաներում, գործարաններում և ընկան դասակարգային կռվի ճակատում։

Ընկ. Պեկալին — զուլպա գործող բանվորուհին — գործարանային կոմիտեյի անդամ, Մոսկվայի հեղափոխական տրիբունալի անդամ — մեռավ հիվանդանոցում ուժից վեր աշխատանքից։

Կլավդիա Զինենկովան՝ բանվորուհի կազմակերպչուհի, կորավ դժբախտ դեպքից, յերբ վերադառնում էր ժողովից։

Յեվ վորքա՜ն շատ են նրանք՝ բանվորուհիներ և գեղջկուհիներ, Արևելքի կանայք, մինչև վերջը նվիրված, արի, մինչև վերջ հավատարիմ Հոկտեմբերի մեծ գործին։ Նրանք ընկան դիրքերում, ինչպես հեղափոխության հավատարիմ դստերք — կոմմունիզմի մեծ գործի տոկուն, արի մարտիկներ։

---

11. ԲԱՆՎՈՐՈՒՀԻՆԵՐՆ ՈՒ ԳԵՂՋԿՈՒՀԻՆԵՐՆ ԻՐԵՆՑ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՆԵՐՈՒՄ

Բանվորուհիների և գեղջկուհիների Համառուսական համագումարից հետո նահանգական և գավառական համագումարների մի ամբողջ ալիք անցավ։ Տասնյակ հազարավոր բանվորուհիներ անցան այդ կոնֆերենցիաներով, վորտեղ առաջին ազդակն ստացան դեպի քաղաքական կյանքը։

Այդպիսի կոնֆերենցիաներ տեղի ունեցան Մոսկվայում, Լենինգրադում, Իվանովո-Վոզնեսենսկում, Վյատկայում, Նիժնի-Նովգորոդում։ Ամենուրեք դուրս եյին գալիս բանվորուհիները, ամենուրեք կենդանի մասնակցում կոնֆերենցիայի աշխատանքներին, ամենուրեք յերդվում՝ ամեն ջանք գործ դնել, վորպեսզի թեթևացնեն պրոլետարիատի ծանր կռիվը։

Յեթե սկզբում տեղ-տեղ գեղջկուհիները անվստահությամբ եյին վերաբերվում դեպի զեկուցանողները և խոստանում եյին՝ համագումարը բացվելուն պես՝ մի լավ ծեծել և՛ կոմմունիստներին, և՛ խորհրդային իշխանությանն այն պատճառով, վոր իրենց կարծիքով «նրանք ամեն ինչ վերցնում են գյուղացուց և փոխարենը վոչինչ չեն տալիս», ապա կոնֆերենցիաների վերջում նրանց տրամադրությունն այնպես եր սուր կերպով փոխվում, վոր շատերը մտնում եյին կոմկուսի շարքերը։

Այս կոնֆերենցիայից տուն վերադառնալով՝ գեղջկուհիներից վոմանք գյուղում ընդհանուր ժողով եյին հրավիրում և պատմում նրանց այն բոլորի մասին, ինչ լսել եյին։ Տրված հարցերին, թե ինչու շատ բան այնպես չի արվում, ինչպես իրենք կցանկանային, համագումարին մասնակցող գեղջկուհիները լավ հասկանալով բոլոր դժվարությունները, վորոնց հետ ստիպված են գործ ունենալ կուսակցությունն ու խորհրդային իշխանությունը, պարզաբանում եյին մյուս կանանց, թե գոռալն ավելի հեշտ է, քան այնպես գործ անելը, վոր ամենքի համար լավ լինի։

Մեր լավագույն ընկերներն այդ կոնֆերենցիաներին մեծ նշանակություն տալով, դուրս եյին գալիս այնտեղ հատուկ զեկուցումներով։

1919 թվին ընկ. Լենինը դուրս գալով Մոսկվայի բանվորուհիների կոնֆերենցիայում, կոչ արավ բանվորուհիներին՝ անձամբ աշխատել զարգացնելու այն հիմնարկությունները, վորոնք բանվորուհուն և գեղջկուհուն կազատագրեն տնային տնտեսության բթացնող աշխատանքից։

Ընկ. Սամոյլովան մեր տնտեսության ամենածանր միջոցին Նիժնի-Նովգորոդի և Վոլգայի շրջանի այլ քաղաքներում բանվորուհիների և գեղջկուհիների կոնֆերենցիաներ եր գումարում։

Նա կոչ եր անում բանվորուհիներին և գեղջկուհիներին դեպի աշխատանքի, կռվի ճակատը, այլ և դեպի կռիվ՝ քաղցի ու ցրտի դեմ։ Նա կոչ եր անում բանվորուհիներին և գեղջկուհիներին՝ միահամուռ ուժերով, մասսայի հետ միացած՝ հաղթահարել այն դժվարությունները, վորոնք գտնվում են սոցիալիստական շինարարության ճանապարհին։

Բանվորուհիները համակվեցին նրա կոչով։ Մեծ վոգևորությամբ, կոնֆերենցիան վերջացնելուց հետո, ընկ. Սամոյլովայի ղեկավարությամբ շաբաթնորյակներ եյին կատարում։ Նրանք բանվորուհիների և գեղջկուհիների լայն մասսաներին ցույց եյին տալիս կոմմունիստական աշխատանքի օրինակը, վորն այնքան գնահատում եր ընկ. Լենինը և դեպի վորը կանչում պրոլետարիատին քաղաքացիական կռվի դժվար տարիներում։

12. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱԴԻՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Մի շարք տարիներից հետո, յերբ սկզբում իմպերիալիստական պատերազմը, հետո քաղաքացիական կռիվները խիստ քայքայել եյին ժողովրդական տնտեսությունը, քանդել ճանապարհները, դադարեցրել ֆաբրիկաների և գործարանների աշխատանքը, — առաջ յեկավ յերկրի տնտեսության բարձրացման հարցը։ Խորհրդային իշխանությունը ժամանակ չկորցնելով, անցավ քայքայված արդյունագործության բարձրացման աշխատանքին, վորի համար կենդանի բանվորական ույժ ե պահանջվում։ Պարտադիր աշխատանք մտցվեց, վորին յենթակա եյին նաև 16—40 տարեկան կանայք, գյուղերում՝ գեղջկուհիները, քաղաքներում՝ նրանք, վորոնք չեյին աշխատում ֆաբրիկաներում, գործարաններում և հիմնարկություններում։ Կանանց նկատմամբ մի քանի սահմանափակումներ եյին մտցված։ Որինակ, պարտադիր աշխատանքից ազատվում եյին մեծ ընտանիքին ծառայող տնային տնտեսուհիները։ Կանայք չեյին տարվում ծանր աշխատանքների. վերջերքը ազատվեցին նաև այն կանայք, վորոնց յերեխաները գյուղերում տասներկու տարեկանից իսկ քաղաքում՝ 14 տարեկանից ցածր եյին։ Պարտադիր աշխատանքը չափազանց ծանր եր աշխատավորուհիների համար, վորոնց վրա յեր ընկած ընտանիքների հոգսը՝ պատերազմի ավերածության հետևանքով քայքայված տնտեսության պայմաններում. Թեև այնուամենայնիվ նրանք բարեխղճորեն կատարում եյին այդ պարտականությունը։ Գեղջկուհիները գյուղացիներին հավասար փայտ եյին կտրում, յերկաթուղու գիծը մաքրում, կամուրջների և ճանապարհների նորոգմանը մասնակցում, նաև զորքի սպիտակեղենը կարկատում։

Աշխատանքային պարտադիր ծառայությունը կյանքի մեջ մտցնելիս՝ մեծ դեր խաղացին կոմմունիստկաները և պատգամավորուհիները։ Նրանք որինակ եյին ցույց տալիս անկուսակցական կին մասսաներին։ Աշխատավորների հանրապետության առաջ իրենց պարտքը կատարելիս՝ նրանք առաջին շարքերումն եյին։

Ահա ինչ ե գրում այդ մասին ընկ. Կալիգինան, վորն այն ժամանակ Սոկոլ գործարանի բանվորուհի յեր, իսկ ներկայումս՝ Համամիութ. կոմկուսի Կենտկոմի բան-գեղջ բաժնի վարիչի տեղակալը.

«Սկզբում, յերբ աշխատանքի ճակատում կռիվ հայտարարեցինք, մենք գրեթե ստիպված եյինք լինում բռնի կերպով աշխատեցնել։ Վերցնենք ձյուն մաքրելու պարտադիր աշխատանքը։ Բուքերի պատճառով յերկաթուղագիծը ծածկվում եր ձյունով. ապրանքատար գնացքների յերթևեկությունն ընդհատվում եր, և բնակչությունն ստիպված եր լինում քաղցի ու ցրտի յենթարկվել. բայց շատերը չեյին գիտակցում դրության վողջ ծանրությունը և չեյին ցանկանում իրենք իրենց համար աշխատել։ Բայց հիմա աշխատանքի ճակատում արդեն բեկումն ե նկատվում։

Ընկեր-բանվորուհիներ, յես խորապես համոզված եմ, վոր դուք, ձեր ուսերի վրա ամենից շատ ավերածության ծանրությունը տարած, կհասկանաք մասսաների կազմակերպվելու և միանալու անհրաժեշտությունը և առաջավոր բանվորների հետ կգնաք դեպի վերջին վճռական կռիվը՝ մեր գործի վերջնական հաղթանակի համար։

Այս ճակատում դուք ավելի շատ բան կարող եք անել, քան վորևե ուրիշ տեղ»։

13. ԲԱՆՎՈՐՈՒՀԻՆԵՐԸ ՅԵՎ ԳԵՂՋԿՈՒՀԻՆԵՐԸ ՇԱԲԱԹՕՐՅԱԿՆԵՐՈՒՄ

Բանվորուհիներն իրենց առանձնապես ցույց տվին շաբաթօրյակներում, վոր սկսվել եյին 1919 թվին, Կազանի յերկաթուղային բանվորների նախաձեռնությամբ։ Սկզբներում շաբաթօրյակների նպատակն եր՝ կարգավորել քայքայված փոխադրական միջոցները. բայց հետո նրանք տարածվեցին աստիճանաբար իմպերիալիստական և քաղաքացիական պատերազմներից քայքայված տնտեսության այլ ճյուղերի վրա։

Ընկ. Լենինը շաբաթօրյակներին մեծ նշանակություն եր տալիս։

Նա նրանց կոչում եր կոմմունիստական ձևի աշխատանք։

Շաբաթօրյակներին սկզբում կանայք քիչ եյին մասնակցում։ Շաբաթօրյակներում աշխատող հիմնական մասսան բանվորները և կարմիր բանակայիններն եյին, բայց աշխատանքային հսկա թափը, վորն ընդգրկել եր պրոլետարական մասսաներին, աստիճանաբար անցավ և՛ դեպի կին բանվորուհին։

Կին-բանվորուհիները մեծ մասնակցություն եյին ցույց տալիս այդ աշխատանքին։

Աշխատանքային ճակատի շաբաթում, վորը կազմակերպվել եր 1920 թվին, արդեն կանայք գերակշռում են։ Վառելիքը չեր բավարարում, վորովհետև իմպերիալիստները մեզ կտրել եյին Դոնբասից։ Կանգ եյին առնում ֆաբրիկաները և գնացքները, մանկատներում սառչում եյին մանուկները, հիվանդանոցներում՝ հիվանդները։ Բանվորների և բանվորուհիների վրա յեր ընկել հիվանդանոցներին, մանկական հիմնարկություններին, գործարաններին և յերկաթուղուն վառելիք հասցնելու ծանր հոգսը։

Նրանք փայտը բարձում եյին սղոցելու վայրում և դատարկում նշանակված տեղում։ Այնտեղ, ուր փայտը փոխադրելու այլ միջոցի բացակայության պատճառով, վագոնետկաներով եր փոխադրվում, կանայք շաբաթօրյակներին այդ վագոնետկաները

ռելսերի վրայով առաջ եյին մղում։ Ահա ինչպես ե նկարագրում բանվորուհի Զուպրակովան բանվորուհիների մասնակցությունը՝ Կազանում անցկացրած աշխատանքի շաբաթում։

«Յերբ իմացանք աշխատանքի շաբաթի մասին, և թե ինչու յե նա կազմակերպվում, մենք շատ ցանկացանք մեր ընկեր բանվորուհիների հետ կռվել մեր ընդհանուր թշնամու-տնտեսական ավերածության դեմ։

Ապրիլի 22-ին, մենք, 111 բանվորուհիներս մեր արհեստանոցից գնացինք Ադմիրալտեյսկի սլոբոդայի յենթակայարանը և սկսեցինք վագոնից փայտը դատարկել։ Աշխատում եյինք ուրախ, մեծ հաճույքով, և չորս ժամում 16 վագոն փայտ դատարկեցինք»։

Կոստրոմայում մայիսի մեկին փայտ բարձելու շաբաթյակում 775 բանվորուհի յեր աշխատում։ Մոսկվայում ևս շաբաթօրյակներին կենդանի մասնակցություն եյին ցույց տալիս կանայք, վորոնք դատարկում եյին փայտով լի վագոնները, մաքրում փողոցները, մանկական գաղութների համար շորեր կարում։

Հասարակական հիմնարկությունների բակերը, հիվանդանոցները, դպրոցները, զինվորական հիվանդանոցները մաքրելը հաճախ կատարվում եր բանվորուհիների նախաձեռնությամբ։ Այսպես ծագեցին — այսպես կոչված կանանց շաբաթօրյակները։ Աշխատանքըն ընթանում եր աշխույժ ու համերաշխ։ Մեկն աշխատում եր գերազանցել մյուսին։ Յերեխաների, հիվանդների և կարմիր բանակայինների կարը, լվացքը և կարկատանը նույնպես կատարվում եյին կանանց շաբաթօրյակներում։ Բանվորուհիները կենդանի մասնակցություն եյին ցույց տալիս այս աշխատանքում։

Կոստրոմայի նահանգում նույնպես կանանց շաբաթօրյակներ եյին կատարվում. ահա ինչ ե գրում այդ մասին Կոստրոմայի կին-բաժինը. «Արդեն մի քանի շաբաթ ե՝ մենք շաբաթօրյակներ ենք կատարում։ Սկզբում կանայք մասնակցում եյին ընդհանուր շաբաթօրյակներին, դիմելով բանջարեղեն պատրաստելու, վագոններ բարձելու, դատարկելու, փայտ պատրաստելու և այլ աշխատանքներին։ Հետո կանանց առանձնացրին՝ զինվորական հիվանդանոցների աշխատանքի համար։ Նրանք մաքրում եյին իրերը, լվանում, կարկատում սպիտակեղենը, ամեն տեսակի օգնություն հասցնում եյին հիվանդ և վիրավոր կարմիր բանակայիններին. կերակուր բաժանում, նրանց համար նամակներ եյին գրում, լրագիր կարդում, զրույցներ անում և զանազան հանձնարարություններ կատարում»։

Մեծ վոգևորությամբ անցավ 1920 թվի մայիսի մեկին համամիութենական մասշտաբով կազմակերպված շաբաթօրյակը: Կազանի մեխանիքական լվացարանում հարյուր փութ լվացք լվացին կարմիր բանակայինների համար: Աշխատում էին 2 հերթով՝ 6-ական ժամ:

«Աշխատանքի դուրս յեկան բոլորը՝ ինչպես մի մարդ, — գրում է այդ մասին մասնակիցներից մեկը: Շաբաթօրյակն անցավ ուրախ և աննկատելի: Աշխատանքից հետո հանդիսավորությամբ գնացինք աշխատանքի արձանի բացմանը: Այնտեղ մենք անցկացրինք մայիսի մեկի լուսավոր շաբաթօրյակը»:

1920 թվի մայիսի մեկի շաբաթօրյակում բանվորուհիները մասնակցում էին ընդհանուր բնույթ կրող աշխատանքներին:

Միքանիխոն աշխատում էին հենց իրենց աշխատանքի տեղում, մյուսները՝ փայտ էին դատարկում. միայն մի քանի տնային տնտեսուհիներ աշխատում էին մանկատներում, վորտեղ մանուկների համար շորեր և սպիտակեղեն էին կարում:

Մայիսմեկյան շաբաթօրյակում Մոսկվայի բանվորուհիները գլխավորապես աշխատում էին իրենց ձեռնարկություններում: «Պոստավշչիկ» գործարանն այդ որը 3000 հատ սպիտակեղեն պատրաստեց, իսկ Զամոսկվարեցկի շրջանի արհեստանոցները — 200 հատ: Բաումանսկի շրջանի «Մարս» գործարանի բանվորուհիներն անտառում փայտ ու ցախ էին հավաքում:

«Բանվորուհիներին համակած ուրախ և առույգ տրամադրությունն անդրադառնում էր մյուս սակավ գիտակից բանվորուհիների վրա: Աշխատանքն անցնում էր համերաշխ, տոնական, — այսպես են գրում լրագրները Մոսկվայի շաբաթօրյակի մասին: Կանանց քանակն առանձնապես շատ էր 1920 թվի մայիսի մեկի շաբաթօրյակում, և այլ տեղերի աշխատանքային շաբաթօրյակներում, վոր կատարվում էին ամեն տեղ: 1920 թվի դեկտեմբերին Մոսկվայի շաբաթօրյակներին մասնակցող կանանց ընդհանուր թիվը հասավ 20837-ի, վորը կազմում է մասնակցողների ընդհանուր թվի 30%-ը: Վոլոգդայում, Չելյաբինսկում, Նովգորոդում, Լենինգրադում և նրա շրջաններում — ամեն տեղ նույն պատկերն է:

Հետ չէյին մնում և գեղջկուհիները: Նրանք ևս շաբաթօրյակներ էին կատարում հիվանդանոցների և մանկական հիմնարկությունների մեջ փայտ հավաքելու, հասարակական հիմնարկությունների շենքերը մաքրելու, կարմիր բանակայինների ընտանիքներին

օգնություն ցույց տալու համար: Առաջին գնում էին գեղջկուհի-պատգամավորուհիները՝ մնացածներին իրենց օրինակով վարակելու համար:

Այսպես օրինակ՝ Ստարոյատչինսկի վոլոստի Ցելարուժսկի գավառի շաբաթօրյակներում կարմիր՝ բանակայինների ընտանիքներին օգնություն ցույց տալու համար աշխատում էր 40—120 գեղջկուհի: Նրանք անձամբ նորոգում էին տանիքները, մաքրում գոմերը, անասունների աղբը բակից հանդը տանում: Գեղջկուհիներն աշխատում էին ուրախ, սիրով, կատակներով: Նրանք շատ ուրախ էին, վոր կարող են վորևէ բանով օգնել կարմիր բանակայինի ընտանիքին:

Չելյաբինսկ նահանգի Զումլյակ գյուղում մայիսի մեկի շաբաթօրյակում մանկատան բացման բոլոր աշխատանքը կատարեցին, տունն սպիտակացրին, հատակները, պատուհանները լվացին, բակը մաքրեցին, աղբը դուրս տարան: Շաբաթօրյակի վերջում բանվորուհիները և գեղջկուհիները Ինտերնացիոնալ և այլ հեղափոխական յերգեր յերգելով՝ ցրվեցին իրենց տները:

Ուրալում Սերեբրյանսկ վոլոստի կին բաժինը կազմակերպել էր փայտ պատրաստողների ջոկատ, վորը փայտեղենի գործում զարգացրեց աշխատանքի բարձր արտադրողականություն: Սմոլենսկի նահանգի Յուխնովսկի գավառի Կլիմովա գյուղում գեղջկուհիների համագումարն աշխատանքների վերջում շաբաթօրյակ կազմակերպեց տեղի մանկական կոմմունայում:

Ճակատին մոտ տեղերում գեղջկուհիներն իրենց ամբողջ ուշադրությունը կենտրոնացնում էին կարմիր բանակայիններին ծառայելու վրա: Շաբաթօրյակներում նրանք կարում էին խոտի ներքնակներ ու սպիտակեղեն՝ հիվանդանոցի համար, լվանում էին կարմիր բանակայինների շորերը, հիվանդ և վիրավոր կարմիր բանակայիններին օգնություն ցույց տալիս:

Մի քանի գյուղերում գեղջկուհիներն իրենց նախաձեռնությամբ իրենց բրդից շարֆեր էին գործում կարմիր բանակայինների համար:

Կնոջ համար այնքան էլ հեշտ չէր աշխատանքի ճակատում մասնակցել հասարակական-պրոլետարական աշխատանքին: Սա խլում էր նրա հանգստյան վերջին կարճ ժամերը: Դա անդրադառնում էր նրա ընտանիքի տնտեսության վրա, վորն այն ժամանակ այնքան էլ հեշտ չէր կարգի բերել:

Մեծ գիտակցություն էր հարկավոր՝ այդ բոլոր դժվարությունները հաղթահարելու համար։

Աստիճանաբար նա դադարում է հաշվի առնել բոլոր դժվարությունները։ Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, բանվորների հետ միասին՝ նա մասնակցում է ավերածության դեմ մղվող կոլեկտիվ աշխատանքին։ Նա ձրիաբար տալիս է իր աշխատանքը հանրապետության համար փոխադրության ամենադժվար ժամանակը, երբ ճանապարհին սառչում էին շոգեկառքերը, աշխատում վառելիքով ապահովել ֆաբրիկաները, գործարանները, կարգի բերել մանկատները, դպրոցները, մսուրները։ Նա այս աշխատանքը տանում է տղամարդուն հավասար, նա իրոք աշխատում է կոմունիստորեն, ինչպես վայել է Հոկտեմբերյան մեծ հեղափոխության դստերը։

---

14. ԲԱՆՎՈՐՈՒՀԻ ԵՎ ԳԵՂՋԿՈՒՀԻ-ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒՀԻՆԵՐԸ

Բանվորուհիների և գեղջկուհիների պատգամավորական ժողովները կոմունիզմի նախնական դպրոցներն են՝ հետամնաց բանվորուհիների և գեղջկուհիների համար։ Բանվորուհիների և գեղջկուհիների պատգամավորական ժողովները կոմ. կուսակցության, խորհրդային իշխանության, ֆաբրիկաների ու գործարանների բանվորուհիների և գյուղի գեղջկուհիների լայն մասսաների հետ միացնող օղակն է։

Բանվորուհիների և գեղջկուհիների պատգամավորական ժողովները գոյություն ունեն հեղափոխության հենց սկզբից։ Նրանց աշխատանքները ղեկավարում են բանվորուհիների և գեղջկուհիների բաժինները։ Նրանք ամեն տարի վերընտրվում են, և բանվորուհիների ու գեղջկուհիների նորանոր շերտեր անցնելով նրանց միջով, քաղաքականապես գրագետ են դառնում և ձեռք բերում հասարակական փորձառություն։

Հեղափոխության սկզբից պատգամավորական ժողովները հետևում էին մի նպատակի—միացնել կուսակցությունը և խորհրդային իշխանությունը աշխատավոր կանանց լայն մասսաների հետ։ Բայց հեղափոխության յուրաքանչյուր առանձին շրջանում պատգամավորուհիներն այդ իրականացնում էին տարբեր միջոցներով։

Հեղափոխության տաս տարվա ընթացքում նրանք բազմապիսի աշխատանքներ են կատարել։

Քաղաքացիական կռիվների, քաղցի և տնտեսական քայքայման ժամանակ պատգամավորուհիները մասնակցում էին բանվոր դասակարգի ընդհանուր կռվին։ Շատերը գնացին ճակատ՝ ինչպես կարմիր քույրեր, աշխատում էին պարենավորման խմբերում, գնում էին հունձ անելու, սովյալներին օգնություն հասցնելու։ Պիտերում Կրոնշտատի դեպքերի ժամանակ մոբիլիզացիայի ենթարկվեցին 1300 պատգամավորուհիներ։ Նրանք բանտիտիզմի դեմ մղվող կռիվների մեջ էլ առնվեցին։

Միթե հանաք բան էր քաղաքացիական կռիվների ծանր ժամանակներում վորևե մսուր, մոր ու մանկան տներ սարքել։ Իսկ բանվորուհիները հաղթահարեցին այդ դժվարությունները, և չկա խորհրդային աշխատանքի վորևե ասպարեզ, վորտեղ նրանք լիակատար իրավունքով պատվավոր տեղ չգրավեն։ Պատգամավորուհիներն աշխատում են և՛ ժողդատարաններում, իբրև ժողատենակալներ և դատական կատարածուներ։

Հեղափոխության տասը տարվա ընթացքում պատգամավորուհիները յեղել են լավագույն օրինակը բանվորուհիների համար, վորոնք նրանց հետևից գնացել են լիկկայանները և կիսագրագետների դպրոցները։

Հիմա, յերբ մենք սոցիալիզմի կառուցմանն ենք հասել և արտադրության կազմակերպմանը, աշխատանքի արտադրողականության բարձրացման խնդիրներն առաջնակարգ տեղ են գրավում. բանվորուհիների պատգամավորական ժողովները տեղի յեն ունենում հենց ձեռնարկության մեջ։ Այս բոլոր հարցերը գործնականորեն քննության են առնվում պատգամավորուհիների կողմից։

1926—27 թվին ամբողջ Միության մեջ ընտրվել է 620.006 պատգամավորուհի. նրանցից 96610-ը՝ բանվորուհիներ։ Մոտավորապես յուրաքանչյուր տասը բանվորուհուց—մեկ պատգամավորուհի։ Բանվորուհիներն իրենց պատգամավորական ժողովներում զեկուցումներ են լսում, թե կուսակցությունը և խորհրդային իշխանությունն ինչ անելիքներ ունին ներկա պայմաններում։ Նրանց ծանոթացնում են խորհրդային, արհեստակցական, կոոպերատիվ շինարարության խնդիրների հետ։

Հեղափոխության տասը տարվա ընթացքում պատգամավորական ժողովներն աստիճանաբար մեծանալով՝ դարձել են հասարակական միավորներ, վորոնք՝ կուսակցության հերթական խնդիրները կյանքում կիրառելիս՝ խոշոր դեր են խաղում։

Խորհուրդների վերջին վերընտրություններին պատգամավորուհիները մեծ մասնակցություն ունեյին, կուսակցության և խորհրդային իշխանության ոգնականներ հանդիսանալով։ Աշխատանքի արտադրողականության, բարձրացման խնդրում ևս պատգամավորուհիներն առաջին սկսողներն եյին։

Պատգամավորական ժողովների առաջ ներկայումս դրված է մի խնդիր—ոգնել կոմ. կուսակցությանը և խորհրդ. իշխանությանը՝ կյանքի մեջ մտցնելու գների իջեցումն և խնայողության ռեժիմը։

Ներկայումս գործնական աշխատանքների համար նրանց դնում են խորհուրդների սեկցիաներում և զանազան պրոֆեսիոնալ, կոոպերատիվ հանձնաժողովներում, վորոնք աշխատում են ձեռնարկությունների կից։ Սովորաբար քաղխորհրդի սեկցիաներում ներկա յեղողների կեսից ավելին կարմիր թաշկինակներով կինպատգամավորներն են։ Նրանք զեկուցումներ են տալիս կատարած աշխատանքների մասին և զանազան առաջարկներ անում։

Մոսկվայի շրջանային խորհուրդների սեկցիաներում 1925/26 թվին աշխատում եյին 4000 պատգամավորուհիներ, իսկ Մոսկվայի խորհրդի սեկցիաներում—500։ Տուլայում 1924/25 թվին 514 պատգամավորուհիներից 495-ն աշխատում եյին քաղխորհրդում, պրոֆօրգաններում և կոոպերացիայում։

Լենինգրադի Մոսկովսկո-Նարվսկու շրջանում նույն թվին 3863 պատգամավորուհիներից 1033-ը կցված եյին փորձնական աշխատանքներին, իսկ մնացածներն աշխատում եյին գործարանային կոմիսիաներում և այլ հասարակական կազմակերպություններում։

1924/25 թվականին ամբողջ Խորհրդային Միության մեջ 167.298 պատգամավորուհիներից հասարակական աշխատանքների լծված եյին 41.410 հոգի, վորոնցից խորհուրդների սեկցիաներում աշխատում եյին 24,1 %, պրոֆօրգաններում—42,1 %, կոոպերացիայում—16,4 % և այլ տեղերում—17,4 %։

Ֆաբրիկաներում պատգամավորուհին ամենասերտ կապ ունի մասսաների հետ։

Բացի այդ, նա իր կատարած գործի համար հաշիվ է տալիս ֆաբրիկա-գործարանային ընդհանուր ժողովին և բանվորուհիների հետ կապ է պահպանում ձեռնարկության կյանքի բոլոր առօրյա խնդիրներում։

Այն ձեռնարկություններում, վորտեղ աշխատանքը կանանց շարքերում լավ է տարվում, պատգամավորուհիներն այնպես սերտ են կապված բանվորուհիների հետ, վոր վերջիններս ամեն տեսակ տեղեկություններ ստանալու համար վազում են պատգամավորուհիների մոտ, նույն իսկ վարպետի ոգնականի դեմ ունեցած գանգատի և այլ մանր խնդիրների համար։

Պատգամավորուհին ձեռնարկության ակտիվ մասնակիցն է դառնում, կուսակցության ազդեցությունը լայն մասսաների վրա տարածողը, կուսակցության և մասսաների միջև իսկական մղիչ կապը, ինչպես XII-րդ համագումարում ասում է ընկ. Ստալինը։

Ըստ հասակի՝ պատգամավորուհիները գլխավորապես 25-ից մինչև 40 տարեկան կանայք են։ Ընտանեկան դրությամբ մեծ մասամբ՝ ամուսնացածներ։ Ամենագործունյաները՝ այրիներն են և աղջիկները, վորոնք ապրում են սեփական աշխատանքով, այսինքն՝ կանայք, վորոնք տնտեսապես կախումն չունեն ամուսիններից։

Բանվորուհի-պատգամավորուհիների մեջ կան այնպիսիները, վորոնք արտադրական մեծ փորձ ունեն (ստաժ). կան աշխատանքի հերոսուհիներ, վորոնք 25 տարի աշխատել են կայանքի վրա։ Կան և այնպիսիները, վորոնք թեև նոր են աշխատանքի անցել, բայց արդեն ցույց են տվել իրենց բավարար ակտիվությունը։

Բանվորուհի պատգամավորուհիների մեծամասնությունն անկուսակցական է, բայց յերբեմն պատգամավորուհի յեն դառնում նաև կուսակցականները։

Հեղափոխության 10 տարվա ընթացքում շատ բանվորուհիներ, անցնելով պատգամավորական ժողովների դպրոցով, մեծացել են և դարձել հասարակական խոշոր գործիչներ։ Անգրագիտությունից և քաղաքականապես հետամնացությունից նրանք դարձել են բանվոր դասակարգի գիտակից, կուլտուրական ներկայացուցիչներ։ Նրանք վստահելի ոգնականներ են կուսակցության, խորհրդային իշխանության, պրոֆմիությունների և կոոպերացիայի աշխատանքների համար։

Նրանցից շատերը պատգամավորուհի լինելու ժամանակամիջոցը լրացնելուց հետո մտնում են կուսակցության մեջ։ 1925-26 թվին Մոսկվայի մանածագործային շրջանում և Մոսկվայի նահանգում պատգամավորուհիների 30% մտել է կուսակցության մեջ. Մոսկվայում մտել է 40%-ը, Լենինգրադում՝ պատվիրակային ժողովներն արձակելու միջոցին՝ 40% արդեն մտել եր կուսակցության շարքերը։

Մեծ Հոկտեմբերի տասնամյա տարեդարձին բանվոր-պատգամավորուհիներն ավելի յեն սեղմում իրենց շարքերը լենինյան կուսակցության շուրջը։ Նրանք Լենինի պատգամները տանում են դեպի բանվորուհիների լայն մասսաները։ Վողջ բանվոր դասակարգի և նրա կուսակցության հետ նրանք կառուցում են այն լուսավոր ապագան, վորը միայն բանվորուհու համար կատարյալ ազատություն կբերի բոլոր ծանրություններից։

Գեղջկուհիները նույնպես ունեն իրենց՝ գեղջկուհի պատգամավորուհիների պատգամավորական ժողովները։ Գեղջկուհիների պատգամավորական ժողովների մեջ մտնում են չքավոր և միջակ գեղջկուհիները, գյուղատնտեսական բանվորուհիները և բատրակուհիները։ Գեղջկուհի-պատգամավորուհիներ կան 385.890, բատրակուհիներ — 26.150. գեղջկուհի պատգամավորուհիների մեծ մասը անգրագետ և կամ կիսագրագետ։

Գեղջկուհիները պատվիրակուհիներին ընտրում են իրենց գյուղի ընդհանուր ժողովներում։ Նրանք այդ պատվիրակուհիներին հրահանգ են տալիս՝ պաշտպանել գեղջկուհիների շահերը։

Հեղափոխության սկզբում, յերբ պատգամավորական ժողովները նոր եյին սկսել աշխատել, պատգամավորուհի-գեղջկուհիները լավ չեյին հասկանում իրենց անելիքները։ Նրանք ամաչում եյին ժողովներում արտահայտվել և քիչ ոգուտ եյին տալիս իրենց գյուղի կանանց։ Այժմ գեղջկուհիների պատգամավորական ժողովները հասարակական միավորներ են։

Գեղջկուհի-պատգամավորուհիներին պետք է հաշվի առնել։ Նրանք պաշտպանում են իրենց ընտրողների շահերը, ստիպում են, վոր իրենց լսեն, դուրս են գալիս զանազան ժողովներում հասարակական հարցերի շուրջը։

Այն գեղջկուհիները, վորոնք արդեն պատգամավորուհի յեն յեղել, տարբերվում են համագյուղացի գեղջկուհիներից իրենց բանիմացությամբ։ Նրանք լավ հասկանում են գրագիտության նշանակությունը, ոգնում են գյուղերում լիկկայաններ, խրճիթ-ընթերցարաններ կազմակերպելուն։ Գրագետ պատգամավորուհիները գրում են թերթերում, հանդեսներում։ Պատգամավորուհի-գեղջկուհիները շատ են հետաքրքրվում գյուղատնտեսական գիտելիքներով։ Հարյուրավոր պատգամավորուհիներ արդեն մտել են Լենինյան կուսակցության շարքերը։ Գեղջկուհի-պատգամավորուհիները գեղջկուհիների լայն մասսաներին ամենքից լավ են կապում կուսակցության հետ։

Պատգամավորուհիները շատ են ոգնում գեղջկուհիներին գյուղատնտեսության բարելավման գործում։ Պատգամավորուհիները ժողովներում գյուղատնտեսներից լսելով, թե ինչպես պետք է կաղամբ աճեցնել, տաքացնել գոմերը փեթակներ, սարքել և այլն, այդ ամենը հաղորդում են գեղջկուհիներին, ամեն ինչ սովորեցնում նրանց։ Պատգամավորուհիները շատ են ջանք գործ դնում տնտեսությունը բարելավելու համար։ Վորոշ դեպքերում նրանք

առաջինն են լինում հողը համայնորեն մշակելու գործում։ Օրինակ՝ կան շրջաններ, ու պատգամավորուհիները վորոշել են համայնական ձևով մշակել բանջարանոցները, վորի համար գյուղատնտես են բերել, սերմեր ստացել և համայնական բանջարանոց ստեղծել։

Պատգամավորուհիները մեծ հետաքրքրությամբ են վերաբերվում մանկակ. մսուրներ և հրապարակներ կազմակերպելու գործին։ Վերջին տարիներում այս հիմնարկությունների աճումը վորոշ չափով պարտական է պատգամավորուհիների ակտիվ աշխատանքին։ Նրանք միջոցներ են գտնում և ամեն կերպ բնակչությանը դրդում մասնակցել մանկական հիմնարկություններ կազմակերպելուն։ Վորոնեժի նահանգի Պոդգորյանսկի շրջանում պատգամավորուհիներն իրենց ուժերով մի հողամաս են մշակել, ցանել, վորը վերցրել էյին Փոխոգկոմից, փող են հավաքել և այդ միջոցներով կոնսուլտացիա բացել։ Յեկող տարի նրանք մսուր կը բանան, վորի համար ամեն միջոց գործադրելով, փող են ձեռք բերում։

Գեղջկուհի-պատգամավորուհին նոր ձևով դաստիարակելով իր յերեխաներին, որինակ է ծառայում քույր-գեղջկուհիների համար։ Լինում են դեպքեր, յերբ նա 20-30 վերստ հեռավորությունից յերեխային կոնսուլտացիայի յե տանում, վորպեսզի բժշկից խորհուրդ ստանա։ Նա վոչ միայն աշխատում է իր խրճիթում կարգ և մաքրություն պահպանել, այլ և լավ որինակով ազդել հարևանների վրա։

Գեղջկուհի-պատգամավորուհիները շատ են հետաքրքրվում դպրոցական խորհուրդների աշխատանքներով. նրանք գյուղացիներին ամեն կերպ դրդում են՝ դպրոցները նորոգելու, դպրոցներին փայտ մատակարարելու, աջակցելու դպրոցական գործիչներին։ Նրանք ոգնում են լիկկայանների աշխատանքը վարելու և, առաջին հերթին, աշխատում են վերացնել իրենց անգրագիտությունը։ Վերջին տարիներում նկատվում է, վոր գրագետ պատգամորուհիները մեծ ցանկություն ունեն շարունակել իրենց կրթությունը. նրանք գրվում են գյուղատնտեսական խմբակներում, իսկ յերբեմն իրենք են կազմակերպում այն, գնում են շրջիկ դըպրոցները, խմբակներ են կազմակերպում՝ թերթեր, հանդեսներ կարդալու։

Շատ պատգամավորուհիներ աշխատում են գյուղում, պաշտպանելով չքավորների շահերը։ Հողային հանձնաժողովների միջոցով պատգամավորուհիներն անց են կացնում այնպիսի միջոցներ, վորոնք գալիս են ոգնելու գեղջկուհիներին. որինակ՝ մինչև գույքի բաժանումը, յերեխաներին և կանանց հաց են մատակարարում, արգելում են նրանց դուրս անել խրճիթից։

Գեղջկուհիներն աշխատում են նաև փոխադարձ ոգնության կոմիտեներում։

Գեղջկուհիներին դեպի այդ կոմիտեները գրավելը, նրանց շուրջը կազմակերպելը—ներկայումս մեր կուսակցության կարևոր խնդիրներից մեկն է։ Սա դժվար խնդիր է, վորովհետև կոմիտեներն իրենք դեռ լավ չեն ըմբռնում իրենց անելիքները գեղջկուհիների նկատմամբ։ Կոմմունիստական կուսակցությունը շատ անգամ է ցույց տվել նրանց այն աշխատանքը, վորը պետք է կատարել՝ չքավոր գեղջկուհիների վիճակը թեթևացնելու համար։ Մինչև հիմա դեռ այնպիսի դեպքեր են լինում, վոր փոխադարձ ոգնության կոմիտեյի նախագահը, վարժվողների աշխատանքի նկատմամբ, գեղջկուհիների կազմակերպչուհուն այսպես է պատասխանում. «Պատգամավորական ժողովից մի վարժվող կար, բայց մենք նրան ինչ վոր աչքաթող արինք»։ Այդ պատգամավորուհուն վոչ մի անգամ ժողովի չեն հրավիրել, նրան չեն քաշել գործնական աշխատանքի, մինչդեռ գեղջկուհուն հեշտությամբ կարելի յե հետաքրքրել այդ աշխատանքով։ Չէ՞ վոր Փոխոգկոմի աշխատանքներն այնքա՜ն մոտ են, այնքա՜ն հասկանալի ամեն մի գեղջկուհու համար։

Վերջին տարիները, համենայն դեպս, կոմիտեների աշխատանքներն սկսում են լավանալ, վորի հետ միասին այնտեղ աճում է նույնպես և գյուղացիական չքավոր և միջակ մասսայի, նրանց թվում և կանանց մասնակցությունը։ Փոխոգկոմում աշխատող պատգամավորուհիներն ամեն կերպ աշխատում են ոգնել չքավոր կանանց. հաշվառում են այրիներին, ոգնում են նրանց՝ հողը մշակելու, ոգնում են նույնիսկ փողով, համայնորեն հողի մշակման գործ են կատարում մանկական հիմնարկությունների ոգտին։ Ահա, որինակ, Լուգանսկ շրջանի Փոխոգկոմում աշխատող պատգամավորուհիները հեղինակություն են ձեռք բերել ամբողջ գյուղերում, վորովհետև իրենք անձամբ մյուս գյուղացիների հետ հավաքել են չկալսած ցորենը, վորը պետք է փտեր դաշտում։

Այնտեղ, ուր գեղջկուհիները յեռանդով մասնակցում են հասարակական աշխատանքներին, նրանց սիրով Փոխոգկոմ են ընտրում։ Յերբեմն նախագահ էլ են ընտրվում, թեև շատ չնչին

տոկոս են կազմում. ընդամենը 2,3%: Սակայն դրա փոխարեն Փոխօգկոմի նախագահ-գեղջկուհին փոխօգկոմի գործունյա աշխատակիցն է դառնում: Օրինակ, Լենինգրադի նահանգի Տրոցկու գավառի Վեգխսարովսի շրջանի—Փոխօգկոմի գեղջկուհի նախագահը անդամավճարների 90%-ն ինքն է հավաքել, վորն՝ ինչպես հայտնի յե՝ այնքան էլ հեշտ չէ անել:

Լենինգրադի նահանգում 74 կանայք Փոխօգկոմների նախագահուհիներ են: Վլադիմիրսկու նահանգում 750 գեղջկուհիներից, վորոնք ընտրված են փոխերում, 7-ը նախագահ են: Կալուգայի նահանգում փոխօգկոմի 358 գեղջկուհի անդամներից 24-ը նախագահ են ընտրվել:

Այնտեղ, ուր կանայք աշխատում են փոխօգկոմներում, գեղջկուհիների համար օգնություն են ձեռք բերում:

Օրինակ՝ Մոսկվայի նահանգի Պավլովսկի գյուղփոխօգկոմին կից ձեռնոց գործելու տնայնագործական արտել կա, վորն ընդգրկել է գեղջկուհիների համարյա կեսը:

Բրյանսկի նահանգում փոխօգկոմների միջոցով ձեռք են բերված վեց հատ կարի մեքենա գյուղյերիտ դպրոցի համար:

Աշխատանքի պայմանագիր կազմելիս՝ մի քանի փոխօգկոմներ օգնություն է ցույց տալիս բատրակուհիներին, ինչպես և նպաստ՝ մի քանի անգործ բատրակուհիների:

Այս բոլոր աշխատանքը կատարվում է գեղջկուհի-պատգամավորուհիների սերտ մասնակցությամբ:

Հեղափոխության տաս տարվա ընթացքում մեր կուսակցության Կենտրոնական կոմիտեն շատ անգամ է մատնացույց արել պատգամավորուհի գեղջկուհիների մեջ աշխատելու կարևորությունը: Կուս. համագումարները վորոշումներ են հանել՝ նրանց ամեն կերպ օգնելու անհրաժեշտության մասին: Չի կարելի ասել, թե բոլոր կուս. բջիջները, վորոնց կից աշխատում են պատգամավորական ժողովները, միատեսակ լավ են կատարում պատգամավորուհիների շարքերում աշխատելու վերաբերմամբ կուսակցության կայացրած վորոշումները: Հիմա յել լինում են դեպքեր, յերբ ամբողջ տարին բանգեղջբաժնի շրջանային հրահանգչուհի պատգամավորուհիների շարքերում տարած աշխատանքի մասին զեկուցում չի տրվում: Բացի այդ, իրենք՝ շրջհրահանգչուհիներն ևս, հաճախ գանգատվում են, թե այնքան են ծանրաբեռնված, վոր չեն հասցնում բոլոր աշխատանքները: Պատգամավորուհիների

աշխատանքը դժվարանում է և նրանով, որ իրենք գեղջկուհիները խիստ ծանրաբեռնված են ընտանեկան գործերով:

Դժվարությամբ է վերանում նաև գյուղացիների կողմից դեպի «կնանոց անկախությունն» ունեցած վերաբերմունքը: Տխուր յերևույթ է, պետք է խոստովանել, որ հեղափոխության տասներորդ տարում պատահում է, որ գյուղացիք արգելում են իրենց կանանց գնալ պատգամավորական ժողովները, և դեռ ծեծում են, յեթե նրանցից վոմանք չեն լսում: Հիմա յել, յերբեմն դեռ արհամարհանքով են վերաբերվում դեպի հասարակական աշխատանք տանող կնոջը և նույնիսկ չեն հայտնում նրանց ժողովների մասին: Ի՞նչ ասել պատգամավորուհիների մասին, յերբ մի շրջանում տեղի յե ունեցել այսպիսի մի դեպք. խորհրդի անդամ գեղջկուհիներին դուրս են արել խորհրդի ժողովից: Դըժվար է այդ պայմաններում «խոհարարուհուն» կատարել Իլյիչի պատգամները և սովորել յերկիր կառավարել:

Այնուամենայնիվ գեղջկուհին տարեց տարի աճում է ու այլևս այն չէ, ինչ վոր եր հեղափոխության առաջին օրերին: Ահա Կասիմիխան—գյուղական հասարակական գործչուհին: Նա 48 տարեկան է, բայց ամբողջովին տրված է հասարակական աշխատանքով: Սկսեց պատգամավորությունից, հիմա խորհրդի անդամ է, Վարկային Ընկերության վարչության անդամ է, թռչնաբուծական սեկցիայի լիազոր: Նա մասնակցում է նիստերին, ընտանիքներին նպաստ տալու աշխատանքին, տուրքեր գանձելուն: Նա ինքը չքավոր է, բայց աշխատում է տնտեսությունը կուլտուրական ձևով տանել: Տանը լրագիր է կարդում, իր ընտանիքը դրան վարժեցնում: Նա յեկեղեցի չի գնում, յոթը տարի յե, ինչ չի հաղորդվել, և շրջապատողները հետևում են նրա օրինակին: Գյուղացիք դիմում են նրան՝ գյուղական գործերի համար զանազան խորհուրդներ ստանալու: Բայց մենակ նա՞ յե: Նրանք շատ են: Պատգամավորությունից նրանք գնում են գյուղխորհուրդ, կոոպերացիա, գյուղկոմները:

Պատգամավորական ժողովը — դեպի կոմմունիզմը տանող ամենաառաջին աստիճանն է: Պատգամավորական ժողովում գեղջկուհին առաջին անգամ լսում է շատ բան, վորի մասին նա յերբեք չեր իմանալ:

Շատ անգամ աշխատում են պատգամավորուհիներին արատավորել: Մեկ անհաջող տիպով աշխատում են դատել մյուսների մասին: Պետք է ամեն կերպ կռվել դրա դեմ: Պատգամավորուհի գեղջ-

կուհիներն իրենք ամեն կերպ կռվում են նրանց դեմ, վորոնք կարող են արատավորել պատգամավորական ժողովն իրենց վատ վարքով։ Ուշադիր հետևում են, վոր միջակի դիմակի տակ չանցնի վորևէ կուլակի կին և վոր գաղտնի ողի պատրաստողները տեղ չունենան պատգամավորական ժողովներում։

Վլադիմիրսկի նահանգի Պերեսլավսկի գավառի Ռյազանցևսկի շրջանում պատգամավորական ժողովը հեռացրել է գաղտնի ողեվաճառությամբ զբաղվող մի պատգամավորուհու, իսկ մյուսին էլ՝ հարբեցողության համար։

---

15. ԲԱՆՎՈՐՈՒՀԻ-ՇԵՖԵՐԸ

Այն աշխատանքի համար, վոր մեր կուսակցությունը կատարում է գյուղում, կարևոր նշանակություն ունի գյուղերի վրա շեֆություն վերցրած ընկերությունների կամ հիմնարկությունների աշխատանքը։

Արդյունագործական նահանգների շեֆերը յենթաշեֆ գյուղերում հիմնում են մսուրներ, մանկական հրապարակներ, գեղջկուհու խրճիթներ, դպրոց-լիկկայաններ, մասնակցում են կամպանիաներին, ոժանդակում պատգամավորական ժողովներին։

Օրինակ՝ վերջին տարում, մի քանի արդյունագործական քաղաքներում (Մոսկվա, Լենինգրադ, Վլադիմիր, Յարոսլավլ, Կոստրոմա) բանվորուհիների մասնակցությամբ յենթաշեֆ գյուղերում բացվել են 144 մսուրներ։ Մոսկվայի նահանգում շեֆերը բացել են՝ 17 մանկական հրապարակներ, 50 կար ու ձևի դըպրոցներ, 7 կար ու ձևի խմբակ։ Ամառային մսուրներ բացել են նաև Ռըբինսկի, Պերմի, Պսկովի, Տվերի շեֆերը։ Լենինգրադի նահանգի շեֆերը կազմակերպել են մոտ 30 մսուրներ։ Այն տեղերում, ուր աշխատանքը լավ է տարվում, բանվորուհիների և գեղջկուհիների մինչև կապն ամրանում է։ Ահա ինչ է ասում մի գեղջկուհի Նովգորոդի նահանգի կոնֆերենցիայում.

«Թռչում է սիրտս դեպի խորհրդային իշխանությունը, դեպի բանվորները և կուսակցությունը. շատ կուսակցություններ կային, միայն նա—խորհրդային իշխանությունը մտածեց կանանց մասին, մտածեց, թե ինչի համար է ցավում գեղջկուհու սիրտը»։

«Բոլոր ուժով կշարունակենք աշխատել,—ասում է Լենինգրադի բանվորուհին իր ժողովում,—վորպեսզի կարելի լինի չքավոր և միջակ դասի լայն մասսաներին բանվոր շեֆերի շուրջը համախմբել։

---

16. ԲԱՆՎՈՐՈՒՀԻՆ ՈՒ ԳԵՂՋԿՈՒՀԻՆ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

Մայրության և մանկության պաշտպանության գործում ևս բանվորուհի և գեղջկուհի պատգամավորուհիների ձեռքով գործված փառավոր էջ կա։

Միապետության ժամանակ մայրության և մանկության պաշտպանություն բոլորովին չկար։ Հեղափոխության հենց առաջին օրերից բանվորա-գյուղացիական կառավարությունը մի շարք դեկրետներով հրապարակ յեկավ պրոլետար-մոր և նրա մանկան պաշտպանության համար։ Բայց իսկական համառություն եր հարկավոր բանվորուհիների կողմից, վոր քաղաքացիական կռիվների և ավերածության ժամանակ վոչնչից ստեղծեյին այն հիմնարկությունները, վոր զարգանալով, ներկայումս ամբողջ բանվոր դասակարգի ուրախությունն ու հպարտությունն են կազմում։

Այդ հիմնարկությունների կազմակերպողը և նախաձեռնողը 2 բանվորուհիներ եյին — կարողների միության անդամ, վորոնք 1918 թվին մտան մայրության և մանկության ասպարեզում խորհրդային իշխանության նախագիծն անցկացնող հանձնաժողովի մեջ։

Համարձակ կարելի յե ասել, վոր այն օրից բանվորուհիների լայն մասսաները ջերմ մասնակցություն ունեցան մայրության ու մանկության պաշտպանության գործում և հաղթահարեցին այն դժվարությունները, վորոնց, թվում է թե, անկարելի յե հաղթահարել։ Չկար ամենակարևորը՝ շենքեր, կաթ, շաքար, սպիտակեղեն։ Չկար աշխատանքի ամենահիմնական պայմանը— աշխատակիցներ։ Բանվորուհիները կարողացան գտնել ամեն բան. նրանք բռնագրավեցին բուրժուազիայի բնակարանները, նրանք պարենավորման օրգաններից մթերքներ եյին ձեռք բերում, նրանք իրենք եյին գնում՝ հիմնարկություններում սպիտակեղենը լվանալու և բանվորական կին մասսաների խորքից աշխատակիցներ առաջ քաշեցին մայրության ու մանկության պաշտպանության համար։ Զուլհակուհի Շուստովան ներկայումս Իվանովո-Վոզնեսենսկի նահանգի մայրության և մանկության բաժնի վարիչն է։ Ընկ. Ռադիոնովան, հիվանդանոցի անգրագետ հիվանդապահը, անցնելով մանկաբարձական և քույր-դաստիարակների կուրսերը, հետագայում դարձավ Սոկոլնիկի մայր-մանկության պաշտպանության բաժնի հրահանգչուհի։ Ցեվ հարյուրավոր այլ բանվորուհիներ, այն ժամանակ դեռ անփորձ, բառիս բուն մտքով վոչնչից՝ իրենց ձեռքերով հիմք դրին—անցյալում աղքատիկ, իսկ ներկայումս՝ մաքուր և լուսավոր—մայրության ու մանկության պաշտպանության մեծ շենքի։

Հիմա, վերջին տարիներս, բանվորուհիների հետքերով գնում են և գեղջկուհիները։

Մենք բոլորս գիտենք, թե ինչ իսկական չափերի յեր հասնում յերեխաների մահացությունը՝ գյուղում, մանավանդ այն ժամանակ, յերբ գեղջկուհին գնում եր դաշտ, թողնելով մանկանը 7 տարեկան յերեխաների խնամքին։

Ծննդաբերության ժամանակ գեղջկուհիների շատ փոքր տոկոսն եր բժշկական օգնություն ստանում. մնացածներն անդամալույծ եյին դառնում տատմերների ձեռքից։

Պատգամավորուհի - գեղջկուհիները մայրության - մանկության պաշտպանության օրգաններին օգնում են՝ կյանքում կիրառելու այն միջոցները, վորոնք կռվում են գաղտնի վիժումների և յերեխաներին փողոց նետելու դեմ։ Գեղջկուհիների ձեռքով ստեղծվում են մսուրներ, վորոնց թիվը վերջին չորս տարում հասել է 475-ից մինչև 4052-ի։ Մսուրների ծախքի և կազմակերպման աշխատանքի մեծ մասը պետք է վերագրել գեղջկուհիների ինքնագործունեյությանը։

Պատգամավորուհի-գեղջկուհիներն իրենք են հսկում մսուրի շենքի վրա, պայմանավորվում են գյուղի և շրջանի կազմակերպությունների հետ, սնունդ են հայթայթում, յուրաքանչյուր մսուրի շուրջը կազմակերպում են նույն գյուղի գեղջկուհիներին։

Բացի մսուրներից, բանվորուհիների և գեղջկուհիների ձեռքով քաղաքներում և գյուղերում ստեղծվել են յերեխաների ու հղի կանանց համար խորհրդատու կայաններ (կոնսուլ՛տացիաներ)։ Քաղաքներում իսկական քանակությամբ աշխատավոր կանայք և նրանց յերեխաներն օգտվում են այդ կոնսուլ՛տացիաներից։

Բանվորուհիների և գեղջկուհիների սրտին ամենից մոտիկը մայրության ու մանկության պաշտպանության աշխատանքն է։ Մայրութ.-մանկության պաշտպանության դասընթացները լցվում են բացառապես բանվորուհիներով և գեղջկուհիներով։ Այսպես է սկսվել սկզբից, յերբ 1918 թվին առաջին դասընթացներին գրեթե միայն բանվորուհիներ յեկան։

Բանվորուհիների և գեղջկուհիների պատգամ. ժողովներում, մանավանդ սկզբներում ամենահետաքրքիր զեկուցումները մայրության-մանկության մասին եյին։ Վարժվողների մեծ մասն աշխատում եր մայրության-մանկության պաշտպանության բաժիններում։ Յեվ հիմա, յերբ խորհուրդներին կից հիմնվել են սեկցիաներ, հազարավոր պատգամավորուհիներ — խորհրդի անդամներ, աշխատում են այդ սեկցիաներում։

Բանվորուհիների և գեղջկուհիների գլխավոր նվաճումը մանուկների մահացության նվազումն է։ Միապետության ժամանակ Ռուսաստանում մանուկների մահացությունը շատ բարձր եր։ Այժմ քաղաքներում յերեխաների մահացությունը խիստ պակասել է, մանավանդ բանվորուհիների յերեխաների մեջ։ Առաջներում ջուլհակուհիների 100 յերեխայից 34-ը մեռնում եր, իսկ 66-ը ապրում։ Հիմա 83-ը ապրում է, իսկ 17-ը մեռնում։

Ընկեցիկ յերեխաների և անխնամ մայրերի թիվը՝ մայրության-մանկության պաշտպանության օրգաններից ստացվող նպաստների շնորհիվ՝ խիստ պակասել է. բանվորուհիներին և գեղջկուհիներին դեպի այդ աշխատանքը քաշելուց հետո, պակասել է նաև գաղտնի վիժումների հետևանքով առաջացող հիվանդությունների և մահացության թիվը։

Քաղաքներում մենք ունենք ընդամենը մայրության և մանկության պաշտպանության 1838 հիմնարկություններ։ Նրանցից՝ գործարանային և շրջանային մսուրներ՝ 631 հատ, վորոնք ծառայում են 2.000.000 բանվորուհիների և ծառայողների՝ պրոֆմիության անդամների։

---

17. ԲԱՆՎՈՐՈՒՀԻՆԵՐԸ ՅԵՎ ԳԵՂՋԿՈՒՀԻՆԵՐԸ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒՄ

Խորհրդային իշխանությունը իրենց՝ աշխատավորների իշխանությունն է։ Նա տարբերվում է մնացած այլ իշխանություններից նրանով, վոր աշխատավորների լայն մասսաները, խորհուրդների շնորհիվ, քաշված են յերկիրը կառավարելու գործի մեջ։ Խորհուրդների միջոցով բանվոր դասակարգն իրականացնում է իր դիկտատուրան։ Նա ղեկավարում է յերկիրը բանվորների և գյուղացիների շահերի տեսակետից, ընթացք չտալով վոչ-աշխատավոր տարրերին — աշխատավորների թշնամիներին։

«Ամեն մի խոհարարուհի պետք է սովորի յերկիր կառավարել»,— ասել է ընկ. Լենինը բանվորուհիներին, գեղջկուհիներին, տնային բանվորուհիներին, բանվորների և գյուղացիների կանանց Համամիութենական առաջին համագումարում։ Հեղափոխության 10 տարվա ընթացքում նրանք ցույց տվին, վոր կարող են կատարել իրենց ընկերոջ և ուսուցչի պատվերը։

Բանվորուհիներն ու գեղջկուհիները խորհուրդների միջոցով աստիճանաբար դիմում եյին դեպի յերկրի կառավարությունը։ Մեծագույն դժվարություններով — այդ հետամնաց ստրկորեն ծեծկված, ճնշվածներից ճնշվածները սոցիալիզմի կառուցողներ եյին դառնում։

Ամբողջ բնակչության կողմից դեպի կինը ցույց տված համառ անշարժությունը մինչև հիմա յել խանգարում է աշխատավոր կնոջը՝ դուրս գալ ընտանիքի հոգսերի նեղ շրջանից, վորում նա գտնվել է դարերով։

Քաղաքներում, բանվորուհիների ուղին այնքան ել ծանր չեր, վորքան գեղջկուհունը գյուղում։ Խորհուրդների վերջին վերընտրությունները, վորոնք խիստ մեծացրին կանանց թիվը վերընտրական ժողովներում, համենայն դեպս քաղաքների և գյուղերի խորհուրդներում չեն համապատասխանում նախընտրական կամպանիայում նրանց ունեցած մասնակցությանը։ Հեղափոխության տասներորդ տարեդարձին ես բնակչության արական

մասը դեռ այնքան էլ հեշտությամբ չի զիջում իր տեղը կառավարական օրգաններում։ Վերջին ընտրությունների ժամանակ գյուղերում յեղել են դեպքեր, յերբ գյուղացիք հրամայում եյին «կնանոցը» ժողով չգնալ, իսկ կազմակերպչուհու այն հարցին — թե ինչու կանայք այսքան քիչ են ժողովում, նրանք պատասխանում եյին — կնիկարմատներն էստեղ ինչ գործ ունեն։ Չե՞ վոր տերերը դեռ մենք ենք։ Դեռ վոչ վոք մեզ այդ իրավունքից չի զրկել։ Գնում եմ ժողովներին և ընտրում նրան, ով ինձ պետք է, ով իմ տնտեսությանը շատ օգուտ կտա։ Իսկ կնիկարմատը կարող է և ինձ հակառակ գնալ, այն ժամանակ ինչ անեմ, ծեծե՞մ։ Բայց ասում են հիմա կնիկարմատին ծեծել չի կարելի։ Այ, դրա համար էլ յես թույլ չտվի նրան գալու»։

Յեղել է և այնպիսի դեպք, յերբ մի գյուղում գյուղացիք թույլ չեն տվել կանանց գնալ գեղջկուհիների ընդհանուր ժողովին։ Իրենք են յեկել ժողովի, պահանջել իրենց զեկուցանողից զեկուցում տալ «գեղջկուհիների մասնակցության մասին խորհուրդների վերընտրությունների մեջ» և խոստացել են պատմել իրենց «կինարմատներին» այն բոլորը, ինչ վոր կլսեն։ Այդպես էլ յեղավ, զեկուցումն արին միայն տղամարդկանց։

Ակմոլինսկի նահանգի մի գյուղում տղամարդիկ հեռացան վերընտրական ժողովից, հրաժարվեցին ձայն տալ կանանց։ Այնտեղ յեղել են և դեպքեր, վոր ամուսինները ծեծել են իրենց կանանց նրա համար, վոր նրանք անցել են խորհուրդների մեջ։

Գեղջկուհիների համար դժվար է դուրս գալ կենցաղի այդ ծանր պայմաններից։ Դեպքեր են լինում, յերբ նրա հասարակական աշխատանքին խանգարում են վոչ միայն ամեն տեսակ խոչընդոտներ, վորոնք առաջ են բերում՝ ընտանիքը, յերեխաները, ամուսինը, այլ և իր միջից դեռ չվանված զգացմունքները, վորոնցից նա չի կարող ազատվել։ Ծանր է կնոջ վիճակը դեռ այժմ էլ, հեղափոխության տասներորդ տարեդարձին, մանավանդ գյուղում։

Վորոնեժի նահանգի Ուսմանսկի շրջանի մի գյուղում ապրում է մի չքավոր գեղջկուհի — Կավելևան։ Նրան ընտրել են խորհրդի անդամ։ Գեղջկուհիները հանձին նրա տեսնում եյին իրենց կազմակերպչուհուն, այնքան աշխատել էր նա վորպեսզի ոգնե իրենց գյուղի բոլոր կանանց։ Նա գնում էր բոլոր ժողովներին, վազում էր խորհուրդ՝ տեղեկություններ բերելու գեղջկուհիների համար, բացատրում էր նրանց իրենց իրավունքները, յերեկոները նրանց համար կարդում էր «Կրեստյանկա» պարբերականը։

Նրան ընտրելու ժամանակ ամուսինը գնացել էր աշխատանքի։ Վերադառնալով, նա արգելեց կնոջը գյուղխորհուրդ գնալ և տնից բացակայել։ Մյուսների նման ամուսինը չէր հայհոյում, միայն կարծես այլ ես «ինքն իրենը չէր». չէր ուտում, չէր խմում, տխուր ման էր գալիս, կնոջ հետ չէր խոսում։ Կավելևայի համար ծանր էր, վշտից սկսեց նիհարել։ Նա իր մարդուն շատ էր սիրում և հեռանալ չէր կարող, բայց հասարակական աշխատանքն էլ թողնել չէր կարող, վորովհետև այնտեղ նա շատ լույս և ուրախություն էր տեսել։ Հասարակական աշխատանքը լրացնում էր նրա կյանքը։

Կավելևան իր վիշտը հայտնեց ուրիշ կանանց, և յերբ նրանց պատմեց իր ապրումների մասին, նրանք բոլորը լաց յեղան և ասացին. «բայց մենք ինչպես կապրենք առանց քեզ, յեթե դու լսես ամուսնուդ և մեզնից հեռանաս։ Ո՞վ է այն ժամանակ մեր մասին հոգալու, առանց քեզ մենք կկորչենք»։ Մտածեցին համոզել նրա ամուսնուն, դրա համար շրջանից կանչեցին կանանց կազմակերպչին, նրա հետ միասին գնացին Կավելևայի մոտ, հրավիրեցին, վոր ներկա լինի գյուղ-խորհրդի նիստին և համոզվի, վոր նրա կինը միայն լավ գործերով է զբաղված, բայց նա չուզեց գնալ. «այնտեղ բան չունիմ յես», — ասաց նա։

Կավելյևան մինչև հիմա էլ վոտքի վրա չորանում է և չըգիտե ինչպես վճռե ծանր կյանքի խնդիրը։ Նա ունի 12 տարեկան պիոներ մի տղա. յերբ նա մեծանա, գուցե կարողանա համոզել հորը։

Բայց այս բոլորն աստիճանաբար անցնում է։ Գյուղում էլ կինն արդեն համակրանք է ձեռք բերում բնակչության մեջ իր գործունեյությամբ, յերբ խորհրդի անդամի պարտականություններն է կատարում։ Խորհուրդների վերջին վերընտրությունների ժամանակ մեծ մասամբ գյուղացիք լուրջ վերաբերմունք եյին ցույց տալիս կանանց թեկնածություններին, հետաքրքրվում եյին, թե ինչ հասարակական աշխատանքներ է տարել այս կամ այն գեղջկուհին, հարցնում եյին նրա բնութագիրը, իսկ այն գեղջկուհուն, վորը պետք է ընտրվեր, հարցնում եյին՝ կատարելու՞ յե նա իրեն հանձնարարված աշխատանքը՝ վոչ վախից, այլ խղճից դրդված։ Հեղինակավոր գեղջկուհիներին, վորոնք արդեն հայտնի եյին իրենց տարած հասարակական աշխատանքով, խոր-

հըրդի անդամ էյին ընտրում։ Վերընտրությունների ժամանակ գեղջկուհիներն ևս մեծ մասամբ գիտակցորեն են մոտենում իրենց խնդիրներին. մերժում են նրա թեկնածությունը, վորն իրենց կարծիքով չպետք է անցնի խորհրդում։ Կամենսկի շրջանի Նովո-Ուրալսկ գյուղում գեղջկուհիները միանգամայն իրավացի կերպով դուրս յեկան մի գյուղացու թեկնածության դեմ, վորովհետև նա «առաջինն է գյուղում վորպես գաղտնի օղի պատրաստող, հարբեցող։ Նա այլասեռում է առողջ հասարակությունը, և յեթե մտնի խորհրդի կազմի մեջ, ապա չի կռվելու օղի քաշելու դեմ, այլ ոժանդակելու յե դրան»։

Սիբիրիայի գեղջկուհի Պիսարյովան դեմ դուրս յեկավ իր ամուսնու թեկնածությանը՝ «նա վողջ գյուղը կխմե»,—ասաց նա։ Պիսարյովան ընտրվեց ընտրական ժողովի նախագահության անդամ և գյուղխորհրդի անդամ։

Այժմ ավելի ու ավելի յեն բչանում այնպիսի դեպքեր, յերբ պետք է լինում համոզել գեղջկուհուն, վոր նա գնա գյուղխորհուրդ։ Եվ չեն ասում. «մենք վոչինչ չգիտենք, գնանք ինչ անենք»։

Տարեցտարի վերընտրություններին մասնակցող գեղջկուհիների թիվն ավելանում է։ 1925-26 թվին վերընտրությունների ժամանակ 2.000.000 կին ավելի յեր՝ համեմատած 1924-25 թվի հետ։ Չնայած դրան, նրանց թիվը շատ պակաս է տղամարդկանց թվից։ 1925-26 թ. 19 միլլիոն գյուղացիներից վերընտրություններին մասնակցում էյին 13 միլլիոնից ավելին, իսկ գեղջկուհիների 21 միլլիոնից մասնակցում եր ընդամենը 6 միլլիոնը։ Խորհրդային Սոց. Միությունների գյուղխորհուրդներում 1926 թվին՝ գեղջկուհիները կազմում էյին 119194, իսկ 1927 թվին՝ հասավ 146251-ի։

1925-26 թվին Ռուսաստանի Սոց. Խորհ. Միության գյուղխորհրդներում կար 39643 խորհրդի անդամ գեղջկուհի։ Գավառական համագումարներում—6821, շրջանային գործկոմներում 971, գյուղխորհուրդների նախագահուհիներ—139։

1926-27 թ. գյուղխորհուրդներում մենք ունենք արդեն 45100 անդամ, գավառական համագումարներում—8592, գավառակ. գործ. կոմիտ.—1260, գյուղխորհրդի նախագահուհիներ—354։

Հետաքրքիր է համեմատել այդ տվյալները 1922 թվի տվյալների հետ, յերբ գյուղխորհուրդներում և գավառական համագումարներում հարյուր գյուղացուց մեկն եր կին։ 1922 թվին գավառակ. գործկոմներում 300 տղամարդուց մեկն եր կին, իսկ 1926 թվին 100 տղամարդուց—9 կին։

Մեզանում արդեն կան այնպիսի գյուղխորհրդի կին նախագահներ, վորոնք տղամարդուց վատ չեն աշխատում։ Վյատկայից 19 վերստ հեռու, Վյատկայի գավառի Կոստինսկ գյուղում, գեղջկուհին—գյուղխորհրդի գեղջկոմի նախագահն՝ իր աշխատանքով կարողացել է մեծ հեղինակություն ձեռք բերել, բայց հեշտ չեր նրա բանը։ Պետք եր գյուղատնտեսական տուրք հավաքել, իսկ գյուղացիք հրաժարվում են կնիկարմատի հրամանին լսել, հայհոյում են։ Այն ժամանակ նա գյուղհասարակական ժողով գումարեց և հարցը կտրուկ դրեց. ով է ինձ ընտրել։ Պատասխանում են—մենք։ Ուրեմն հպատակվեցեք իմ հրամանին, կամ ընտրեցեք նորին։ Գյուղացիք բերին տուրքը և դադարեցին փընթփընթալուց։ Նրա ամուսինը դեմ եր, վոր կինը գյուղխորհուրդ գնա, բայց նա յել սովորեց, և հիմա գոհ է, նույնիսկ հպարտանում է, վոր ինքն այնպիսի կին ունի, վորին վողջ նահանգը գիտե։

Բայց մի՞թե միայն նա յե։ Նրանք շատ են։ Լինում են դեպքեր, յերբ գյուղացիք ծաղրելու համար են կին ընտրում. բայց մեկ էլ տեսար՝ իրենք են գնում նրա մոտ խորհրդի։

Բանվորուհիների համար ևս հեշտ չեր տեղ գրավել ղեկավար օրգաններում։ Ճիշտ է, նրանց շրջապատող բանվորական մասսան ավելի գիտակից եր, քան գյուղական մասսան, նրանք ավելի շուտ հասկացան, վոր խորհուրդներում առանց կնոջ մասնակցության չի կարելի լուծել այն խնդիրները, վորոնք ծառացած են մեր պետության առաջ. բայց մինչև հիմա դարձյալ դժվար է կին-բանվորուհիներին անցնել քաղ-խորհուրդները։ Հաճախ ընտրողները կասկածում են նրանց ընդունակությունների վրա, թե նրանք կարող են արդյոք կյանքի մեջ մտցնել այն պարտականությունները, վոր ընկնում են յուրաքանչյուր խորհրդի անդամի վրա։ 1927 թ. քաղխորհուրդներում ընտրվել են 21,221 կին, վորը կազմում է քաղխորհրդի անդամների ընդհանուր թվի 13,5%-ը։

Մինչև հիմա դեռ չափազանց շատ համեստ են մեր հասարակական աշխատանք տանող կանայք։ Հաճախ պատահում է, վոր խորհրդի անդամ-բանվորուհին մեծ աշխատանք է տանում խորհրդում, բայց այդ մասին վոչինչ չգիտեն նրանք, վորոնք ուղարկել են նրան իրենց շահերը պաշտպանելու—այսինքն՝ «Մասսաների առաջ հաշիվ տալ չգիտենք», — հաճախ ասում են խորհրդի անդամ-բանվորուհիները։ Ուստի, հաճախ է պատահում, վոր տղամարդիկ թերահավատությամբ են վերաբերվում դեպի կանանց աշխատանքը։

Նահանգական համագումարներից մեկում մի բանվորուհի հայտարարեց. «տղամարդիկ դեռ ևս մեզ չեն վստահում, մեզ վրա նայում են ինչպես կահ-կարասիների վրա։ Դուք—թեթևագլուխներ եք, ձեզ չի կարելի ընտրել, որովհետև հարկավոր դեպքում չեք կարողանում լավ սեղմել և անցկացնել՝ ինչ պետքն է»։

Գյուղխորհրդի, նահանգական գործկոմի և կենտգործկոմների անդամ-բանվորուհիների վրա մեծ պարտականություններ կան։

Հիմա անցել է այն ժամանակը, երբ բանվորուհին բավարարվում էր միայն առբաժնի և լուսբաժնի աշխատանքներով։ Նա հանձն է առնում և տնտեսական աշխատանքներ, խնայողության ռեժիմն է տանում, կռվում է գների իջեցման և բյուրոկրատիզմի դեմ։

Շատ է զարգացել խորհրդի անդամ-բանվորուհու ակտիվությունը։ Նա սովորում է ուժեղ կերպով սեղմել, որպեսզի իրագործվեն այն պատվերները (նակազը), որոնց մշակմանը մասնակցում են իրենք՝ բանվորուհիները։

Մոսկվայում, Մոսկվաշվեյի ֆաբրիկայում, բանվորուհիների առաջարկությամբ, որոնք մեծամասնություն են կազմում, շատ արժեքավոր կետեր են մտցված Մոսկվայի Խորհրդի նակազի մեջ. «ամբուլատորիայում մտցնել բժիշկների գիշերային հերթապահություն, ավելացնել գիշերները բժշկական օգնություն հասցնող բժիշկների թիվը, կարգի բերել աշխատանքի բորսայի աշխատանքի ուղարկելու գործը, հաշվի առնելով բազմանդամ ընտանիքավորներին»։

Բոլոր այս առաջարկությունները առաջիկա աշխատանքի ժամանակաշրջանում Մոսկվայի և Մոսկվաշվեյի անդամները պետք է կյանքի մեջ մտցնեն, պետք է սեղմել և սեղմել։

Կրասնոխոլմի տեքստիլ ֆաբրիկայի բանվորուհիների ձայնով մի որոշում ընդունվեց, որը համապետական նշանակություն ունի. «Հանձնարարել պատգամավորներին և պատգամավորուհիներին՝ թույլ չտալ պետական հիմնարկություններում աշխատակիցների կազմերի աճումը, նաև ջանալ կրճատել վերադիր ծախքերը»։

Արդյունագործական մեծ կենտրոններում խորհուրդների վերջին վերընտրություններին բանվորուհիները համարյա նույն չափով մասնակցեցին, ինչ չափով որ բանվորները։ Պատահում էյին նաև այնպիսի դեպքեր, երբ նրանք տղամարդկանցից ավելի ակտիվ էյին լինում։ 20 քաղխորհուրդների ընտրության ժամանակ,

որտեղ չեն մտնում Մոսկվան և Լենինգրադը, արհեստ. միություն անդամ կանայք մասնակցել են 71,3$^0/_0$, իսկ տղամարդիկ—64,7$^0/_0$։

Լենինգրադի մի քանի միություններում (ջուլհակների, քիմիկոսների, յերկաթուղու, սննդի) վերընտրություններին մասնակցող բանվորուհիների թիվը բանվորներից ավելի յե յեղել։
Իսկ յեթե յիշենք, թե ինչ էյին ասում բանվորուհիները
1918/19 թվի վերընտրությունների միջոցին, ապա այն ժամանակ
տխպված կլինենք համոզվելու, որ նրանք առաջ էյին գնացել։
Այն ժամանակ խոսվում եր առորյա կարիքների մասին՝
գետնախնձորի, հագուստի։ Այժմ բանվորուհին խոսում է ոչ
միայն դրանց մասին, այլ և մեր շինարարության ընդհանուր
խնդիրների մասին։
Աճում է նաև խորհուրդների համագումար գնացող կանանց
թիվը, թեև համեմատելով համագումար գնացողների ընդհանուր
թիվը, թեև համեմատելով համագումար գնացողների ընդհանուր
թվի հետ, նրանց թիվը դեռ բավարար չե։ Համամիութեն. խոր-
հուրդների առաջին համագումարում նրանք կազմում էյին 1,6$^0/_0$,
յերկրորդ համագումարին—2,7$^0/_0$, յերրորդին – արդեն 7$^0/_0$ և վեր-
ջապես չորրորդին—8$^0/_0$։ Վերջին Համամիութենական խորհուրդ-
ների (XIII) համագումարում 1.603 պատգամավորներից 152 կա-
նայք էյին։ Յերբ մանդատային հանձնաժողովն այդ մասին զե-
կուցանում եր համագումարին, տեղերից կանչում էյին՝ «քիչ է»։
Մանդատային հանձնաժողովը համաձայնվեց—«ճիշտ է, քիչ է»։
Բայց տարեցտարի աստիճանական աճումը ակներև է. խորհուրդ-
ների IX համագումարում կանայք 2$^0/_0$-ից քիչ ավել էյին, X հա-
մագումարին—մոտ 3$^1/_2$$^0/_0$, XI-ին—մոտ 4$^0/_0$, XII-ին— մոտ 8$^0/_0$,
XIII-ին—9$^1/_2$$^0/_0$։
Խորհուրդների վերջին XIII համագումարին Ռ. Ս. Խ. Հ. մեջ
Հ. Կ. Պ. Կոմ. ընտրվել են 50 անդամ և թեկնածու—բանվորուհիներ
ու գեղջկուհիներ։ Վերջին IV Համամիութենական համագումա-
րում ընտրվել են 68 կին, որը կազմում է Միութենական Կենտ-
գործկոմի ընդհանուր թվի 8$^0/_0$-ը։ Ս. Խ. Հ. Մ. III համագումարում
կար ընդամենը 46 կին։
Խորհուրդների XIII համագումարի անդամ-բանվորուհիներն
ու գեղջկուհիները դուրս յեկան համարյա բոլոր գլխավոր հար-
ցերի շուրջը, որոնք քննության էյին առնվել համագումարում։
Ռ. Ս. Խ. Հ. հեռավոր նահանգների ներկայացուցչուհիները
խոսում էյին իրենց կարիքների մասին, ֆաբրիկաների և գործա-

բանների բանվորուհիները մատնանշում էին այն խնդիրները, վորոնք արտադրության զարգացման հետ այժմ դրված են կառավարության առաջ։

— Արդյունագործության հիմնական թերությունը, — ասաց Տամբովի պատգամավորուհի Անանևան, — մեքենաների և կայանքների մաշվածությունն է։ Մոսկվայի նահանգի պատգամավորուհի ընկ. Սմուրովան ղուրս յեկավ Առևտրի ժողովրդական կոմիսարի զեկուցման առթիվ։ Նա մատնանշեց ստորին կոոպերացիայի թերությունները, առաջին անհրաժեշտության մթերքների (յուղ, սելյոդկա և այլն) մատակարարման աննորմալությունը, վոր յերբեմն ստիպում են թանգ գներով գնել մասնավորից։

Յերբ պատգամավորներից մեկը նկատողություն արավ, թե կանայք արտահայտվում են շատ նեղ հարցերի շուրջը, Պեմզայի նահանգի պատգամավորուհի ընկ. Ալեքսեևնան ասաց.

— Այստեղ հանդիմանություն յեղավ, թե կանայք շատ նեղ ձևով են արտահայտվում, բայց նախ համագումարի շատ պատգամավորուհիներ դեռ չեն արտահայտվել, յերկրորդ՝ մենք հասարակական ասպարեզում աշխատող կանայք քիչ ունենք։ Յես կխնդրեյի ուշադրություն դարձնել այս հանգամանքի վրա և լայն ճանապարհ տալ կնոջը։ Այն ժամանակ նրանք այդպես նեղ ձևով չեն արտահայտվի և իրենց մի քիչ կզարգացնեն։

Շատ կանայք արտահայտվեցին Լուսժողկոմի զեկուցման առթիվ։

— Անգրագիտությունն ամենից շատ հարվածում է մեզ՝ կանանց։ Անգրագետ կնոջն առավել ևս դժվար է գրավել դեպի հասարակական աշխատանքը, — ասում էր Տվերի նահանգի պատգամավորուհի Տարականովան։ Այս նույն պատգամավորուհին համագումարի ուշադրությունը դարձրեց դեպի կնոջ ընտանեկան-կենցաղային պայմանները։

— Չի կարելի գնալ հասարակական աշխատանքի, — ասաց ընկ. Տարականովան, — ունենալով 3—4 յերեխաներ։ Պետք է լայնացնել կնոջն ազատագրող օջախները, մսուրները, մանկական հրապարակները, վորտեղ մենք հնարավորություն ունենայինք թողնել մեր յերեխաներին, իսկ ինքներս զբաղվեյինք հասարակական աշխատանքով։

Խոսեցին և շատ գեղջկուհիներ։

Նրանք խոսեցին ժողովրդական մասսաների լուսավորության, գյուղում տիրող խավարի մասին, վորը թույլ չի տալիս

գյուղին միանալու խորհրդների հասարակական աշխատանքին՝ նոր կյանքի շինարարական աշխատանքներին։ Ընկ. Կալինինի ասածի համաձայն, Համամիութենական խորհուրդների IV համագումարում կանանց յելույթներն աչքի եյին ընկնում իրենց ցայտունությամբ։

Չնայած վոր վերջին տարիներս խորհուրդների ընտրության մեջ կանանց թիվը զգալիորեն ավելացել է, խորհուրդներում կանանց թիվը ավելացել է միայն 3,5%, իսկ մի քանի տեղերում նույնիսկ տոկոսն իջել է (Լենինգրադում 27-ից մինչև 19,7%, Մոսկվայում՝ 31,3% մինչև 28%)։ Պետք է ուղղակի ասել, վոր այնտեղ, ուր կուսակցական և պրոֆեսիոնալ կազմակերպությունները հարկ յեղած ուշադրությունը դարձրել են, կանանց թիվը խորհուրդներում ավելացել է, և ընդհակառակը, այնտեղ, ուր սխալ մոտեցում է յեղել, կանանց առաջ քաշելու գործը խուլ չընդառաջների յև հանդիպել։

Խորհուրդներում աշխատելու համար մենք դեռ բավարար չափով չենք ոգնում նրանց։

Մեր Կենտկոմը, մեր կուս. համագումարներն ու կոնֆերենցիաները ամեն կերպ մատնանշում են խորհուրդներում կանանց առաջ քաշելու կարևորությունը։ Մոտիկ ապագայի խնդիրը է՝ առաջ քաշելու կարևորությունը կյանքում կիրառել կուսակցության վորոշումները, վորը՝ կին աշխատավորուհու նկատմամբ՝ ձգտում է 100%-ով կատարել Իլյիչի պատգամները։

18. ՄԵՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ՏԱՆՈՂ ԿԱՆԱՅՔ

Ձեռնարկությունների ակտիվ բանվորուհիները — դրանք քաղխորհրդի, կոոպերացիայի վարչությունների, խանութային հանձնաժողովների, գործարանային կոմիտեների անդամներն են։ Մեծ մասամբ դրանք նախկին պատգամավորուհիներ են, վորոնք մեկ-յերկու տարի առաջ վոչ միայն քաղաքականապես անպատրաստ եյին, այլ և տեխնիկապես-անգրագետ։ «Պատգամավորական ժողովը շատ բան տվեց։ Յեթե նա չլիներ, յես մի վոչինչ բան եյի մնալու»,—ասում է Սոբինկայի Ջուլհակուհի ընկ. Զանեվալինան (Վլադիմիրսկի նահանգից), վորն այժմ աշխատանքի պաշտպանության հանձնաժողովի անդամ է։ «Պատգամավորական ժողովը սովորեցրեց ըմբռնել հարցերը»,—ասում է մի ուրիշ բանվորուհի նույն գործարանից։ «Մի ամբողջ տարի կին-բաժնի պատգամավորուհի եյի, իսկ հետո արհեստակցական միության պատգամավորուհի, այժմ աշխատում եմ իբրև գործարանային կոմիտեյի անդամ և աշխատանքի պաշտպանության հանձնաժողովի նախագահուհի»,—ասում է «Բոգատըր» գործարանի անկուսակցական մի բանվորուհի։

Մեծ մասամբ բանվորուհիների ակտիվը յերիտասարդ է, նոր առաջ քաշված, կիսագրագետ։ «Շատ է խանգարում իմ աշխատանքին տասնորդական չափերի հետ լավ ծանոթ չլինելս»,—հայտնում է Ուրշելսկի կոոպերատիվի վարչության անդամ բանվորուհին (Վլադիմերսկի նահանգից)։

Ակտիվի մեջ կան և հին բանվորուհիներ, արտադրական մեծ ստաժով և բազմանդամ ընտանիքի տեր։ «Շատ դժվար է աշխատել—ասում է Մորոզկինա (նախկին Ցինդելի) գործարանի բանվորուհին. ընտանիքս մեծ է, դժվար է աշխատանքին զարկ տալ»։

Ակտիվ բանվորուհիների $^2/_3$ բաղկացած է անկուսակցականներից, և յեթե նրանք յերբեմն դժվարանում են դուրս գալ ժողովներում, զեկուցումներ անել, այնուամենայնիվ գործնական աշխատանքների վրա նրանց ունեցած ազդեցությունը մեծ է։

Մոսկվայի խորհրդի անդամ-բանվորուհի Մորոզկինան Առողջապահական սեկցիայում իր տարած աշխատանքի մասին ասում է.

«Իմ սեկցիայում յես ինձ այնպես եմ զգում, ինչպես տանը։ Բանվորուհիները դիմում են ինձ՝ խնդրելով իրենց յերեխաներին տեղավորել դպրոցներում։ Ոգնում եմ։ Հիվանդները դիմում են ինձ բողոքներով, քննում եմ և յերբեմն համոզում, վոր այդպես չէ. յերբեմն նրանք իրոք են գանգատվում»։

Բանվորուհիներն իրենց կարիքների համար դիմում են իրենց ներկայացուցիչներին — «Մենք քեզ ընտրեցինք, դու պարտավոր ես մեզ պաշտպանել»,—ասում են նրանք։ Գործարանային կոմիտեների անդամ-բանվորուհիներին դիմում են բնակարանային խնդրով, գանգատվում են տարիֆի անկանոն վորոշման կամ կարգն իջեցնելու առթիվ, խնդրում են յերեխաներին տեղավորել մսուրներում, դպրոցներում։ Հասարակական աշխատանք տանող բանվորուհին այսպիսով բանվորուհիների լայն մասսաներին միացնում է խորհրդային իշխանության արհեստակցական և այլ հասարակական կազմակերպությունների հետ։

Խորհուրդներին կից սեկցիաների կազմակերպման հետ միասին հասարակական աշխատանք տանող-բանվորուհի, գեղջկուհի պատգամավորուհու և խորհրդի անդամների աշխատանքը վորոշ չափով փոխադրվում է այդ սեկցիաները։ Սկզբներում բանվորուհիները և գեղջկուհիներն իրենց ուժերը նվիրում եյին գըլխավորապես լուսբաժնի, առբաժնի, աշխատանքի պաշտպանության սեկցիաների գործերին։ Ժամանակի ընթացքում նրանք սկսեցին հետաքրքրվել խորհրդային շինարարության նաև ուրիշ հարցերով։

Հիմա այլ ևս չկա խորհուրդների վոչ մի սեկցիա, վորտեղ աշխատավոր կինը չաշխատեր։ Նրանց աշխատանքը պտուղներ տվեց։ Միայն բանվորուհիների համար դեռ ևս դժվար է իրենց կատարած աշխատանքների մասին ընդհանուր բանվորական ժողովներում զեկուցումներ անելը։

— Ժողովներում չեմ կարող պատմել կատարածս աշխատանքի մասին—ասում է մի բանվորուհի, իսկ ժողովներից հետո զըրույցի ժամանակ ամեն ինչ կպատմեմ»։

Չնայած չափազանց զբաղված լինելուն, ընտանեկան ծանր պայմաններին, այնուամենայնիվ հասարակական աշխատանք տանող բանվորուհիները բարեխղճորեն կատարում են իրենց

վրա դրած պարտականությունները։ Մենք Համամիութենական Կենտգործկոմի և Միութենական կենտգործկոմների անդամ բանվորուհիներ և գեղջկուհիներ ունենք, վորոնք աշխատում են կենտրոնական հիմնարկություններում։ Որինակ՝ Իվանովո-Վոզնեսենսկի բանվորուհի ընկ. Իկրյանիստովան (Տուրա) ներկայումս կենտգործկոմի հրահանգչուհին ե։

19. ԲԱՆՎՈՐՈՒՀԻՆԵՐԻ ՅԵՎ ԳԵՂՋԿՈՒՀԻՆԵՐԻ ԱՌԱՋ ՔԱՇՈՒՄԸ

Ներկայումս բանվորուհիներին և գեղջկուհիներին պատասխանատու աշխատանքներում առաջ քաշելը կուսակցության և խորհրդային որգանների հիմնական խնդիրներից մեկն ե՝ բյուրոկրատիզմի դեմ կռվելու և ղեկավարման աշխատանքը մասսաներին մոտեցնելու համար։

Այս խնդիրը լուծելու համար, անհրաժեշտ ե աշխատանքի քաշել լավագույն բանվորներին և բանվորուհիներին, գյուղացիներին և գեղջկուհիներին։ Բանվոր դասակարգի համար խորթ չինովնիկական տարրերին պետք ե փոխարինել բանվոր դասակարգի և գյուղացիության միջավայրից վերցրած նոր ուժերով։ Վարչական և կազմակերպչական աշխատողների նոր կադր ստեղծելու աշխատանքն ամբողջովին ընկնում ե կուսակցական և արհեստակցական կազմակերպությունների վրա։

Բանվորուհիների և գեղջկուհիների առաջ քաշումը գգալիորեն յետ ե մնում բանվորների և գյուղացիների առաջ քաշումից։ Որինակ՝ բանվորա-գյուղացիական տեսչության հետազոտած 30 նահանգներում առաջ քաշվածների թվում կանայք միայն 7% են կազմում։

Մոսկվայի նահանգի 15 գավառների շրջանների տվյալների համաձայն՝ վերջին տարում առաջ ե քաշված վոչ գործարանային աշխատանքի—804, և ներգործարանական աշխատանքի—1445 հոգի։ Առաջ քաշվածների կազմի 7,5% կանայք են։

XIII րդ կուս. համագումարը և VII արհմիութենական համագումարն իրենց բանաձևերում անհրաժեշտ համարեցին «աչքի ընկնող բանվորուհիներին և գեղջկուհիներին պատրաստել պատասխանատու աշխատանքների համար»։

Բայց այս խնդիրների կիրառումը կյանքի մեջ մեծ դժվարությունների յե հանդիպում։ Առաջ քաշվածների %-ի քչության պատճառը՝ նախ կայանում ե նրանց հետամնացության, ցածր վորակավորման և կնոջ կուլտուրական հետամնացության մեջ,

բայց բանվորուհիների թույլ առաջ քաշումը առաջանում է նաև պրոֆեսիոնալ և տնտեսական օրգանների դեպի այս հարցն ունեցած վոչ բավարար վերաբերմունքից։ Օրինակ՝ պետք է ասել, վոր բավարար ուշադրություն չի դարձվում բանվորուհիներին դեպի արտադրական խորհրդակցությունների ու հանձնաժողովները քաշելը, մինչդեռ բանվորուհիներին արտադրական խորհրդակցությունների մեջ քաշելը կնպաստե բանվորուհիների առաջքաշմանը։ Այսպիսով՝ Լենինգրադում արտադրական խորհրդակցությունների ժամանակաշրջանում, ֆաբրիկաներում և գործարաններում վարչական-տեխնիքական աշխատանքներում առաջ են քաշված 2246 հոգի, վորոնցից 411-ը կին է, և դա կազմում է 19,1%։

Դասընթացներ ուղարկվող բանվորուհիների թիվն անբավարար է, և դասընթացներն ավարտածները բավարար չափով չեն օգտագործվում։ Օրինակ՝ Սոբինկոյում յերեկոյան պրոֆտեխնիքական դասընթացներն ավարտող 32 հոգուց վեցը բանվորուհիներ եյին։ Բոլոր տղամարդիկ առաջ քաշվեցին բարձր պաշտոնների, իսկ կանայք կրկին վերադարձան դեպի կայանքը։

Կան կանայք, վորոնց կարելի յե և պետք է առաջ քաշել դեպի ղեկավար աշխատանքներ, բայց դրան խանգարում է պրոֆեսիոնալ և տնտեսական կազմակերպությունների աշխատակիցների հետամնացությունն ու անվճռականությունը, այլ և յերբեմն բյուրոկրատական տրամադրություն ունեցող ծառայողների ընդդիմադրությունը։

Բանվորուհիներին, առավելապես գեղջկուհիներին առաջքաշելու լավագույն դպրոցը՝ հանդիսանում խորհուրդներում և նրա սեկցիաներում պատգամավորուհի-փորձվողներին տրվող աշխատանքը։

— Միայն պատգամավորուհի ընտրվելով, քաշվեցի դեպ հասարակական աշխատանքը,— ասում է ույազդնցի պատգամավորուհի Մոնախովան։ Պատգամավորական ժողովն ավարտելով, 8 ամիս, վորպես վարժվող նա աշխատել է նահանգական դատարանում, իսկ հետո նրան հանձնել են աշխատանքային սեսիայի նախագահի պատասխանատու պաշտոնը։ —Մի դժբախտություն ունեմ,— ասում է Մոնախովան,— կրթությունս անբավարար է, շատ անգամ եմ դժվարանում։

Մինչև հիմա բանվորուհիների և գեղջկուհիների առաջ քաշումը գնում էր ժողովրդական լուսավորության, առողջապահության և սոցապի գծով։

Համկոմկուսի կենտկոմը ուշադրություն դարձնելով այս խնդրի վրա, անհրաժեշտ է համարել միջոցներ ձեռք առնել՝ առաջ քաշելու նրանց աշխատանքի նաև այլ ասպարեզներում (տնտեսական, կոոպերատիվ և այլն)։ Հերթական խնդիր է ներկայացնում՝ բանվորուհիներին արտադրական խմբակների և կարմիր դիրեկտորների դասընթացների միջոցով վարչական-տնտեսական աշխատանքների համար պատրաստելը։

20. ՊՐՈՖՇԱՐԺՈՒՄԸ, ԲԱՆՎՈՐՈՒՀԻՆԵՐԸ ՅԵՎ ԳԵՂՋԿՈՒՀԻՆԵՐԸ

Մինչև հեղափոխությունը բանվորուհիները պրոֆշարժման մեջ շատ աննշան մասնակցություն են ունեցել։ Իրենց հետամնացության պատճառով նրանք չեյին կարող հասկանալ կապիտալիզմի դեմ մղվող կազմակերպված կռվի նշանակությունը։ Բացի այդ, ցարական կառավարությունը, պաշտպանելով կապիտալիստների շահերը, արհեստակցական շարժմանը մասնակցելու համար հետամուտ եր լինում բանվորներին և բանվորուհիներին։

1915 թվին Մոսկվայում նույնիսկ պրոֆմիության բանվորուհի անդամների խմբակ եր կազմակերպվել, բանվորուհիների, վորոնք Մոսկվայի կոմիտեյի ղեկավարությամբ աշխատում եյին կանանց շարքերում։ Այնտեղ մտնում եյին ընկ. ընկ. Պանյա Սախարովան, Տոնյա Յեգորովան, Լենա Ցարիկը, Նիման և ուրիշները։

Փետրվարյան հեղափոխությունից հետո բանվորուհիներն սկսում են հետաքրքրվել պրոֆշարժումով և անդամ գրվում պրոֆմիություններին։

Իվանովո-Վոզնեսենսկու բանվորուհի ընկ. Ռազումովան հիշելով մինչ հոկտեմբերյան օրերը, պատմում ե. «Բանվորուհիները հաճախ օգտվելով հերթի վերջանալուց, գործարանի դռների հետևը թռուցիկ միտինգներ եյին կազմակերպում։ Նրանք ագիտացիա եյին անում միության մեջ մտնելու և անդամավճարներ տալու համար, ըստ վորում՝ շատ բանվորուհիններ ընտրված եյին անդամավճարներ հավաքելու։

Կինեշեմսկի շրջանի բանվորուհիները մասնակցում եյին I Շրջանային պրոֆմիութենական կոնֆերենցիային, և նրանցից մի քանիսն ընտրվել եյին կոնֆերենցիայի նախագահության մեջ։

Հաճախ Իվանովո-Վոզնեսենսկայայի բանվորուհիները նահանգի զանազան կողմերն եյին ուղարկվում՝ – լուծելու բանվորուհիների և գործարանային կոմիտեների մեջ ծագած վեճերը։ Մի խոսքով,— վերջացնում ե ընկ. Ռազումովան,— Իվանովո-Վոզնեսենսկու նահանգի բանվորուհիներն, առաջին օրերից, ամենաակտիվ մասնակցություն ունեյին պրոֆմիությունների կազմակերպման գործում։

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո միայն բանվորները մասսայականորեն քաշվեցին դեպ պրոֆմիութենական շարժումը։

Պրոֆմիությունները՝ կոմմունիստական կուսակցության ղեկավարությամբ՝ նպատակ դնելով բանվորական լայն մասսաներին քաշել դեպի կոմմունիզմը, իհարկե, չեյին կարող անտես անել բանվորուհիներին, վորոնք կապիտալիզմի ժամանակ առավել ծանր պայմաններում եյին գտնվում։ Բանվորուհիների հետամնացությունը կարող եր վողջ բանվոր դասակարգին խանգարել՝ իրականացնելու հեղափոխության առաջ դրված խնդիրները։

Դեռ 1917 թվի հունիսին Համառուսական պրոֆկոնֆերենցիայում՝ բոլշևիկները հարց դրին աշխատանք սկսել կին-բանվորուհիների շարքերում՝ նրանց դեպի պրոֆեսիոնալ կռիվը քաշելու նպատակով։

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո առաջին տարիներում պրոֆմիությունների համար խոշոր կարևորություն ունեցող հարցեր առաջացան, վորոնք կապված եյին քաղաքացիական կռիվների հետ։ Պրոֆմիության անդամ-բանվորուհիները բանվորներին հավասար ուղարկվում եյին քաղաքացիական կռիվների ճակատը, նրանց գործուղղում եյին կարմիր բանակայինների արտերը հավաքելու, իսկ վերջերում՝ և պարենտուրքի բաշխմանը։

Պրոֆմիությունների անդամ կանանց շարքերում աշխատանք տանելու հարցը յերկրորդական տեղը բռնեց։ Բայց 1920 թվին Համառուսական պրոֆմիութենական III համագումարում վորոշվեց ավելի ակտիվ բանվորուհիներին քաշել դեպի պրոֆմիութենական և արդյունագործական ղեկավար օրգանները։

Իսկ ինչ դրության մեջ ե պրոֆմիութենական շարժման գործում կանանց ունեցած մասնակցությունը։

Կանանց պրոֆմիության անդամների թիվը վերջին տարիներս անշեղ աճում ե. 1925 թվին յեղել ե 1.934.700 կամ պրոֆմիության անդամների ընդհանուր թվի $24,7^0/_0$, իսկ 1926 թվին՝ 2.413,578, կամ $25,3^0/_0$-ը։ Վերջին $1^1/_2$ տարվա ընթացքում կանանց թիվը 586000-ով ավելացել ե։

Բայց պրոֆմիության տղամարդ անդամների թիվն ընդհանրապես ավելի արագ ե աճում։ $1^1/_2$ տարվա ընթացքում նրանց թիվն ավելացել ե 1.752.000 մարդով։

Թե կուսակցությունը և թե պրոֆմիութենական ղեկավար օրգանները մշտապես ուշադրություն են դարձնում բանվորուհի-

ներին պրոֆմիութենական աշխատանքների մեջ քաշելու անհրաժեշտության, իսկ ավելի ակտիվներին՝ պրոֆմիութենական պատասխանատու օրգաններում աշխատանքի մեջ քաշելու վրա։ Յեթե մինչև հիմա դա թույլ է կյանքի մեջ կիրառվում, ապա դրա գլխավոր պատճառն այն է, վոր բանվորուհիները դեռ ևս կապված են ընտանեկան օջախին և հնարավորություն չունեն տղամարդուն հավասար մասնակցել հասարակական աշխատանքին։

Բայց կա և ուրիշ պատճառ, վորի մասին ասում եր ընկեր Տոմսկին 1925 թվի նոյեմբերին, կանանց շարքերում պրոֆաշխատանք տանելու առթիվ յեղած Համամիութենական խորհրդակցության միջոցին.

«Յեթե կնոջ կատարած աշխատանքը լավ չի լինում, տղամարդը պետք է տաս անգամ ուղղե այն, տաս անգամ սովորեցնե, ընկերական միջավայր ստեղծե և առաջ մղե։ Կինը,—ասում է ընկ. Տոմսկին,—պետք է դառնա ամբողջ պրոֆմիության աշխատակից և վոչ միայն կանանց շրջանում աշխատող։ Դրան հասնելու համար՝ պետք է ագիտացիա մղել և աշխատել վոչ միայն կանանց, այլ և տղամարդկանց շրջանում։ Յև վոչ միայն տղամարդկանց մեջ մասսայորեն, այլ աշխատանքը ղեկավարող տղամարդկանց։ Ամեն մի նահանգական բաժնի աշխատակից,—ասում է ընկ. Տոմսկին,—պետք է իմանա, թե քանի՞ կին է աշխատում նահանգական բաժնում և ինչ են անում նրանք»։

Ճիշտ է, վերջին տարիներս պրոֆմիության աշխատակիցներն ավելի լավ են հասկանում իրենց անելիքները՝ կանանց ընդհանուր պրոֆմիության ակտիվ աշխատանքի մեջ քաշելու համար։

Պրոֆմիութենական շարժման մեջ կանանց ակտիվության մասին կարելի յե դատել հետևյալ թվերից։

1924 թվի հունվարի 1-ին գործարանային կոմիտեներում կար 14,9$^0/_0$ կին, 1925 թվի հունվարի 1-ին—17,3$^0/_0$, 1927 թվի հունվարի 1-ին—18,5$^0/_0$։ Այսպիսով 3 տարվա ընթացքում գործարանային կոմիտեների անդամների կանանց տոկոսը աճել է 3,6-ով։

Գործարանային կոմիտեներում ամենից շատ կին կա ջուլհակների, կարողների, ժողսննդի միություններում։ Կանայք ավելի քիչ են՝ հանքագործների, մետաղագործների, կաշեգործների, շաքարագործների և յերկաթուղային աշխատավորների, ֆաբրիկագործարանային կոմիտեներում։

Պրոֆմիությունների լիազորների մեջ 17.9$^0/_0$ կանայք են։ 1925 թվի հունվարի 1-ին համքարային պատվիրակուհիներ

կային 21,0$^0/_0$, իսկ 1926 թ. հունվարի 1-ին՝ դարձան 28,3$^0/_0$։ Բանվորական Վերաստուգիչ Հանձնաժողովներում 1925 թվի հունվարի 1-ին կար 8,8$^0/_0$, իսկ 1926 թվի հունվարի 1-ին՝ դարձավ 12,9$^0/_0$։ Աշխատանքի պաշտպանության հանձնաժողովներում 1925 թվի հունվարի 1-ին 20,4$^0/_0$, իսկ 1926 թվի հունվարի 1-ին՝ 24,0$^0/_0$, կուլտ-հանձնաժողովներում—19$^0/_0$ և 25,8$^0/_0$, արտադրական հանձնաժողովներում—6,9$^0/_0$ և 11,3$^0/_0$, վերաստուգիչ հանձնաժողովներում—8,5$^0/_0$ և 16,1$^0/_0$։

Այս տվյալներն ապացույց են, վոր պրոֆշարժման մեջ կանանց ակտիվությունն անշեղ կերպով աճում է։

Ինչ վերաբերում ղեկավար ընտրական օրգաններում նրանց ունեցած մասնակցությանը, ապա դա այնքան էլ բավարար չէ.

Նահանգական բաժիններում կանայք—6$^0/_0$ են կազմում.

Միությունների Կենտկոմում . . . —4,2$^0/_0$ »

Հ.Ա.Մ.Խ.-ում . . . . —3$^0/_0$ »

Արհմիութենական համագումարներում յեղած պատվիրակուհիները.

III	համագումարում	5,7$^0/_0$	կանայք
IV	»	4,0$^0/_0$	»
V	»	5,0$^0/_0$	»
VI	»	4,6$^0/_0$	» (49 մարդ)
IIV	»	7,4$^0/_0$	» (96 »)

Հ. Ա. Մ. Խ.-ում 168 անդամից 7 և 91 թեկնածուից—3 կին են։ Հ.Ա.Մ.Խ.-ի նախագահության մեջ մեկ անդամը և մեկ թեկնածուն կանայք են։

XIV Կուս.-համագումարը մատնանշելով բանվորուհիներին պրոֆմիութենական ակտիվ աշխատանքների մեջ առաջ քաշելու հաջողությունները, այնուամենայնիվ գտել է, վոր «նրանք ավելի պետք է լայնացնեն և խորացնեն իրենց աշխատանքը, ընտրված բանվորուհիների կազմի ուժեղացման ուղղությամբ, պրոֆմիութենական կազմակերպությունների բոլոր օղակներում, մանավանդ այն միությունների մեջ, վորոնցում կանայք մեծամասնություն են կազմում, վորտեղ կնոջ աշխատանքը գերակշռում է կամ նշանակալից է»։

Գյուղատնտեսական բանվորուհիները և բատրակուհիները նույնպես մասնակցում են պրոֆշարժմանը։ Նրանք մտնում են Հողանտառմիության մեջ, իբրև փորձառություն ձեռք բերողներ, աշխատում են միութենական զանազան օրգաններում, մտնում են

գյուղա-բանվորական կոմիտեները (14$^0/_0$ կանայք են), խորհրդային տնտեսությունների բանվորական կոմիտեները (10,6$^0/_0$), կուլտ-հանձնաժողովները։

Հողանտառ միության կին անդամների թիվը անընդհատ աճում է։ 1924 թ. նրանք 40,200 հոգի եյին, այսինքն՝ 14,3$^0/_0$, 1927 թվին — 179,600 կամ 16,1$^0/_0$։ Իսկ ընդամենը գյուղական տնտեսություններում աշխատող միայն բատրակուհիների թիվը Հ.Ս.Խ.Հ. մեջ 631,000 է, վորից միության մեջ մտնում են 51,000 հոգի, այսինքն՝ 81$^0/_0$։ Այսպիսով պրոֆմիության առաջ խնդիր է դրվում բատրակների ամենաշահագործվող մասը դեպի արհես-տակցական շարժումը քաշել։ Գեղջկուհիների պատվիրակային ժո-ղովների մեջ մտնում են և բատրակուհիներն ու գյուղատնտեսա-կան բանվորուհիները։ Վերջին տարիներս նրանց թիվը 14,000-ից հասավ 16,000-ի։

Արդեն կան շատ բատրակուհիներ, վորոնք հասկանում են, վոր իրենց կյանքի ծանր պայմաններում պաշտպանություն գտ-նելու համար՝ պետք է դիմել պրոֆմիություններին։

Բատրակուհիների հետամնացությունը, վորոնց 60$^0/_0$ ան-գրագետ է, խանգարում է նրանց՝ իրենց աշխատանքի պաշտպա-նության համար ոգտվել խորհրդային որենքներից։ Դեռ շատ բատրակուհիներ կան, վորոնք տերերի հետ պայմանագրեր չունեն։ Համաձայնություն չի կայացել աշխատավարձի, հանգստյան որերի, սննդի, բնակարանային պայմանների մասին։ Դրա հետևանքը լինում է այն, վոր բատրակուհին ընկնելով վատթար դրության մեջ, ստիպված է լինում կատարել վարձողի քմահաճույքները։

Ուստի միության ավելի ակտիվ անդամներն ոգնում են բատ-րակուհիներին ամենից առաջ աշխատանքային պայմանագիր կըն-քել վարձողի հետ։ Որինակի համար՝ միության անդամ-բատրա-կուհի Կալունովայի ոգնությամբ վերջին մեկ տարում 90 պայ-մանագիր է կնքվել։ Վյատկայի նահանգի Կրասովսկի գավառակի հողային հանձնաժողովի անդամ-բատրակուհի Սազոնովան աշխա-տում է հողային վեճերի հարցերով։ 18 տարեկան բատրակուհի Մամըչեյկովան «Բատրակ» լրագրի միջոցով ցույց է տալիս մեր նվաճումներն ու թերությունները։ Ցեվ մեր մեծ Միության զանա-զան անկյուններում քանի-քանի դրանց նման նոր կյանք կառու-ցողներ կան, վորպես իրենց պրոլետարական կազմակերպության նվիրված անդամներ։

---

21. ԲԱՆՎՈՐՈՒՀԻՆԵՐԸ ՎՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Մեր արդյունագործությունն արագ զարգանում է։ Շատ ճյու-ղերում նա հասել է մինչպատերազմյան չափերի, իսկ մի քանի ճյուղերում՝ նրանից անցել։

Պետական արդյունագործության մեջ 1925 թվի հունվարի 1-ին կար 535.000 կին, իսկ 1927 թվի հունվարի 1-ին՝ արդեն 743.010։ Բայց միևնույն ժամանակ տղամարդկանց թիվը կըրկ-նակի ավելացավ, ուստի՝ ընդհանուր թվի հետ համեմատած՝ ար-դյունագործության մեջ աշխատող կանանց $^0/_0$-ը մի փոքր պա-կասեց. 1925 թ. 27,2$^0/_0$ եր, իսկ 1927 թվին 26,9$^0/_0$։

Միապետական կարգերում հետամնաց, բթացած բանվորու-հին արդյունագործության մեջ ևս համարվում եր իբրև մի հավել-յալ իր՝ ամուսնու—բանվորի համար։ Տղամարդն եր տանում գոր-ծարանի հիմնական աշխատանքը, իսկ կինն աշխատում եր իբրև ոժանդակիչ, անվորակ ույժ, սև աշխատավոր, վորը վատ է վար-ձատրվում։

Հեղափոխության տասը տարվա ընթացքում շատ բանվորու-հիներ անցան ավելի վորակյալ, լավ վարձատրվող աշխատանքի, բայց մասսային բանվորուհիները շարունակում են մնալ իբրև ներկայացուցիչներ անվորակ ու կիսավորակ աշխատանքում։

Մոտ ժամանակներս հետազոտվել են զանազան արտադրու-թյուններում 396,545 բանվորուհիներ։ Պարզվել է, վոր նրան-ցից 42,6$^0/_0$ անվորակ է, 36,9$^0/_0$—կիսավորակ, և ընդամենը 16$^0/_0$ վորակյալ։

Պրոֆմիությունները իրենց առաջ խնդիր են դրել՝ ոգնել բանվորուհիներին՝ վորակավորելու իրենց աշխատանքը։ Միայն այսպիսով բանվորուհին իրոք կդառնա հավասարազոր աշխատա-կից սոցիալիզմի կառուցման մեջ։

Հոկտեմբերյան հեղափոխության տասներորդ տարեդարձին բանվորուհիները հաստատուն քայլերով գնում են դեպի առաջա-դրած նպատակը։

Մենք մատնանշում ենք մի շարք նվաճումներ կնոջ աշխատանքի վորակավորման ասպարեզում։

1924-25 թ. Փաբզավուչի դպրոցներում աղջիկները կազմում եյին $22^{0}/_{0}$, իսկ 1926-27 թ.՝ աղջիկների թիվը կազմում ե $34_{0}/_{0}$։

Բանվորուհիների համար պրոֆմիությունները կազմակերպում են խմբական և անհատական աշակերտություն։ Ճիշտ ե, բանվորուհու կենցաղային պայմանները դեռ ևս արգելառիթ հանգամանք են հանդիսանում նրա վորակի բարձրացման աշխատանքում։ Դժվար ե նրա համար ժամանակ գտնել յերեկոյան պրոֆտեխնիկական դասընթացներ հաճախելու համար, հեշտ չե նաև ուժերը լարել անհատական ուսուցման համար, բայց ավելի ու ավելի յե աճում բանվորուհու գիտակցությունը. հոժարությամբ ե ուղարկում նա իր աղջկան Փաբզավուչ (Փաբրիկ.-գործ. դպրոց)։ աճում ե՝ փականագործ, ճախարակագործ, մեխանիկ բանվորուհիների թիվը։

Իվանովո-Վոզնեսենսկի նահանգի կենեշմայում 1927 թ. 14 բանվորուհիներ անցել են ավելի վորակյալ աշխատանքի՝ իբրև բամբակ մաքրող կամ ջուլհակ վարպետի ոգնականներ։ Նրանցից յերկուսը—յերիտասարդ աղջիկներ, աշխատում են իբրև ճախարակագործներ Դեմյան Բեդնու գործարանում։ Շատ ծաղրի հաղթահարեցին նրանք՝ սովորելիս, բայց համենայն դեպս փորձնական աշխատանքը բավարար կատարեցին և կայանքների վրա միանգամայն ինքնուրույն են աշխատում։

22. ԿԱՆԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կնոջ աշխատանքի պաշտպանության ասպարեզում Հոկտեմբերյան հեղափոխության ամենակարևոր նվաճումը հանդիսանում ե բանվորուհի-մոր աշխատանքի պաշտպանությունը։ Նա խորհրդային իշխանության որենքներով ստանում ե այսպես կոչված դեկրետային արձակուրդ՝ 2 ամիս ծննդաբերությունից առաջ և 2 ամիս ծննդաբերությունից հետո, պահպանելով աշխատավարձը և ապահովագրական գանձարկղի միջոցով ստանալով բաժինքը յերեխայի համար և սննդադրամ 9 ամսվա ընթացքում։

Ցարական ռեժիմի ժամանակ բանվորուհին այդպիսի որենքի մասին յերազել անգամ անկարող եր։ Բուրժուական և վոչ մի յերկրում այդպիսի որենք չկա։ Վերջին ժամանակներս կապիտալի արշավանքի հետևանքով այնտեղ կրճատում են և՛ այն փոքրիկ գումարները, վոր ծախսվում ե մայրության ու մանկության պաշտպանության համար։ Որինակ՝ Ֆրանսիայում ծննդաբերությունից նույնիսկ մի որ առաջ գործարանատերը դուրս ե նետում բանվորուհուն, յեթե վոչ մի պայմանագիր չի կնքված նրա հետ։ Յեթե պայմանագիր կնքված ե, ապա նա իրավունք չունի նրան հեռացնելու միայն հղիության յոթ ամսից հետո։ Բայց շատ անգամ այս որենքն ևս մնում ե թղթի վրա։

Մեզանում պրոֆմիությունները իրենց համագումարների և իրենց բարձրագույն որգան—համամիութենական պրոֆմիութենական համագումարի վորոշումներով միշտ մատնանշել են կնոջ աշխատանքի պաշտպանությանն ուշադիր վերաբերվելու կարևորությունը։ Նրանք մատնանշել են նաև, վոր աշխատանքի պաշտպանության որգանների մեջ անհրաժեշտ ե հենց իրենց՝ կանանց ներառումը։

Հեղափոխության հենց սկզբից արգելված եր կանանց աշխատանքն արդյունագործության այն ճյուղերում, վորոնք «առանձնապես վնաս են կնոջ որգանիզմի համար»։ Արգելված եր նաև կնոջ գիշերային աշխատանքի գործադրությունը։

Հավասար վարձատրություն հավասար աշխատանքի համար սահմանված էր աշխատանքի օրենքի մեր Կոդեքսով, և հեղափոխության սկզբից պրոֆմիությունների վրա պարտականություն էր դրված՝ հետևել այդ օրենքի գործադրությանը:

Երբ մեր ֆաբրիկաններն ու գործարանները տնտեսական հաշվառումին անցնելով՝ սկսեցին կրճատել անվորակ բանվորներին, նկատելի յեր, վոր ավելի հաճախ աշխատանքից հեռացվում են կանայք, քան թե տղամարդիկ: Պրոֆմիութենական VII համագումարն այս հանգամանքի վրա դարձրեց պրոֆմիությունների և աշխատանքի տեսչության ուշադրությունը: Վորոշված եր հենց բանվորուհիներին իրենց քաշել դեպի այս աննորմալ յերևույթի դեմ մղվող կռիվը: Միևնույն ժամանակ վորոշված եր ավելի շատ թվով կանանց քաշել դեպի աշխատանքի տեսչի պաշտոնը: Բանվորուհիները մտնելով պրոֆմիության և աշխատանքի պաշտպանության որգանների մեջ, հետևում են աշխատանքի պաշտպանության որգանների վորոշումները կյանքի մեջ կիրառելուն:

Պրոֆմիությունների VI համագումարը մի շարք միջոցներ ձեռք առավ, վորպեսզի կնոջ աշխատանքը սահմանափակող զանազան միջոցները չուժեղացնեն կանանց անգործության աճումը: Երբ կնոջ աշխատանքի սահմանափակումը ձեռնարկության մեջ սպառնում է բանվորուհուն գործազուրկ անել, ապա լավ է թույլ տալ նրան գիշերն աշխատել, քան հեռացնել գործից: Հղի կամ կերակրող բանվորուհին, վորին առանձնապես պաշտպանում են՝ խորհրդային իշխանությունն ու պրոֆմիությունները, նման դեպքերում փոխադրվում է ցերեկվա աշխատանքի, մի բան, վոր բանվորուհիների ամբողջ մասսայի նկատմամբ միշտ հնարավոր չէ անել:

Ահա ինչ ասաց ընկ. Տոմսկին կանանց շարքերում տարվող պրոֆաշխատանքին վերաբերյալ խորհրդակցության ժամանակ, յերբ հարց եր հարուցված, թե անհրաժեշտ է կանանց գիշերային աշխատանքի նկատմամբ խիստ մոտեցում ունենալու դեմ միջոցներ ձեռք առնել.

«Ներկայումս առանձին միությունները, աշխատանքի պաշտպանության դիմակի տակ, սկսեցին անցկացնել այն կանոնադրությունը, վորն արգելում է կանանց գիշերային աշխատանքը, վորովհետև վերջինս քայքայում է նրանց առողջությունը: Իբրև պատճառաբանություն բերվում է գերմանական արդյունագործու-

թյան հետախուզումը, վորն ապացուցում եր, թե գիշերային աշխատանքը կնոջ համար ավելի կորստաբեր է, քան տղամարդու: Բայց այդ հետախուզումն արվել է այն ժամանակ, յերբ գիշերային աշխատանքներին մասնակցում եյին և՛ հղի կանայք, յերբ այդ աշխատանքները տարվում եյին գերմանական պայմաններում, վորտեղ չկար կնոջ աշխատանքի պաշտպանություն, ինչպես մեզ մոտ», և հետո նա ասում է. «Յեթե կնոջ գիշերային աշխատանքն արգելվի, դրա հետևանքով կինը կկրճատվի արտադրությունից»:

23. ԲԱՆՎՈՐՈՒՀԻՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՉԱՓ ԲԱՇԽՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԵՋ

Աշխատանքը ֆաբրիկաներում բարելավելու տեսակետից՝ մեծ նշանակություն ունի բանվորուհու մասնակցությունը արտադրական խորհրդակցություններում։ Ճիշտ է, արտադրական խորհրդակցություններում ներառված կանանց տոկոսն առայժմ մեծ չէ։ Օրինակի համար վերցնենք Մոսկվայի ֆաբրիկաները՝ «Կրասնի Բոգատըր», «Տրյոխգորնայա», «Կրասնայա Ռոզա», «Գոզնակ»։ Այս ֆաբրիկաների արտադրական կոմիսիաներում յուրաքանչյուր 45 բանվորից չորսը կին է, բայց վերջին ժամանակներս բանվորուհին սկսում է հասկանալ, թե վորքան կարևոր է նաև իր խոսքը՝ աշխատանքը բարելավելու, ֆաբրիկա-գործարանային հիվանդ կողմերի մասին։ Առավել մեծ նշանակություն ունի նրա աշխատանքը մանածագործների շրջանների արտադրական խորհրդակցություններում, վորտեղ բանվորուհիները մեծամասնություն են կազմում։ Լենինգրադի մանվածային, կարի և ծխախոտի արդյունագործության արտադրական խորհրդակցություններում մասնակցում են 13069 բանվորուհիներ, վորոնք կազմում են արտադրական խորհրդակցություններում մասնակցողների ընդհանուր թվի 31,1%։

Արտադրական խորհրդակցություններին հաճախող կանանց թիվը ամեն տեղ միատեսակ չէ. թույլ է նաև նրանց ակտիվությունը խորհրդակցությունների աշխատանքներում։ Այն հարցին, թե ինչու յեք լռում, մինչև այժմ կարելի յե լսել հետևյալ պատասխանը. «մենք վոչինչ չենք հասկանում և չենք համարձակվում խոսել, այստեղ բոլորը տղամարդիկ են»։ Այս հանգամանքը գլխավորապես նրանով է բացատրվում, վոր արտադրական խորհրդակցություններում վորակյալ բանվորներ են մասնակցում և բանվորուհիները դժվարանում են ըմբռնել նրանց կողմից քննվող հարցերը։

Կանանց թույլ վորակյալությունն արտահայտվում է նրանց ա-
բած առաջարկությունների մեջ, վորոնք մեծ մասամբ վերաբերում
են մանր բարելավումներին, թեև դրանք էլ հաճախ մեծ նշանա-
կություն են ունենում ձեռնարկության աշխատանքների մեջ։
Ահա թե Մոսկվայի ֆաբրիկաներից մեկի բանվորուհիների
նվաճումների մասին ինչ է հաղորդում մի բանթղթակցուհի
Մոսկվայի բանվորուհիների «Դելեգատկա» հանդեսում։
«Բանվորուհիներն առաջարկեցին աշխատանք ստանալու
համար՝ հերթ հաստատել։ Դա կատարվեց։ Հետո յուրաքանչյուր
2 մեքենայի համար մի յուղաման և պտուտակ բաց անող գործիք
(отверка) ձեռք բերին, մինչդեռ առաջ դրա համար վազում էյին
վարպետի մոտ։ Բացի այդ, ձեռք բերին պետական մկրատներ,
վոր առաջ իրենց տնից էյին բերում։
Վերջապես 5-6 թելի կոճ էլ ավել ձեռք բերին, վորն զգալի-
որեն հեշտացրեց աշխատանքը. վերջ դնել տվին վատ տեսակի
մագողներին, վորոնք հաճախ կտրտում էյին մեքենայի տակի թելը։
Մանվածագործային խոնավացնող ապարատներում օդվա ընթաց-
քում ժանգ էր նստում և փչացնում ապրանքները. բանվորուհի-
ները առաջարկով խոնավաչափ հաստատեցին և վերացրին այդ
թերությունը»։
Արդյունագործության բարեկարգման առթիվ բանվորուհի-
ները գործարարային կոմիտեների առաջ հարց պետք է դնեն՝ստու-
գելու կանանց աշխատանքի արդյունավետությունը արդյունա-
գործության մեջ։ Ահա այս մասին «Բանվորուհու» մեջ ինչ է գը-
րում Համկոմկուսի Կենտ. Կոմիտ. (բ) կին բաժնի վարիչ ընկ Արտ-
յուխինան։
«Ցեխե մանվածային մի քանի ձեռնարկություններում ապա-
ցուցվել է ջուլհակուհիների աշխատանքի արտադրողականության
վոչ միայն համարժեքությունը, այլ և վորոշ առավելությունը
տղամարդ-բանվորների արտադրողականությունից, ապա մյուս
ձեռնարկություններում էլ պետք է ստուգողական ուսումնասիրա-
կան աշխատանքով բանվորուհիներն իրենց ակտիվ մասնակցութ-
յամբ օգնեն այդ գործին։

24. ԲԱՆՎՈՐՈՒՀԻՆ ՅԵՎ ԳԵՂՋԿՈՒՀԻՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ

Կոոպերացիան պրոլետարիատի դիկտատուրայի միջոցին կատարյալ հնարավորություն ե տալիս լայն մասսաներին քաշել դեպի սոցիալիստական շինարարությունը։ Նոր տնտեսական քաղաքականության պայմաններում բանվորուհիների և գեղջկուհիների առաջ խնդիր դրվեց՝ ամեն կերպ օգնել կոոպերացիային, վորը պրոլետարիատի դիկտատուրայի միջոցին պետք ե բանվոր դասակարգին կապե գյուղացիության հետ գործածական առարկաների փոխանակության ասպարեզում և գյուղացիությանը գյուղատնտեսական մեքենաներ մատակարարելով, նպաստե բանվոր դասակարգին և գյուղացիությանը եժան ապրանք մատակարարելու, վորը կխափանի մասնավոր առևտրականի աշխատանքը։

Բացի այդ, Նեպ-ի (Նոր տնտ. քաղաք.) պայմաններում բանվորուհիները և գեղջկուհիներն սկսեցին կոոպերացիայի առաջ կնոջն ազատագրող և կենցաղը բարելավող հիմնարկություններ (մսուրներ, մանկատներ, մանկական հրապարակներ և այլն) ստեղծելու խնդիր դնել։ Այժմ մենք արդեն մանկական հիմնարկություններ ունենք վորոնք կոոպերացիայի միջոցներով են պահվում։ Ապագայում, յերբ կոոպերացիան վոտի կանգնի, նրանց թիվը ավելի կմեծանա։ Բանվորուհիները և գեղջկուհիներն անդամագրվելով կոոպերացիային, պետք ե զարգացնեն իրենց գործունեությունը՝ կենցաղը բարելավելու բնագավառում, կոոպերատիվ հիմունքներով իրենց կենցաղը բարելավող հիմնարկություններ կազմակերպելով։

Ընդամենը մի քանի տարի յե, ինչ բանվորուհիներն ու գեղջկուհիներն սկսել են աշխատել կոոպերացիայում։ Անհամարձակ եյին նրանց առաջին քայլերն այդ ասպարեզում, բայց աստիճանաբար նրանք ընտելացան աշխատանքին, և հիմա մենք ունենք բավական թվով գործունյա կոոպերատոր կանայք, Ահա ինչ ե գրում իր մասին Իվանովո-Վոզնեսենսկի նահանգի բանվորուհի՝ ընկ. Պիրոգովան, վորը կոոպերատիվում աշխատելուց շատ կարճ

ժամանակ հետո ընտրվել եր վերստուգիչ հանձնաժողովի անդամ. «Յերբ ինձ ընտրում եյին, բոլորովին վոչինչ չեյի հասկանում կոոպերատիվ աշխատանքներից, և դա ինձ վախեցնում եր։ Մտածում եյի, թե ինչպես եմ կատարելու այդ աշխատանքը։ Միգուցե այնտեղ խաբերայություններ անեն, իսկ յես պատասխանատու լինեմ, բոլորովին վհատվեցի»։

Բայց նա իզուր եր յերկյուղ կրում։ Շատ շուտով նա սովորեց փաստաթղթերը հասկանալ, իսկ վորոշ ժամանակից հետո սկսեց իրեն հետ վերստուգող անդամ-ընկերների թերությունները մատնանշել։ Հետևյալ վերընտրությունների ժամանակ ընկ. Պիրոգովային կրկին ընտրեցին վերստուգիչ հանձնաժողովի անդամ։ Շնորհիվ նրա որինակի՝ սկսել են վստահությամբ վերաբերվել կանանց թեկնածություններին, և Տեյկովսկու Սպառկոոպում ելի մի քանի բանվորուհիներ են անցկացրել ֆաբրիկայից։ Այժմ Սպառկոոպի վարչությունը ընկ. Պիրոգովային բարդ և պատասխանատու հանձնարարություններ ե տալիս։ Ընկ. Պիրոգովան դարձել ե գործունյա կոոպերատոր։

Բայց վոչ միայն բանվորուհիները, այլ և գեղջկուհիները լավ են աշխատում կոոպերացիայում։ Նրանք, իբրև վարժվողներ, աշխատում են սկզբնական կոոպերատիվներում, խանութային հանձնաժողովներում։ Կան գեղջկուհիներ նաև վարչություններում, վորոնց մի քանի տարի շարունակ վերընտրում են։ Վարչության անդամ գեղջկուհիները կարողանում են դեպի կոոպերացիան քաշել իրենց գյուղի այլ գեղջկուհիներին։ Որինակ՝ Իվանովո-Վոզնեսենսկի նահանգի Շույսկի գավառի գեղջկուհի ընկ. Կոտելնիկովան կարողացավ Միասնական սպառ. կոոպերացիայի շուրջը, վորտեղ աշխատում եր և ինքը, համախմբել ուժեղ կին ակտիվը, վորը միշտ ուշադրություն եր դարձնում, վորպեսզի կոոպերացիան ծառայե գյուղական կին մասսաներին։ Նրան հաջողվեց կոոպերացիայի յեկամուտից գումար ստանալ ամառային մանկ. մսուրի համար, կոոպերացիայի յեկամուտով խրճիթ-ընթերցարանին կից նա մայրության և մանկության անկյուն հիմնեց։ Նույն տեղում բժշկական խորհուրդներ են տրվում գեղջկուհիների յերեխաներին։

Ահա պատգամավորուհի-գեղջկուհիների կոոպերացիայում տարած աշխատանքներից մի որինակ։

Վորոնեժի նահանգի Ռոսոշանսկ գավառի Պոդգորենսկի շրջանի պատգամավորուհիները պատգամավորական ժողովում հրա-

հանդչունուց իմացան, վոր ձուն կարելի չե սպառել կոոպերացիայի միջոցով և վորոշեցին. «Մենք՝ պատգամավորուհիներս պետք ե աջակցենք կոոպերացիային և ձվերն սպառենք վոչ թե մասնավորի, այլ կոոպերացիայի միջոցով»: Նրանք 800 տուն շրջելով, համոզեցին գեղջկուհիներին անդամագրվել սպառողական կոոպերացիային կից գտնվող ձվի սեկցիայում: Այնքան էլ հեշտ չեր գեղջկուհիներին համոզելը: Նրանցից մի քանիսն ասում եյին. «բայց վոր հանկարծ ձվի այդ սեկցիայում դուք ինձ կոմմունիստկա դարձնե՞ք: Յես չեմ գնալ ձեր այդ ձուի սեկցիան»: Բայց և այնպես նրանք 160 մարդ հավաքեցին:

Պետք եր գինը վորոշել: Պատգամավորուհիներն այդ մասին համաձայնության չեկան կոոպերացիայի հետ: Բայց մասնավորները, գեղջկուհիներին գրավելու նպատակով, ավել գին տվին, քան կոոպերացիան: Յեվ ահա պատգամավորուհիներն իրենք ընդհանուր ժողովում վորոշում են, ինչ և լինի, տալ կոոպերացիային, թեկուզ և վնաս կրելով: Իսկ մասնավորը գալիս ե մի այլ առաջարկով. «Ա՛յ կնանիք, ձեզ ձեռնտու չե, վոր ձվերն ինձ տաք. տոների առթիվ յես փողն առաջուց կտամ ձեզ յերեքական, նույնիսկ հնգական րուբլի»: Բայց պատգամավորուհիները համենայն դեպս, փոխեցին գեղջկուհիների տրամադրությունը և համոզեցին ձվերը տալ վոչ թե մասնավորին, այլ կոոպերացիային: Այստեղ դարձյալ մի արգելք. գեղջկուհիները գնացին գրքույկներ ստանալու, իսկ այնտեղ միայն 40 գրքույկ կար: Բոլոր գեղջկուհիներին չհասավ Այն ժամանակ պատգամավորուհիներն իրենք պատրաստեցին ճիշտ այնպիսի գրքույկներ, ինչպիսին տալիս եր կոոպերացիան, արտագրեցին, ինչ վոր այնտեղ գրված եր, գծեցին, ինչպես գծված եր իսկական գրքույկներում և բաժանեցին գեղջկուհիներին: Բայց ելի մի դժբախտություն. գյուղացիք տեսնելով կանանց հնարագիտությունը, սկսեցին գրքույկների թերթերով ծխախոտ փաթաթել ու ծխել: Պատգամավորուհիներն այս անգամ ևս չվհատվեցին. կազմեցին նոր գրքույկներ, գծեցին, արտագրեցին, բաժանեցին գեղջկուհիներին և պատվիրեցին գրքույկները սնդուկում պահել և փակել, վոր տղամարդիկ չտեսնեն:

Կոոպերատիվում գործակատարը հրաժարվեց կանանց հետ գործ ունենալ. մի պատգամավորուհի՝ ընկ. Շելապուտինան ինքը նստեց խանութում վաճառքասեղանի մոտ և վորոշված ժամերին ընդունում եր կանանց: Ահա այսպիսի ջանքերով, գյուղա-

ցոց ծաղրանքի տակ, պատգամավորուհիներին հաջողվեց 100%-ով կատարել կոոպերացիայի հետ կապված պայմանագիրը, վորից հետո կոոպերացիան յուրաքանչյուր 10 ձվին 3 կոպեկ պրեմիա յեր տալիս, վորով, ընդհանուր առմամբ, գեղջկուհիներն ստացան վոչ պակաս վճար, քան տալիս եր մասնավորը:

Սպառողական կոոպերացիայի անդամ բանվորուհիների և բանվորների կանանց թիվը վերջին տարիներս սկսում ե արագ աճել: Որինակ՝ 1925 թ. ապրիլի 1-ին փայատեր կանանց թիվը 984213 եր, այսինքն, 23,6%, իսկ 1926 թվի հոկտեմբ. 1-ին հասավ 1.332.000-ի, կամ անդամների ընդհանուր թվի 25,6%-ը:

Գյուղատնտեսական կոոպերացիայում ևս նույն ժամանակամիջոցում անդամ-գեղջկուհիների թիվը խիստ աճել ե:

1924 թվին գյուղատնտեսական կոոպերացիայում կար 275,270 կին անդամ, վորը կազմում ե ընդհանուր թվի 7,8%-ը. իսկ 1926 թվին — 782,494 անդամ կամ 10,8%-ը:

Բանվորուհիները և գեղջկուհիները մասնակցում են թե քաղաքի և թե գյուղատնտեսական կոոպերացիայի ղեկավար որգաններում: Քաղաքի սպառողական ընկերություններում և բանվորական կոոպերացիաների վարչություններում 1924 թվին կար 72 կին անդամ, կամ 3,2%, իսկ 1925 թվին արդեն 378 կին անդամ, կամ վարչութ. անդամների ընդհանուր թվի 6,6%: 1926 թվի հունվ. 1-ին կար 150 կին անդ. կամ 11,5%, իսկ 1927 թվի հունվ. 1-ին — 57 կամ 10,4%: Վարչության անդամների թվի այս նվազումը բացատրվում ե նրանով, վոր ներկայումս առանձին կոոպերատիվների վարչության անդամների թիվը ընդհանրապես պակասել ե:

Գեղջկուհիները մասնակցում են նաև կոլլեկտիվ տնտեսություններում — կոմմունաներում, արտելներում, հողի մշակության ընկերություններում: Կոլլեկտիվ տնտեսությունների բոլոր այս ձևերը մեծ նշանակություն ունեն սոցիալիզմի կառուցման մեջ: Այնտեղ մեծ մասամբ համախմբվում են ամենագիտակից և զարգացած գյուղացիները:

Կոլլեկտիվ տնտեսությունների բոլոր անդամները հավասար իրավունքներ ունեն, բայց գեղջկուհիները չեն կարողանում պաշտպանել նրանց: Որինակ՝ մի շարք կոլլեկտիվ տնտեսություններում մինչև այժմ դեռ չեն հոգում կանանց աշխատանքի պաշտպանությունը, և կնոջ աշխատանքը տղամարդու աշխատանքից ավելի ցածր ե գնահատվում: Մինչև հիմա քիչ թվով կանայք են մասնակցում կոլլեկտիվ տնտեսությունների ղեկավարության մեջ:

Շատ կոմմունաներում կյանքը նոր ձևով է դասավորվում. յերեխաները ուղիղ դաստիարակություն են ստանում, իսկ մեծերը հասարակական վարժություն են ձեռք բերում։

Առանց կնոջ գործոն մասնակցության՝ կոմմունալ տնտեսությունները գոյություն ունենալ չեն կարող։ Հաճախ կոմմունայի բախտը նրանից է կախված, թե ինչպես է աշխատում այնտեղ կինը։ Կոմմունայի կյանքում շատ բան է կախված նրանից, թե արդյոք կոմմունայի մեջ մտնող կանայք կարող են կոլլեկտիվ կյանք վարել։ Հաճախ պատահել է, վոր կոմմունան քանդվել, լուծվել է, վորովհետև կանայք անկարող են յեղել կոլլեկտիվ կյանք ստեղծել, փոքր բաների համար կռվել են միմյանց հետ, չեն ցանկացել ընդհանուր տնտեսություն վարել։

Բայց յեթե կանայք գիտակցորեն են վերաբերվում կոմմունայի խնդիրներին, այն ժամանակ մեծ մասամբ նրա գոյությունն ապահովված է։

Օրինակ՝ Վոտսկու շրջանում կա մի հողագործական կոմմունա «Բեզբոժնիկ» («Անաստված»), վորտեղ 70-ից ավելի մարդ կա, մեծ մասամբ կանայք։ Նա կազմվել է իրենց գյուղացիների ցանկությամբ, վորոնք շատ յեռանդով աշխատում են այնտեղ։ Կոմմունայի վարչության մեջ մտնում են 4 կին և միայն մի տղամարդ, վերստուգիչ հանձնաժողովում՝ 2 կին և 1 տղամարդ։ Կոմմունայի նախագահուհին-գեղջկուհի Ավդուլովան է, վորին կոմմունայի հիմնված օրից ընտրում են միշտ։ Այս կոմմունայում գեղջկուհիներն այնքան լավ են աշխատում, վոր գյուղացիք վորոշել են. «Թող նրանք մեզ ղեկավարեն»։ Ավդուլովան ինքը կիսագրագետ է, բայց աշխատում է ուսումն ապահովել ամբողջ կոմմունայի համար։ Այդ կոմմունայում կարգը լավ է։ Նա պաշտպանվում է խիստ դիսցիպլինայով։ Վոչ ընկերական փոխհարաբերության համար՝ անդամները հեռացվում են նրա շարքերից։

Կոոպերացիան միացնելով մանր գյուղական տնտեսությունները, նրանց տանում է դեպի համայնական տնտեսությունը։ Ընկերությունները, արտելները, կոմմունաները հետզհետե տնտեսությունները վերակազմում են սոցիալիստական նոր հիմունքներով։

Կոոպերացիան աստիճանաբար օգնում է բանվորուհուն և գեղջկուհուն բարելավել իրենց կենցաղը։ Վորոշ ժամանակից հետո, յերբ կոոպերացիայի յեկամուտը ավելանա, կոոպերացիայի հաշվին կուժեղանա ու բանվորուհու և գեղջկուհու կենցաղը բարելավող հիմնարկությունների, մսուրների, մանկատների, մանկապարտեզների, հասարակական ճաշարանների շինարարությունը։

Մի քանի շրջաններում հենց այժմ էլ բժիշկը, մանկաբարձուհին կոոպերացիայի հաշվին են վարձատրվում, և կազմվում են մանկական կոնսուլտացիաներ, այսինքն՝ գեղջկուհիների յերեխաներին ցույց է տրվում բժշկական օգնություն։

Թե բանվորուհիները, և թե գեղջկուհիներն սկսում են հասկանալ կոոպերացիայում իրենց տարած աշխատանքի նշանակությունը։

Յուրաքանչյուր տարի ավելի ու ավելի թվով բանվորուհիներ և գեղջկուհիներ են ներառվում կոոպերացիայի մեջ, վորոնք սովորում են աշխատել այնտեղ և բոլոր բանվորների ու գյուղացիների հետ կոոպերացիայի միջոցով հեշտացնում են սոցիալիզմի կառուցումը։

---

25. ԿԻՆԸ, ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԻՈՆԵՐՆԵՐԸ

Այն աղջիկները, վորոնք ներկայումս 18 - 19 տարեկան են,
10 տարի առաջ 8 - 9 տարեկան եյին: Նրանք մեծացել են արդեն
այլ ժամանակներում, այլ պայմաններում, քան ապրել ու մեծա-
ցել են նրանց մայրերը. սա վերաբերում է առավել ևս աղջիկ-բան-
վորուհիներին: Յեվ, այնուամենայնիվ, չնայելով, վոր հեղափո-
խությունը շատ բան է փոխել բանվորի և գյուղացու ընտանի-
քում, մեր աղջիկները մինչև այժմ էլ մեծ կախումն ունեն ըն-
տանեկան կենցաղից: Փոքր հասակից նա ոգնում է մորը տնային
աշխատանքներում, նրա վողջ կյանքն անցնում է վոչ բոլորովին
այնպես, ինչպես պատանի - բանվորի կամ գյուղացու տղայի
կյանքը: Ահա թե ինչու Հոկտեմբերյան հեղափոխության տաս-
նամյակին մենք չենք կարող ասել, թե աղջիկների միջից վե-
րացված է իրենց մայրերի հետամնացությունը, վորը բացատըր-
վում է բանվորուհու և գեղջկուհու մանուկ հասակից կրած կյան-
քի ծանր պայմաններով:
Մինչև այժմ աղջկա համար, մանավանդ գյուղում, դժվար է
դուրս գալ դեպի նոր կյանքը:
Վյատկայի նահանգի Սելեզնիխայում ապրում է Կիսլուխինա
Ֆյոկլինան՝ 20 տարեկան մի գյուղացի աղջիկ: Նա վողջ շրջա-
նում ամենաակտիվ կոմյերիտուհին է: Նա առաջինը մտավ կոմ-
յերիտմիության շարքերը և սկսեց ակտիվ աշխատել, թեև մեծե-
րը թույլ չեյին տալիս: Նախ և առաջ նա վերացրեց իր անգրա-
գիտությունը և սկսեց ուրիշ գեղջկուհիներին գրագիտություն սո-
վորեցնել: Առանձին ուշադրություն է դարձնում նա բատրակու-
հիների վրա, ամեն կերպ աշխատում է նրանց գրագիտություն
սովորեցնել, իսկ յերիտասարդներին գրավել դեպի կոմյերիտմիու-
թյունը: Այս բանի համար չեն սիրում նրան տերերը, ամեն
տեսակի հայհոյանք թափում են վրան, լուրեր են տարածում նրա
մասին, վոր վատ վարքի տեր է, իր գործով չի զբաղվում:

Հայհոյում եյին նրան մայրն ու տատը, հարևանները, Ֆյոկլի-
նան վոչ վոքից քաղցր խոսք չեր լսում, բայց և յերբեք չեր
ընկճվում: Նրան հայհոյում են, իսկ նա իբրև պատասխան պատ-
մում է նրանց, թե ինչպես պետք է նոր ձևով ապրել, յերեխա-
ներին նոր ձևով դաստիարակել, ինչպես բանջարանոցներ մշակել, և
այն ամենը, ինչ նա իմանում եր, խոսկուն աշխատում եր հայտնել
գեղջկուհիներին: Վերջիններս նրան հայհոյում եյին, բայց և
լսում եյին նրա խորհուրդները, վորոշ բաներ կյանքում իրա-
գործում: Որինակ՝ մի գեղջկուհի Ֆյոկլինայի տված խորհուրդներով
դաստիարակել եր յերեխային, դադարեց նրան բարուր անելուց,
«Գեղջկուհի» ժուռնալն սկսեց ստանալ: Մոտ ժամանակներս
պատգամավորական ժողովը քննության առավ կոմյերիտմիու-
թյան վերաբերող հարցը և այն, թե ինչպես պետք է աշխատել
և կոմյերիտական Ֆյոկլինա Կիսլուխինան արդյոք ուղիղ է տա-
նում աշխատանքը, ճիշտ կյանք է վարում: Յերկար քննեցին հարցը
և վերջապես հանգեցին այն համոզմանը վոր գեղջկուհիները շատ
հանցավոր են նրա առաջ, և վոր հարկավոր է վոչ թե հայհոյել, այլ
որինակ վերցնել նրանից: Առաջին հերթին այս բանն ընդունե-
ցին գեղջկուհիները—Ֆյոկլինայի մայրն ու տատը, վորոնք դի-
մեցին նրան այս խոսքերով. «դու ներիր մեզ, Ֆյոկլինուշկա,
մենք քեզ ամենքից շատ ենք նեղացրել, իսկ հիմա խոստովա-
նում ենք, վոր վատ ենք արել, վոր կոմյերիտմիության շարքերն
ես անցել: Թանկագին պատգամավորներ, կոչ ենք անում ձեզ,
թողեք ձեր աղջիկներին դեպի կոմյերիտմիություն ու պիոներու-
թյունը»:
Ահա մի այլ աղջիկ - կոմյերիտուհի, Վորոնեժի նահանգի
Նիժնիդևիցկի գավառից: Նա 22 տարեկան է: Մեծ ցանկություն
ունի բանֆակում սովորելու, վորին, իր անգրագիտության պատ-
ճառով «բանպակ» է կոչում: Վորպեսզի պատրաստվի, վորոշել եր
ձմրանը փոքր յերեխաների հետ դպրոց հաճախել: Յերբ գրքերը
վերցրած փողոցով գնում եր դպրոց, տղաները նրան ծաղրում
եյին: Փեսացուները հրաժարվեցին: Միայն ծույլերը չեյին ծի-
ծաղում նրա վրա: Բայց նա հաստատապես շարունակում է իր
ուսումը, և հեռու չե այն ժամանակը, յերբ կգա քաղաք՝ բանֆա-
կում սովորելու:
Մեր յերիտասարդությունն իր դաստիարակությունն ստա-
նում է դպրոցներում, ակումբներում, կոմյերիտմիության մեջ, և
ամեն տեղ աղջիկները տղաներից քիչ են: Կոմյերիտմիության մեջ

433515 աղջիկ կա, կամ 21,3%: Յեթե մենք ուշադրության առնենք, թե վորքան աղջիկ կա պրոֆտեխնիքական դպրոցներում, ակումբներում, ընդհանուր կրթության դպրոցներում, ապա կհամոզվենք, վոր նրանց թիվը շատ անբավարար է:

Կոմյերիտմիության մեջ աղջիկը պետք է սովորի աշխատավոր հասարակության ոգտակար անդամ լինել: «Կոմյերիտմիության անդամ լինել,—ասել է ընկ. Լենինը, — դա նշանակում է այնպես անել, վոր կոմյերիտը կարողանա իր աշխատանքը և ույժերը նվիրել ընդհանուր գործին»:

Ճիշտ է, մինչև հիմա կոմյերիտական կազմակերպությունները, մանավանդ գյուղում, այնքան էլ ճիշտ չեն աշխատում, մոռանում են, վոր ընկ. Լենինի խոսքերի համաձայն, նրանք իրենց անդամներին պետք է դաստիարակեն իբրև նոր կյանքի իսկական կառուցողներ, վորոնք վոչ միայն սովորում են, այլ և իրենց գիտությունը գործադրում կյանքի մեջ, տալով այն շրջապատողներին՝ կյանքը բարելավելու համար:

Այնտեղ, ուր կոմյերիտմիությունը լավ է աշխատում, նա ոգնում է գեղջկուհիներին, խրճիթ-ընթերցարաններին կից հիմնելով գեղջկուհու անկյուններ, գրագիտություն սովորեցնելով, ոգնելով հիմնել ամառային մսուրներ և այլն: Այդպիսի տեղերում պատգամավորուհիներն աշխատում են կոմյերիտմիության հետ, և վոչ միայն չեն արգելում իրենց աղջիկներին կոմյերիտմիության մեջ մտնելու, այլ, ընդհակառակը, մյուս գեղջկուհիներին բացատրում են, վոր վոչ միայն պատանի տղաներին, այլ և աղջիկներին անհրաժեշտ է մտնել կոմյերիտմիության մեջ և այնտեղ աշխատել: Վորքան ավելի յե ամրանում կոմյերիտմիության աշխատանքը, այնքան ավելի վստահությամբ են նրան մոտենում բանվորուհիներն ու գեղջկուհիները:

Կոմյերիտական լավ կազմակերպությունների մեջ աղջիկները վերջնականապես դուրս են մղում հետամնացության, խավարի մնացորդները, վորոնք թանկ են նստել կնոջը անցյալ ծանր կյանքի ամեն տեսակ ճնշումների շնորհիվ:

Բանվորուհիները և գեղջկուհիները մի հոգս էլ ունեն, այն է՝ յերեխաներին մեծացնել իբրև խորհրդային պետության իսկական քաղաքացիներ: Այս բանում նրանց ոգնում են պիոներական ջոկատները, վորոնք կազմակերպվում են մեր Միության բոլոր անկյուններում: Պիոներական կազմակերպության մեջ աղջիկներն ավելի շատ են, քան տղաները:

Պատգամավորուհիներն որը որին ավելի յեն համոզվում, թե վորպիսի մեծ ոգուտ են տալիս պիոներական կազմակերպությունները, մանավանդ գյուղում: Յերեխաներն այնտեղ շատ փոքր հասակից ոգտակար գիտելիքներ են ձեռք բերում, վարժվում են իրենք իրենց ծառայելուն, հատակ են լվանում, ջուր և փայտ կրում, հետևում բնակարանի և հագուստի մաքրությանը: Դպրոցներում պիոներներն սկսում են ոգնել վոչ միայն իրար, այլ և ուսուցչին: Գյուղում՝ պիոներական լավ խմբերն սկսում են ոգնել միայնակ գեղջկուհիներին հնձի և կալի ժամանակ: Բանվորուհիներն ու գեղջկուհիները մեծ մասամբ լավ են վերաբերվում դեպի պիոներները: Նրանք հպարտանում են իրենց պիոներ-յերեխաներով:

Վյատկայի նահանգի Վյատկա գավառում ապրում է մի չքավոր գեղջկուհի՝ Կալինինան: Նրա ամուսինը գնաց քաղաք, պատասխանատու գործիչ դարձավ և, թողնելով նրան, ամուսնացավ քաղաքացի կնոջ հետ: Ընկ. Կալինինան իր յերեխաներով մնում է մենակ յուր վիշտը վողբալու: Ապա ինչպես չհայհոյեր նա խորհրդային իշխանությանը: Այդպես էլ ասում եր ընկ. Կալինինան, թե ինքը տուժել է խորհրդային իշխանության ձեռքից, վորը նրա ամուսնուն պատասխանատու գործիչ է դարձրել:

Նրա մեծ վորդին այժմ 12 տարեկան է: Յերկու տարի առաջ նա պիոներ գրվեց և այնքան գրքեր սիրող է, վոր խրճիթ-ընթերցարանում յեղած բոլոր գրքերը կարդացել է: Մի անգամ նա գալիս է և ասում մորը. «Ինչ, մայրիկ, կարծում ես խրճիթ-ընթերցարանում միայն ինձ համար կան գրքեր: Քեզ համար էլ կը գտնվեն»: Յվ ահա մեկ անգամ նա մոր համար մի գիրք է բերում—«Պատգամավորուհի Մալանիան»: Այդ գրքում պատմվում եր կնոջ ծանր վիճակի մասին: Բայց պատգամավորուհի Մալանիան, վորի մասին գրված եր գրքում, հաղթահարում է կնոջ ծանր դրությունը ու մարդամեջ դուրս գալիս:

Այդ փոքրիկ գրքույկն այնպիսի խոր ազդեցություն է անում ընկ. Կալինինայի վրա, վոր նա սկսում է կասկածել. «Իսկապես, իրավացի յեմ յես, վոր իբրև թե խորհրդային իշխանությունը վատ է: Բայց ահա մեզ՝ կանանցս վորքան բարիք է արել»:

Պիոներ վորդին կրկին գրքեր է բերում, կարդում մոր համար, թե ինչպես լավացնել տնտեսությունը: Մայրն սկսում է հավ պահել այնպես, ինչպես գրքերումն է գրված: Տեսնում է, վոր նրանք սկսում են ձու ածել ամառ թե ձմեռ:

Դպրոցը մի նոր ուսուցիչ յեկավ—կոմմունիստ։ Գնաց ընկ. Կալինինան ես տեսնելու, թե ինչպես է նա սովորեցնում յերեխաներին նոր ձեռով—առանց գոռալու, առանց ծեծելու, քաղցրությամբ հետները խոսելով։ Հավանեց նա. ուզեց ավելի շատ ականջ դնել խորհրդային իշխանությանը, վորին մինչև հիմա միայն հայհոյում եր։ Սկսեց ուսուցչին խնդրել, վոր իրեն վորևե հասարակական աշխատանք տա։ Իսկ ուսուցիչն ասում է. «դեհ, յեթե դու ամեն բանով հետաքրքրվում ես և աշխատանքից չես հրաժարվում, մեք քեզ առաջ կքաշենք դեպի գյուղխորհուրդը»։ Հիմա նա գյուղ-խորհրդի անդամ է։

Շրջանային համագումարում նա խոսում եր այն բոլոր զրկանքների մասին, վոր պատճառել եր նրան խորհրդային իշխանությունը, և գլխավորապես այն մասին, վոր անարդար կերպով նրանից գյուղատնտեսական տուրք են վերցրել և նրա տված դիմումը նույնիսկ չեն քննել։ Այն ժամանակ շրջանային վերաստուգիչ հանձնաժողովը վորոշեց նրան առաջ քաշել շրջանային վերաստուգիչ հանձնաժողովի մեջ, վորպեսզի նա ինքն անձամբ ստուգի բոլոր խնդիրները և օգնե չքավոր գեղջկուհիներին։

Այս տարի նրան արդեն ուղարկեցին խորհուրդների նահանգական համագումար, վորտեղ նա պատմեց չքավոր-գեղջկուհիների բոլոր ցավերի մասին և գործնական առաջարկներ մտցրեց, թե ինչպես վերացնել այդ բացերը։ 12 տարեկան պիոներն ահա այսպես օգնեց իր գեղջկուհի մորը՝ հասարակական աշխատավորուհի դառնալու։

Ֆաբրիկաներում ու գործարաններում, գյուղերում պատգամավորուհիները ջերմ մասնակցություն ունեն պիոներական կազմակերպության գործում. նրանց համար բնակարան են գտնում, պիոներական շորեր են կարում և օգնում, ինչով կարող են։ Կանանց բոլոր տոներին, պատգամավորուհիների հանդիսավոր տոներին, կանանց կոնֆերանցիաներում պիոներները ցանկալի հյուրեր են։ Հանդիսավորությամբ նրանք անցնում են դահլիճով իրենց կարմիր փողկապներով, թմբկահարությամբ. ավելի լեզվանիները զանազան տոներին, օրինակ՝ մարտի 8-ին՝ վողջունում են իրենց— բանվորուհի կամ գեղջկուհի մայրերին։ Նրանք խոստանում են կատարել Լենինի պատգամները։ Դրանք բանվորուհու և գեղջկուհու կյանքի յերջանիկ րոպեներն են։

26 ԿԱՆԱՆՑ ՄԱՄՈՒԼԻ ՄԱՍԻՆ

Մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը բանվորուհիներից և գեղջկուհիներից քչերն եյին գրագետ ու համարյա բոլորովին չկային այնպիսի բանվորուհիներ և գեղջկուհիներ, վորոնք կարողանային գրել լրագրներում և հանդեսներում։ Նրանց թվում եր, թե այդ աշխատանքը մատչելի յե միայն շատ ուսումնական, զարգացած մարդկանց։ Նրանք մտածել անգամ անկարող եյին, վոր կգա ժամանակ, յերբ հարյուր հազարավոր բանվորուհի և գեղջկուհի-հասարակական աշխատավորուհիներ, մեր Միության բոլոր քաղաքներից, ֆաբրիկաներից, հեռավոր գյուղերի խուլ անկյուններից թղթակցություններ կուղարկեն Մոսկվա, Լենինգրադ, Խարկով, Օդեսսա, Արխանգելսկ, Նովո-Սիբիրսկ, Խաբարովսկ։

Հոկտեմբերյան հեղափոխությունը նոր կին ստեղծեց. նա նրան սովորեցրեց աշխատել հասարակական կյանքի բոլոր ասպարեզներում, կիսել իր մտքերը, աշխատանքը, տպավորությունները լայն մասսաների հետ՝ տպագրված խոսքի միջոցով։

Բայց նախ հարկավոր եր բանվորուհիներին և գեղջկուհիներին նրանց համար մատչելի ու հետաքրքիր գրքեր, ամսագրեր տալ։ Մեր կուսակցությունը հասկացավ, թե վորքան դժվար է մեր բանվորուհուն և գեղջկուհուն վարժեցնել տպագրական խոսքին, հետաքրքրել գրքով, սովորեցնել այն սիրել։ Այս նպատակով Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, հենց առաջին տարիներում, սկսեցին հրատարակել առանձին ամսագրեր բանվորուհիների և գեղջկուհիների համար—«Բանվորուհի», «Գեղջկուհի», «Բատրաչկա», «Կարմիր Սիբիրյաչկա», «Ուկրայինիայի Կոմմունարկա», Մոսկվայի «Պատգամավորուհի», Լենինգրադի «Բանվորուհի և Գեղջկուհի», Ադրբեջանի «Շարկ Կադընի», Վրաստանի «Շրոմելի քալի», Հայաստանի «Հայաստանի Աշխատավորուհի», վորոնցում հասարակ, հասկանալի լեզվով խոսվում է բանվորուհիներին և գեղջկուհիներին մատչելի ու հասկանալի նյութերի մասին։

Դպրոցը մի նոր ուսուցիչ յեկավ—կոմմունիստ։ Գնաց ընկ. Կալինինյան ես տեսնելու, թե ինչպես է նա սովորեցնում յերեխանե-րին նոր ձևով—առանց գոռալու, առանց ծեծելու, քաղցրությամբ հետները խոսելով։ Հավանեց նա. ուզեց ավելի շատ ականջ դնել խորհրդային իշխանությանը, վորին մինչև հիմա միայն հայհո-յում եր։ Սկսեց ուսուցչին խնդրել, վոր իրեն վորևե հասարակա-կան աշխատանք տա։ Իսկ ուսուցիչն ասում է. «դեհ, յեթե դու ամեն բանով հետաքրքրվում ես և աշխատանքից չես հրաժար-վում, մեք քեզ առաջ կքաշենք դեպի գյուղխորհուրդը»։ Հիմա նա գյուղ-խորհրդի անդամ է։

Շրջանային համագումարում նա խոսում եր այն բոլոր զրկանքների մասին, վոր պատճառել եր նրան խորհրդային իշ-խանությունը, և գլխավորապես այն մասին, վոր անարդար կեր-պով նրանից գյուղատնտեսական տուրք են վերցրել և նրա տված դիմումը նույնիսկ չեն քննել։ Այն ժամանակ շրջանային վերս-տուգիչ հանձնաժողովը վորոշեց նրան առաջ քաշել շրջանային վերստուգիչ հանձնաժողովի մեջ, վորպեսզի նա ինքն անձամբ ստուգի բոլոր խնդիրները և ոգնե չքավոր գեղջկուհիներին։

Այս տարի նրան արդեն ուղարկեցին խորհուրդների նա-հանգական համագումար, վորտեղ նա պատմեց չքավոր-գեղջ-կուհիների բոլոր ցավերի մասին և գործնական առաջարկներ մտցրեց, թե ինչպես վերացնել այդ բացերը։ 12 տարեկան պիո-ներն անա այսպես ոգնեց իր գեղջկուհի մորը՝ հասարակական աշխատավորուհի դառնալու։

Ֆաբրիկաներում ու գործարաններում, գյուղերում պատ-գամավորուհիները ջերմ մասնակցություն ունեն պիոներական կազ-մակերպության գործում. Նրանց համար բնակարան են գտնում, պիոներական շորեր են կարում և ոգնում, ինչով կարող են։ Կա-նանց բոլոր տոներին, պատգամավորուհիների հանդիսավոր տո-ներին, կանանց կոնֆերանցիաներում պիոներները ցանկալի հյուրեր են։ Հանդիսավորությամբ նրանք անցնում են դահլիճով իրենց կարմիր փողկապներով, թմբկահարությամբ. ավելի լեզվա-նիները զանազան տոներին, որինակ՝ մարտի 8-ին՝ վողջունում են իրենց—բանվորուհի կամ գեղջկուհի մայրերին։ Նրանք խոստա-նում են կատարել Լենին պապիկի պատգամները։ Դրանք բանվո-րուհու և գեղջկուհու կյանքի յերջանիկ բողբոջներն են։

26 ԿԱՆԱՆՑ ՄԱՄՈՒԼԻ ՄԱՍԻՆ

Մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը բանվորուհիներից և գեղջկուհիներից քչերն եյին գրագետ ու համարյա բոլորովին չկային այնպիսի բանվորուհիներ և գեղջկուհիներ, վորոնք կա-րողանային գրել լրագրներում և հանդեսներում։ Նրանց թվում եր, թե այդ աշխատանքը մատչելի յե միայն շատ ուսումնական, զարգացած մարդկանց։ Նրանք մտածել անգամ անկարող եյին, վոր կգա ժամանակ, յերբ հարյուր հազարավոր բանվորուհի և գեղջկուհի-հասարակական աշխատավորուհիներ, մեր Միության բոլոր քաղաքներից, ֆաբրիկաներից, հեռավոր գյուղերի խուլ անկյուններից թղթակցություններ կուղարկեն Մոսկվա, Լենին-գրադ, Խարկով, Ոդեսսա, Արխանգելսկ, Նովո-Սիբիրսկ, Խաբա-րովսկ։

Հոկտեմբերյան հեղափոխությունը նոր կին ստեղծեց. նա նրան սովորեցրեց աշխատել հասարակական կյանքի բոլոր աս-պարեզներում, կիսել իր մտքերը, աշխատանքը, տպավորություն-ները լայն մասսաների հետ՝ տպագրված խոսքի միջոցով։

Բայց նախ հարկավոր եր բանվորուհիներին և գեղջկուհի-ներին նրանց համար մատչելի ու հետաքրքիր գրքեր, ամսագրեր տալ։ Մեր կուսակցությունը հասկացավ, թե վորքան դժվար է մեր բանվորուհուն և գեղջկուհուն վարժեցնել տպագրական խոսքին, հետաքրքրել գրքով, սովորեցնել այն սիրել։ Այս նպատակով Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, հենց առաջին տարիներում, սկսեցին հրատարակել առանձին ամ-սագրեր բանվորուհիների և գեղջկուհիների համար—«Բան-վորուհի», «Գեղջկուհի», «Բատրաչկա», «Կարմիր Սիբիրյաչկա», «Ուկրայինիայի Կոմմունարկա», Մոսկվայի «Պատգամավորու-հի», Լենինգրադի «Բանվորուհի և Գեղջկուհի», Ադրբեջանի «Շարկ Կադընի», Վրաստանի «Շրոմելի քալի», Հայաստանի «Հայաստանի Աշխատավորուհի», վորոնցում հասարակ, հասկա-նալի լեզվով խոսվում է բանվորուհիներին և գեղջկուհիներին մատչելի ու հասկանալի նյութերի մասին։

Բանվորուհիներին և գեղջկուհիներին մոտ ու շատ հասարակ հարցերից հետո, աստիճանաբար այդ ամսագրերն անցնում են ավելի բարդ խնդիրների և սոցիալիստական շինարարության, ներքին ու միջազգային դրության, և նրանք աշխատավորուհիների լայն մասսաների համար դառնում են նույնքան մոտ, նույնքան հասկանալի։

Ահա այս ամսագրերում սկսեցին քիչ-քիչ գրել բանվորուհիներն ու գեղջկուհիները, իսկ հիմա նրանց գրած շատ հոդվածներ և թղթակցություններ զետեղվում են ընդհանուր հրատարակությունների մեջ։

Բանգյուղթղթակցուհիների թիվն ավելանում է տարեցտարի։ Նրանց թիվը Միության մեջ յեղած բոլոր լրագրներում և հանդեսներում 1926 թվին 18.604 էր, իսկ 1927 թվի հունվարի 1-ին՝ 28.160, վորն ընդհանուր բանգյուղթղթակիցների թվի 13% է կազմում։ Միապետության ժամանակ բանվորներն ու գյուղացիները չեյին կարող գրել լրագրներում։ Միայն Խորհրդային իշխանությունը հնարավորություն տվեց բանվորներին և գյուղացիներին գրել բանվորա-գյուղացիական թերթերում ու ամսագրերում։ Բանգյուղթղթակիցները մեծ և կարևոր գործ են կատարում աշխատավորների հանրապետության համար։ Նրանք լուսավորում են կյանքի բոլոր անկյունները, բանվորա-գյուղացիական թղթակիցների սուր աչքից վոչինչ չի վրիպում։ Բանգյուղթղթակիցների շարժման հիմքը դրեց Մարիյա Իլյինիչնա Ուլյանովան։ Նա շարունակում է ամեն կերպ ոգնել, զարգացնել այդ շարժումը։

Բանգյուղթղթակցուհիները դեռ մոտ ժամանակներս կարծում եյին, թե իրենց պարտականությունը պիտի լինի՝ մի մարդ գտնելը և լրագրում նրան գցելը։ Այժմ նրանք լայն են նայում իրենց խնդիրներին և նշում են վոչ միայն վատ կողմերը, այլ և կանգ են առնում մեր նվաճումների վրա։

Ֆաբրիկաներում և գործարաններում կազմակերպվում են բանվորուհիների խմբակներ, վորոնք պետք է տարածեն կանանց այս կամ այն ·որգանը, ագիտացիա մղեն բաժանորդագրության համար և գրեն այնտեղ իրենց աշխատանքի դժվարությունների ու նվաճումների մասին։ Այդպիսի խմբակներ գոյություն ունեն Ոդեսսայում, Սամարայում, Տոմսկի նահանգում, Կրասնոյարսկում և այլ տեղերում։

Սովորաբար սկսվում է նրանով, վոր ֆաբրիկայի այդ կին
կազմակերպչուհին բարձրաձայն կարդում է ամսագրի հոդվածները,
բանվորուհիները քննության են առնում այն, իսկ հետո կին կազ-
մակերպչուհին առաջարկում է նրանց նույնպես գրել։ Սկզբում
բանվորուհիները հրաժարվում են. «մենք ինչ կարող ենք գրել»։
Գեղջկուհիներին շարժելն ավելի դժվար է լինում. «մենք չենք
կարողանալ, — ասում են նրանք, — մյ, կխնդրենք ուսուցչուհուն,
վոր նա գրի մեր կյանքից»։ Բայց թղթակից գեղջկուհիների թիվը
քիչ-քիչ ավելանում է տեղական թերթերում։ Նրանք գրում են
իրենց նվաճումների մասին, իսկ այն տեղերում, ուր գեղջկուհի-
ները դեռ թույլ են ընդգրկվել աշխատանքների մեջ, ուղարկում են
իրենց գանգատները. «Մենք կարդում ենք, թե ինչպես են աշ-
խատում գեղջկուհիները այլ գյուղերում. մենք էլ ցանկություն
ունենք, բայց բան չի դուրս գալիս, վոչ վոք չկա սովորեցնող»։
Իսկ մի քանի գյուղերից «Կրեստյանկային» գրում են.
«Մենք կարդացինք, վոր այս-ինչ գյուղում գեղջկուհիները մսուր
են հիմնել. մենք էլ վորոշեցինք նրանց հետևել»։
Բանթղթակցուհիները և գյուղթղթակցուհիները բանգյուղ-
թղթակիցների հետ միասին գալիս են ՍԽՀՄ-յան բոլոր անկյուն-
ներից՝ Համամիութենական խորհրդակցությանը։
Այդ համագումարներում 10% կանայք են լինում։ Այստեղ
նրանք իրար մեջ կապ են հաստատում և, ցրվելով իրենց խուլ
գյուղերը, հեռավոր գործարանները, նրանք յերկար ժամանակ
հիշում են այն մասին, թե ինչպես խորհրդակցության ժամանակ
նրանք մտքերի փոխանակություն եյին ունենում և ջանում աշ-
խատանքի ընթացքում կիրառել խորհրդակցության մեջ ընդունած
վորոշումները։
Բանգյուղթղթակցուհիների աշխատանքը ղեկավարում են
կին բաժինները և այն թերթերի խմբագրությունները, վորոն-
ցում նրանք գրում են։
Բանգյուղթղթակցուհիները մասնակցում են նաև պատի թեր-
թերին։
Կուլակները և խավար մարդիկ, վորոնք չեն հասկանում
հեղափոխության համար բանգյուղթղթակիցների շարժման խո-
շոր նշանակությունը, հետապնդում են նրանց, աշխատելով այդ
կերպ ստիպել նրանց լռել։ Կուլակներին ձեռնտու չէ, վոր թեր-
թերում գրեն այն մասին, թե ինչպես խորհրդային իշխանության
որոք ևս նրանք աշխատում են անուշադրության մատնել չքա-

վորաւթյանը։ Մենք գեպքեր գիտենք, յերբ կուլակների դրդմամբ
նուշնիսկ բանվոր և գյուղացի թղթակիցներ են սպանել։ Կու-
լակների կողմից սպանվեց թղթակցուհի Ուտկինան, բայց դա չը
խանգարեց աղնիվ և հեղափոխությանը նվիրված բանվորուհինե-
րին ու գեղջկուհիներին՝ կրկնակի յեռանդով մամուլի միջոցով
կռվելու ամեն տեսակ բռնության, խավարի, հարստահարության
ճնացորդների դեմ, վորոնք խանգարում են պրոլետարիատին սո-
ցիալիզմ կառուցելու։
Հոկտեմբերը վոչ միայն բանգյուղթղթակցուհիներ, այլ և կին
գրողներ, բանաստեղծուհիներ և տվել։ Մի քանի խոսք ասենք
ավելի աչքի ընկնողների մասին։
Ցելենա Նովիկովա։—Նա 67 տարեկան է։ Գյուղական
ընտանիքից։ Մինչև 40 տարեկան հասակը կարդում եր «սրբերի
և մարգարեների կյանքը»։ 1905 թվի հեղափոխությունը շատ
բանում բաց է անում նրա աչքերը։
Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, 63 տարեկան հա-
սակում, «Դեկեգատկա» ամսագրում ընկ. Նովիկովան բանթղթ-
թակցային նկատողություններից սկսելով՝ դառնում է գրող։ Մա-
մուլի մեջ սկսում են յերևալ նրա փոքրիկ պատմվածքները, հիշո-
ղությունները։ Այժմ արդեն լույս է տեսել նրա գրքույկը՝ «Մորա-
քույր Դարյան ինչպես իմացավ Մոպրի մասին» վերնագրով։
Ներկայումս ընկ. Նովիկովան շարունակում է իր գրական
աշխատանքը։ Նա գյուղական գրողների միության անդամ է։
Կին գրող Գրիշա Սեմյոնովան մի անհայրենիք «ընկեցիկ» է,
վորին խղճալով վերցրել են փողոցից։ Նա անցել է մարդկանց
վորին խղճալով վերցրել են փողոցից։ Նա անցել է մարդկանց
արհեստանոցի դաժան դպրոցով։ Տիրուհու կողմից կատարած շա-
հագործումը, ծաղրանքը, ստորացումն ու կարիքը կվոչնչացնեյին
նրա ստեղծագործական ընդունակությունները, յեթե Հոկտեմբե-
րյան հեղափոխությունը չլիներ։
Իլյիչի մահից հետո, նա «Բանվորուհու» խմբագրությունը
բերեց իրոք «չանգստած» իր փոքրիկ վոտանավորները՝ նվիր-
ված մեր ղեկավարի հիշատակին։
«Բանվորուհու» խմբագրատանը խորհուրդ տվին Գրիշային՝
հիշողություններով հարուստ մի մեծ պատմվածք գրել իր անցյալ
կյանքից։
Ցել Գրիշան սկսեց գրել։
Գրում եր, ինչպես կարող եր, առանց կետի, ստորակետի։
Գրածն ինքն եր թելադրում մեքենագրուհիներին, վորովհետև

վոչ վոք չեր կարող կարդալ նրա խազմզածները։ Գրում եր տա-
րուց ավելի։ Այսպիսով լույս տեսավ նրա պատմվածքը՝ «Մի
կյանքի պատմությունը», վորը տպվեց նախ «Բանվորուհի» ամ-
սագրում, իսկ հետո՝ առանձին գրքույկով։
Ցելենա Չերնիշեվան Տուլայի բանվորի աղջիկ եր, վորի հայրը
1905 թվի գործադուլի ժամանակ արտաքսվելով գործարանից, գար-
ձել եր Մոսկվայի հեռագրատան ցրիչ։
1918 թվին Ցելենան դպրոցն ավարտելուց հետո նախ աշխա-
տում եր՝ իբրև գրասենեկային ծառայող, իսկ հետո մտավ ման-
վածային ֆաբրիկան՝ իբրև բանվորուհի։ Ընկ. Չերնիշևան այժմ
զբաղվում է միմիայն գրական աշխատանքով։ Նա աշխատակ-
ցում է Մոսկվայի մի շարք թերթերին և հանդեսներին։
Նրա բանաստեղծությունները տպվում են «Ռաբոչայա Մո-
սկվա», «Կոմսոմոլիա», «Նովայա Դերևնյա» թերթերում ու «Կրես-
տյանկա», «Դելեգատկա» և այլ ամսագրերում։
Հրատարակվել են Չերնիշևայի մի քանի մանկական գրքույկ-
ները. «Սկազանո—Սդելանո», «Կալինինսկիյե խոդոկի», «Սմելչակ»։
Թուսա Վիտկովսկայան բանվորուհի յե, վորը Սեմյոնովայի
նման իր կաշվի վրա փորձել է մոդայի արհեստանոցի աշակեր-
տուհու ծանր վիճակը։
Նա քաղաքացիական կռիվների ակտիվ մասնակիցն է, 1918 թ.
կուսակ. անդամ, այս տարի վերջացրել է բանֆակի գեղարվես-
տական բաժինը։ Նրա բանաստեղծությունները տպվել են «Ռա-
բոտնիցա» և այլ մի շարք գրական ժողովածուներում։
Բըկովան—գեղջկուհի յե, այժմ սովորում է բարձրագույն
դպրոցում։
Իր բանաստեղծությունների մեջ նա կարողանում է բանվո-
րուհու և գեղջկուհու մաշնելի լեզվով արտահայտել իր ուրա-
խությունը, հրճվանքը նոր կյանքի հանդեպ, վորը մեզ տվեց Հոկ-
տեմբերը—ձգտում՝ դեպի հաղթանակ, աշխատանք, սեր՝ դեպի
մարդիկ ու բնություն։

27. ԲԱՆՎՈՐՈՒՀԻՆ ԵՎ ԳԵՂՋԿՈՒՀԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Աշխատավոր կնոջ կենցաղային ծանր պայմանները խանգարում եյին նրան մտնել բանվոր դասակարգի կազմակերպված առաջավոր շարքերը։ Մինչև 1917 թ. հեղափոխությունը բանվոր դասակարգի կուսակցության մեջ շատ քիչ կանայք կային։ Նրանք անհատներ եյին։ Նրանք ավելի գիտակից բանվորուհիներն եյին, նրանք գիտեյին, վոր մտնելով բանվոր դասակարգի առաջավոր մարտիկների շարքը, իրենց յենթարկում են բանտի, աքսորի, տաժանակիր աշխատանքների։

Միայն 1913 թվից, յերբ սկսեց բանվորական շարժման վերելքը, շարքային բանվորուհիները նույնպես ֆաբրիկաներում և գործարաններում սկսում են քաշվել դեպի ընդհատակյա խմբակները, և կուսակցության մեջ են մտնում յեթե վոչ լայն մասսաները, ապա ֆաբրիկա-գործարանային բանվորուհիների մի զգալի քանակությունը։

Մենք նրանց արդեն տեսնում ենք բանտերում և աքսորավայրերում։ Նրանք ակտիվ աշխատում են պրոֆշարժման մեջ, վորն այն ժամանակ կիսալեգալ եր և նրան մասնակցողները նույնպես յենթարկվում եյին բանտի ու աքսորի։

Միապետության ժամանակ գեղջկուհուն առավել ևս դժվար եր գիտակցություն ձեռք բերել ու մեր կուսակցության շարքերը մտնել։ Յեվ մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը նրանք շատ քիչ եյին կուսակցության մեջ։

Իմպերիալիստական պատերազմի ժամանակվանից կանանց թիվն աճում ե արդյունագործության մեջ։ 1917 թվի փետրվարին մենք արդեն տեսանք բանվորուհիների տարերային շարժումը։

Մինչ այդ ժամանակը կուսակցության շարքերում արդեն քաղաքականապես պատրաստված և բանտերում ու աքսորավայրերում կոփված բանվորուհիների մի փոքրիկ քանակություն կար։ Նրանցից վոմանք արդեն մասնակցել եյին 1905 թվի հե-

ղափոխությանը։ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, կու-
սակցության դռները բանվորուհիների և գեղջկուհիների առաջ
լայն կերպով բացվեցին։ Սակայն ընտանեկան ծանր պայմանները
մինչև այժմ էլ խանգարում են բանվորուհիների և գեղջկուհիների
թվի աճումը կուսակցության մեջ, վորը նրանցից ակտիվ աշխա-
տանք ե պահանջում։
1924 թվի Լենինյան որերին կուսակցության մեջ մտան
23,538 բանվորուհիներ։ Թանկագին ուսուցչի, մեծ ղեկավարի
կորստյան խոր վշտի րոպեյին բանվորուհիները հաստատապես
վորոշելով նվիրել իրենց ուժերը նրա պատգամների իրագործ-
մանը՝ դիմեցին դեպի լենինյան կուսակցությունը։
Ահա ինչպես ե նկարագրում ընկ. Անտոնովն այդ մոմենտը
«անկետաները չըավականացան» իր դիտողությունների մեջ, վորն
ընդմիշտ կմնա աշխատավորության հիշողության մեջ։
— «Մեռավ... Մեռավ ընկ. Լենինը։
— Կարող ենք արդյոք առանց նրան,—հարցնում եյին մի-
մյանց բանվորուհիները։ Ժողով գումարեցին. դահլիճում տիրում եր
խորին լռություն։ Խոր թախիծ եր պատել նույնիսկ այն բանվորու-
հիներին, վորոնք միշտ աղմկում եյին ժողովներում։
— Ո՞ւմով կ'փոխարինենք նրան։
— Բոլորս մտնենք կուսակցության մեջ։
Ձգտումն այնքան ուժեղ եր, վոր Ռ. Կ. Կուս. (բ) մտնել
ցանկացողների համար հարցաթերթիկները չըավականացան»։
Ուժեղ հարված հասավ, և բոլորը կանգնեցին Ռ. Կ. Կուս.
շարքում։
Լենինյան «նաբորից» հետո կոմմունիստ կանանց թիվը կու-
սակցության մեջ 38,501-ից հասավ 64,430 ի։
Լենինյան որերում հատկապես շատ բանվորուհիներ մտան կու-
սակցության մեջ արդյունագործական քաղաքներում (Լենինգրադ,
Մոսկվա, Տուլա, Նիժնի)։ Այս քաղաքներից մի քանիսում կանանց
թիվը 5 և կես անգամ ավելացավ։
Լենինյան կոչի ժամանակ բանվորուհիների տոկոսը՝ համե-
մատած կին անդամների և թեկնածուների ընդհանուր թվի հետ՝
ավելացավ 38,1% մինչև 47,5%։ 1927 թվին կուս. մարդահամա-
րից հետո կոմմունիստ կին անդամների և թեկնածուների թիվը
137,430 եր։ Այս թվից 47,0% բանվորուհիներ եյին, 9,6%—
գեղջկուհիներ, 35,4% ծառայողներ, 8,0%—այլ և այլ։ Հ. Կ. Կուս.
(բ) անդամներ մենք ունենք 81,712, թեկնածուներ—65921։ Կուս.

անդամ և թեկնածու կանայք կազմում են կուս. անդամների ընդ-
հանուր թվի 13,1$^{0}/_{0}$։
Բայց այնուամենայնիվ կուս. ղեկավար օրգաններում կա-
նայք քիչ են։ XIII համագումարին, այսինքն 1924 թ. մենք ունենք
ընդամենը 3$^{0}/_{0}$ կին անդամ նահանգ. կոմիտեներում և 5,9$^{0}/_{0}$—
գավառ. կոմիտեներում։
1926/27 թվի կուս. կոմիտ. վերընտրություններից հետո
նահանգ. և շրջանային կոմիտեներում կանայք կազմեցին 7,1$^{0}/_{0}$։
կանանց մեծ $^{0}/_{0}$-ը նահանգ. կոմիտեներում ընկնում է կենտրո-
նական արդյունագործական նահանգներին, որտեղ նրանք
կազմում են 9,7$^{0}/_{0}$։ Ամենասակավ թիվը նրանք կազմում են ինք-
նավար շրջաններում և հանրապետություններում—3,8$^{0}/_{0}$։ Ուկրա-
կոմներում—5,7$^{0}/_{0}$ կանայք են, գավկոմներում—7,8$^{0}/_{0}$։ Կենտրո-
նական արդյունագործ. նահանգների գավակոմներում—11,0$^{0}/_{0}$ կա-
նայք են, իսկ Անդրկովկասի գավկոմներում՝ միայն 3,5$^{0}/_{0}$։ Բա-
ղաքային շրջ. կոմիտեներում—12,4$^{0}/_{0}$ կանայք են։
Կարելի՞ չէ ասել, որ կանանց թիվը կուսակցության մեջ
բավարար է։
Ի հարկե՝ ոչ. և կուսակցությունը պարզում էր բանվորուհի-
ների ու գեղջկուհիների դեպի կուսակցությունը թույլ ձգտ-
ման պատճառները։ Հիմնականում նրանք հետևյալներն են.
ամենագլխավոր պատճառը բանվորուհու կյանքի դժվար պայ-
մաններն են, բանվորուհու, որն որպես երկրորդ կեսը պետք
է նվիրի ընտանիքի տնտեսությանը, երեխաներին։
Բանվորուհիներն ու գեղջկուհիները կուսակցության շար-
քերը մտնելով՝ մեծ մասամբ գիտակցորեն են վերաբերվում դե-
պի կուսակցական պարտականությունները։ Հաճախ նրանք չեն
մտնում կուսակցության մեջ, որովհետև ընտանեկան աշխատան-
քը մի րոպե ազատ ժամանակ չի թողնում՝ կուսակցական պար-
տականությունները կատարելու։
Բանվորուհիների և գեղջկուհիների մեջ անգրագետների և
կիսագրագետների թիվն ավելի շատ է, քան բանվորների և գյու-
ղացիների։ Այս հանգամանքը խիստ խանգարում է նրանց քաղ-
գրագիտությունը յուրացնելուն։ Դեռ շատ բանվորուհիներ, մա-
նավանդ շատ գեղջկուհիներ կան, որոնք տակավին չեն ազատվել
կրոնական նախապաշարմունքներից։ «Հենց կուսակցության մեջ
ես մտնում թե չէ, սրբերի պատկերները հանիր,—ասաց մի
բանվորուհի, երբ նրան հարցրին, թե ինչու նա չի մտնում կու-

սակցության մեջ.—«հասկանում եմ, որ զարգացած չեմ, և ա-
ռայժմ ուժից վեր է»։ Լինում է և այնպես, որ ասածուն մտ-
նում են ամաններն ու ամուսինը։ «Ամենից շատ մեզ խանգա-
րում են՝ աստվածը, ամանները և ամուսինը»,—ասում է մի բան-
վորուհի, պատմելով իր քույր-բանվորուհիների կյանքի մասին։
Պատահում է, որ բջիջը բավարար ուշադրություն չի դարձնում
բանվորուհիներին դեպի կուսակցությունը քաշելու խնդրին։ «Դի-
մում տվինք մենք,—պատմում է մի հասակավոր բանվորուհի.
—բջիջը յերեք անգամ նիստ ունեցավ, բայց մեր դիմումների
մասին ձայն չկար»։
Լենինյան նաբորի ժամանակ կուսակցական մի քանի կազ-
մակերպություններ հաշվի առան բանվորուհիների թույլ հոսան-
քի այդ պատճառը։ Նրանք բանվորուհիներին դեպի կուսակցու-
թյունը քաշելու կամպանյա տարան, որը խիստ ուժեղացրեց
կանանց հոսանքը դեպի կուսակցությունը։

28. ԱՐԵՎԵԼՔԻ ԿԻՆԸ

Ինչքան էլ դժվար է Ռ. Ս. Խ. Հ. կենտրոնական նահանգներում բանվորուհիների և գեղջկուհիների համար իրականացնել 1917 թ. հոկտեմբերից սկսած իրավունքները, սակայն հեռավոր արևելյան շրջանների և հանրապետությունների իրենց քույրերը մինչև այժմ անհամեմատ ավելի վատթար դրության մեջ են գտնվում։

Թաթարները, բաշկիրները, չուվաշները, կիրգիզները, թուրքմենները, վոտյակները,—այս բոլոր ժողովուրդները և շատ ուրիշները ցարի ժամանակ վոչ միայն չեյին օգտվում զանազան իրավունքներից, այլ և բառիս լայն իմաստով իրավունք չունեյին գոյություն ունենալու։ Նրանք կոչվում եյին այլազգիներ։ Ռուս վաճառականները, կալվածատերերը, աստիճանավորները օգտվելով նրանց հետամնացությունից՝ կարողացածին չափ հարստահարում եյին նրանց. չնչին գներով գնում եյին նրանց հողերն ու անասունները, հեռացնում եյին իրենց նստակյաց վայրերից, ստիպում անսահման մեծ տուրքեր վճարել, թունավորում օղիով, զանազան սոսկալի հիվանդությունների գիրկը գցում և վոչ մի օգնություն չեյին ցույց տալիս։

Դարեր շարունակ այսպես են ապրել Արևելքի այդ ճնշված ժողովուրդները, իրենց վրա կրելով ցարական իշխանության բոլոր սարսափները, առանց վորևե հույս ունենալու, թե յերբևիցե դուրս կգան իրենց ծանր դրությունից։

Բայց ավելի ծանր պայմաններում էր ապրում Արևելքի կինը։

Նրանք ճորտական կախում ունեյին ընտանիքից և ամուսնուց։ Մինչև այժմ Արևելքում կան այնպիսի ժողովուրդներ, վորոնցում կինն է կատարում բոլոր հողագործական աշխատանքները, պահում անասունները, խնամում յերեխաներին, իսկ տղամարդիկ շուկայում ծախում են կնոջ պատրաստած մթերքները, գինի յեն խմում, տոնակատարություններին մասնակցում և ամոթ

համարում վորևէ աշխատանքով զբաղվելը։ Արևելքի շատ հանրապետություններում և շրջաններում կանայք ամբողջապես կախում ունեն տղամարդկանցից, վորովհետև ամուսինը գույքի տերն է, ընտանիքի գլուխը։ Մեծ մասամբ կինն ստրուկ է և տերը տնօրինում է վոչ միայն նրա աշխատանքը, այլ և նրա կյանքը։ Պահպանվել է բազմակնությունը, կալըմը. այսինքն՝ հարսնացուի գլխագինը։

Այս բոլոր սովորությունները դանդաղեցնում են արդյունագործության զարգացումը։ Որինակ՝ բազմակնությունը մեծ մասամբ հիմնված է կրոնական օրենքների վրա, վորը խանգարում է այլ կնոջ մտցնել ընտանիքը, յեթե նույնիսկ նա հարկավոր է իբրև բանվորուհի։ Ուզբեկստանի ծածկված կինը չի կարող օգնել իր ամուսնուն դաշտային աշխատանքների մեջ։ Կալըմն արգելում է չքավորին ամուսնանալ և ջրի իրավունք ստանալ, քանի վոր մի քանի շրջաններում ջրի իրավունքն ստանում է միայն ամուսնացած տղամարդը։ Տարեց տարի կյանքը խախտում է այս բոլոր սովորություններն աշխատավոր բնակչության լայն խավերի մեջ, և ներկայումս այդ սովորությունները պաշտպանվում են, գլխավորապես, միմիայն ունևոր խավերի կողմից։

Խորհրդային իշխանությունը մեր մեծ Միության բոլոր կանանց՝ տղամարդուն հավասար իրավունքներ տվեց։ Խորհըրդային իշխանության օրենքներով Արևելքի կինը Ս. Խ. Հ. Մ. բոլոր բանվորուհիների և գեղջկուհիների հետ միասին կարող է ընտրել և ընտրվել խորհուրդներում, կարող է դատավոր լինել, անկախորեն կարող է օգտվել գույքային իրավունքներից, իրավունք ունի ազատորեն ամուսին ընտրել իր համար և իր ցանկությամբ նրանից բաժանվել։ Վերջապես խորհրդային օրենքն ապահովում է նաև նրա իրավունքը՝ ամուսնուց միջոցներ պահանջել իր և յերեխաների գոյությունը պահպանելու համար, յեթե ամուսինը թողել է նրանց։

Սակայն Արևելքի յերկրներում այնքան ուժեղ են կենցաղային պայմանները, այնքան ուժեղ է տղամարդու իշխանությունը կնոջ վրա, վոր մինչև հիմա խորհրդային իշխանությունը մեծ դժվարություններով է կարողանում կնոջը խլել մեռած հին կյանքի ստրկացնող ճիրաններից։ Դեռ մինչև այժմ, չնայած խորհրդային օրենքներով արգելված են՝ կալըմը, բազմակնությունը, անչափահասների ամուսնությունը, կնոջը փակ պահելը, այնուամենայնիվ ժառանգական կենցաղի այդ մնացորդները ծանրանում են Արևելքի կնոջ վրա։

Բայց ինչ տարբերություն հնի համեմատությամբ: Այն ժա-
մանակ այս մնացորդները հովանավորում էր ցարական իշխա-
նությունը, իսկ այժմ այդ բոլորի դեմ կռվում է խորհրդային
իշխանությունը, դեպի կռիվ գրավելով և կռվին մասնակից դար-
ձնելով նաև իրեն՝ Արևելքի կնոջը: Կանայք ժողովներ են գու-
մարում, բանաձևեր հանում, դիմելով խորհրդային իշխանու-
թյանը, որ իրենց օգնե: Նրանք այլ ևս չեն ցանկանում փակված
նստել: Նրանք պահանջում են պատժել իրենց ծաղրի ու զրկանքի
ենթարկողներին:

Վորպեսզի օգնեն կնոջը՝ դուրս գալու կրոնական օրենքնե-
րով սրբագործված կենցաղային ծանր պայմաններից, կուսակ-
ցությունը և խորհրդային իշխանությունը նախ՝ Արևելյան հան-
րապետություններում և շրջաններում դպրոցների և այլ կուլտու-
րական հիմնարկությունների ամբողջ մի ցանց ստեղծեցին, վորոնք
աշխատանք են տանում կանանց շարքերում իրենց հարազատ
լեզվով: Վորպեսզի կինը տնտեսապես անկախ լինի, խորհրդային
իշխանությունը նրան քաշում է տնայնագործական արտելները և
արդյունագործական հիմնարկությունները: Արևելյան հանրապե-
տություններում և շրջաններում 1926 թ. մայիսի 1-ին պրոֆմիու-
թյան 221.672 անդամ կար, վորոնցից միայն 8% բնիկ կանան-
ցից են: Կանանց թիվն արդյունագործության մեջ աճում է ավելի
շատ Ուզբեկստանում և Թաթարիայում: Բազվի տեքստիլ գոր-
ծարաններից մեկում բոլոր կանանց 16,8% թրքուհիներ են:

Բնիկ բնակչուհիները քաշվում են նաև դեպի պրոֆ-
տեխնիկան կուրսերն ու դպրոցները: Ուզբեկստանում այդպիսի
դպրոցներում նախապատրաստվում են մանվածային բանվորու-
հիներ՝ նոր կառուցվող մանվածային ֆաբրիկաների համար:

Ինչպես ամբողջ Միության մեջ, նույնպես և այստեղ կա-
նայք ներառվում են պրոֆեսիոնալ, կոոպերատիվ, դատական
և փոխօգնության աշխատանքների մեջ:

Բայց Հոկտեմբերյան հեղափոխությունն այնքան անպատ-
րաստ գտավ Արևելքի կնոջն իր իրավունքներից օգտվելու խընդ-
րում, վոր տարիներ անցան, մինչև նա իրոք հնարավորություն
ստացավ իր ուժերը գործադրել ընդհանուր շինարարության
մեջ: Այս բանում նրան օգնում է կուսակցությունը իր կին բա-
ժինների միջոցով:

Վոչ մի տեղ կին բաժինների աշխատանքն այնքան մեծ
նշանակություն չունի, վորքան Արևելքում: Կին բաժինները մեծ

դժվարություններով սկսեցին իրենց աշխատանքները Արևելքում,
և շատ համառ աշխատանք գործադրեցին ու հարթեցին իրենց
ճանապարհը:

Աշխատանքն սկսվում էր կանանց ժողովներից և հատուկ
ակումբներով: Արևելքի աշխատավոր կանայք տղամարդկանց հետ
միասին ընդհանուր ժողովներում և ընդհանուր ակումբներում
լինելու հնարավորություն չունեն մինչև այժմ:

Մի քանի հանրապետություններում, վորտեղ տղամարդիկ
առանձնապես ճնշում են կանանց և տնից դուրս չեն թողնում,
կին բաժնի աշխատակիցները մտնում են նրանց տները՝ վորպես
հյուր, հանդիպում են կանանց բաղնիքներում, վորտեղ՝
Արևելքի սովորության համաձայն՝ կանայք յերկար ժամանակ են
մնում, զրուցելով միմյանց հետ իրենց հետաքրքրող զանազան
հարցերի մասին:

Պատահել են դեպքեր, յերբ ագիտացիայի համար հարկա-
վոր է յեղել կնոջը նստել մեռելատանը՝ հանգուցյալի մոտ:

Յերկար աշխատանքի շնորհիվ միայն հաջողվեց կանանց
գրավել դեպի ակումբները, ժողովները, արտելները:

Ակումբներին կից կան ջուլհակային, կազմարարական, կոշ-
կակարական արհեստանոցներ: Այնտեղ կանայք առաջին անգամ
արհեստ են սովորում: Ահա օրինակ Ադրբեջանում Ալի-Բայրամլո-
վի ակումբը. այնտեղ հարյուրավոր կանայք վերացնում են իրենց
անգրագիտությունը և հնարավորություն են ստանում այս կամ
այն արհեստը սովորելու: Ակումբին կից գոյություն ունի կոմ-
բինատ, վորտեղ 63 կին կա: Ակումբի անդամ կանանց յերեխաները
կազմակերպված են ակումբին կից պիոներ կազմակերպության
և Լ. Կ. Յ. Միության բջիջի մեջ: Այդ ակումբը գոյություն ունի
1920 թվից: Շատ օտարերկրացի ընկերներ, վորոնք գալիս են
տեսնելու, թե մենք ինչպես ենք ապրում և աշխատում, հիանում
են մեր կանանց ակումբներով: Այժմ մենք 87 ակումբ ունենք:
Բացի այդ, կան 210 ակմբային անկյուններ, վորոնց շուրջը հա-
մախմբվել են Արևելքի մոտ 30,000 կանայք:

Վաչկատուն ժողովուրդների համար կազմակերպվում է կար-
միր յուրտ, վորը շրջում է մի ռայոնից մյուսը: Յուրտը ար-
տաքուստ զարդարում են կարմիր դրոշակներով, ներսից կախում
են զանազան պլակատներ, նկարներ:

Յուրտում սովորեցնում են կնոջը, թե ինչպես պետք է
խնամել յերեխաներին, վերացնում են նրա անգրագիտությունը,

աղջիկներին սովորեցնում են կարել, ասան լվանալ, լվացք անել։
Յուրտը կուլտուրական սովորություններ և մտցնում լայն մաս-
սաների մեջ։ Կազակստանում կան այդպիսի 28 յուրտեր։ Նրանք
սկսում են ցերեկը Կալմիկյան տափաստաններում, Բուրյատո-
Մոնղոլիայում, Ոյրատիայում։
Յուրտի համար նյութական միջոցներ միշտ չեն գտնվում։
Այդ դեպքերում կին կազմակերպչուհին կամ ուղտ և նստում,
կամ ձի և այդպիսով մտնում քոչվորուհիների մեջ, զրույց անում
նրանց հետ և բարձրացնում նրանց կուլտուրական մակարդակը։
Յեվրոպայի կնոջ համար դա ուժերից բարձր աշխատանք կլիներ,
բայց քոչվորուհիների միջից արդեն առաջ են գալիս աշխատա-
կիցներ։ Նրանք լավ գիտեն իրենց ժողովրդի կենցաղը։ Նրանք
անձնազոհությամբ իրենց քույրերի համար զանազան օգտակար
գիտելիքներ են տանում և նրանց քաղաքականապես զարգացնում։
Քաղաքներում, գյուղերում, աուլներում գոյություն ունեն
պատգամավորական ժողովներ։ Բնիկ ժողովրդից 18 հանրապե-
տություններում և շրջաններում կա 24,455 պատգամավորուհի։
Պատգամավորական ժողովները կուսակցության շուրջն են
համախմբում բնիկների կանանց, սովորեցնում են նրանց հա-
սարակական աշխատանքների։ Խորհ. վերջին վերընտրություն-
ների ժամանակ Արևելքի աշխատավոր կին-պատգամավորու-
հիները ցույց տվին իրենց, իբրև գիտակից հասարակական աշ-
խատավորուհիներ. Նրանք ձայն տվին բատրակներին և չքա-
վորներին, ժողովներից դուրս էյին քշում կուլակներին և մոլլա-
ներին։

Պատգամավորական ժողովներին կից աշխատում են զանա-
զան սեկցիաներ։ Պատգամավորուհիներն առանձնապես հետաքըր-
քըրվում են իրավական սեկցիաներով, և դա հասկանալի յե։ Բա-
ցի Արևելքի կանանցից՝ եղ ով կարիք ունի խորհրդային դատա-
րանի պաշտպանության։ Պատգամավորուհիները խորհրդային դա-
տարանում հանդես են գալիս վոչ միայն իբրև դատավորներ, այլ և
ստիպված են լինում հանդես գալ իբրև կանանց պաշտպան՝ նաև
շարիաթի կրոնական դատարաններում, վորոնք մինչև այժմ եղ պահ-
պանվում են մի քանի հետամնաց վայրերում։ Նրանք գործում
են խելացի ու բանիմաց կերպով։ Լենինի անունով նրանք ապա-
ցուցում են կնոջ իրավունքը ամուսնալուծման վերաբերմամբ, նրանց
հաջողվում է պաշտպանել կանանց նույնիսկ այն դեպքերում,

յերբ շնորհիվ հետամնացության ու խավարի՝ ամբողջովին անձ-
նատուր են եղած Արևելքի ժողովուրդների կենցաղային նախա-
պաշարումներին։
Կանայք Արևելքում աշխատում են նաև զանազան տիպի
կոոպերացիաներում,—16 ազգային շրջաններում, տնայնագործա-
կան կոոպերացիաներում կա 10,660 կին։ 5 ազգային շրջանների
գյուղատնտեսական կոոպերացիայում — 2286 կին, և միայն 4
ազգ. շրջանների սպառողական կոոպերացիաներում — 7599 կին։
Ուզբեկստանում, վորտեղ ապրող ժողովուրդների սովորու-
թյան համաձայն՝ կինն անկարող է տղամարդկանց առաջ յերեսը
բանալ, նա հասարակական վայրերում ներկայանում է փարան-
ջայով, այսինքն՝ ձիու մազից պատրաստած թանձր քողի տակ.
կազմվում են հատուկ խանութներ կանանց համար, այնտեղ կան
կարմիր անկյուններ, ուր կինը կարող է իր յերեսը բանալ, հան-
գստանալ, նայել, զրույց լսել, լրագիր կարդալ։ «Սրանք մեր կա-
նանց անկյուններն են»,—ասում են կանանց մեջ աշխատողները։
Թե վորքան են առաջ գնացել Արևելքի կանայք վերջին տա-
րիներս, կարելի յե դատել նրանից, վոր նրանք արդեն մաս-
նակցում են յերկրի կառավարության գործում։ Նրանց ընտրում
են խորհուրդներում, համագումարներում. կան Արևելքի կանայք,
վորոնք իրենց յերկրի կառավարության անդամներ են։
1924-25 թ. տասը ազգային հանրապետություններում և
շրջաններում 5156 արևելցի կին է յեղել խորհուրդներում։
1925-26 թվ. նույն տեղերում յեղել է 15,858։ Ուզբեկստանում
1925-26 թվին խորհուրդների վերընտրությանը մասնակցել է
50.566 կին, իսկ 1926-27 թվին — 128,265 կին։ Այն տեղերում,
ուր կանայք մինչև հիմա ծածկված են, նրանց համար ընտրա-
կան առանձին փակ ժողովներ են կազմել։
Իրենց պատգամավորական ժողովներում, կոնֆերենցիանե-
րում, դպրոցներում Արևելքի կինը մեծանում է վոչ թե օրերով,
այլ ժամերով, և նրա համար լայն ճանապարհ է բացվում դեպի
լենինյան կուսակցությունը։
Կուսակցության մեջ Արևելքի կանանց թիվը, վոր 1925 թ.
հունվարի 1-ին 89 է յեղել Ուզբեկստանում, 1926 թ. հունվարի
1-ին հասել է 312-ի։ Կազակստանում նույն ժամանակաշրջանում՝
73-ից հասել է մինչև 339-ի։
Բնական է, վոր կուսակցության անդամ լինող Արևելքի
կանայք իրենց ուժերը նվիրում են գլխավորապես կանանց մեջ

տարվելիք աշխատանքին։ Բացի նրանցից, եվ ով պետք է օգնու
թյան ձեռք մեկնե իրենց դժբաղդ քույրերին։
Հեղափոխության տասներորդ տարին նշանավոր դարձավ
Արևելքի կանանց ազատագրման նկատմամբ տարած աշխատանքի
չտեսնված վերելքով։
1927 թվի մարտի 8-ին Համ. Կոմ. Կուս. (բ) Միջին-Ասիայի
կազմակերպությունները հին կենցաղի դեմ այսպես կոչված
«արշավանք», քաղաքական կամպանիա կազմակերպեցին։ Նրանք
կոչ էյին անում կանանց՝ հանել փարանջաները և վճռական կռիվ
հայտարարել հին կենցաղի դեմ՝ հանուն Հոկտեմբերյան նվաճում-
ների։ Առաջինը պետք է փարանջաները հանեյին կոմմունիստ-
ների կանայք։
1927 թվի մարտի 8-ը կին բաժինների կողմից հայտարար-
ված էր իբրև ուժերի ստուգման օր։
Այդ օրը կազմակերպված անկուսակցական կոնֆերենցիա-
յում բացվեցին 51 պատգամավորուհիներ։
Հազարավոր կանայք հավաքվելով հրապարակներում, այրե-
ցին իրենց անիծած փարանջաները, այն սև հրեշները, որ խան-
գարել էին նրանց ապրել ու շնչել։
Կամպանիան Թափանցում է հեռուն — ղշլաղները և աուլ-
ները։ Շարժումը տարածվում է։ Նա արդեն իր զոհերն ունի. դա
ամուսինների ձեռքով կատարված սպանություններն են նրա հա-
մար, որ կանայք բացվել են, որ նրանք գնում են դպրոց սովո-
րելու։ Այդ սպանությունների ու ծեծի նպատակն է՝ ստիպել
կանանց կրկին ծածկվելու։
Բայց կին բաժինները կանգնած են իրենց դիրքերում, նր-
անք ամեն ջանք գործ են դնում, որ կռիվը հաջող վերջանա,
որ դեպի ազատագրումը տանող առաջին քայլերն՝ ընդդեմ ան-
ցյալ խավար, հին կյանքի՝ հաջող ընթանան։
Այս կամպանիայում Արևելքի կանանց հետ և լենինյան
վողջ կուսակցությունը։ Նա մինչև վերջը կիրականացնե իր մեծ
ղեկավարի պատգամները ծայրահեղ ճնշվածների ազատագրման
գործում։

---

29. ԿԱՆԱՆՑ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ

Դեռ մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը, միապետու-
թյան օրով, մեր կուսակցությունը կոչ էր անում բանվորուհի-
ներին մասնակցել միջազգային կանանց տոնին, վորն առաջա-
վոր բանվորները և բանվորուհիները տոնում են նաև կապիտա-
լիստական յերկրներում՝ իրենց դասակարգի հետամնաց խավերին
քաշելու դեպի կռիվ ընդդեմ բուրժուազիայի՝ սոցիալիզմի համար։
Մենք գիտենք, վոր կանանց միջազգային օրը Ռուսաստա-
նում առաջին անգամ տոնվել է 1913 թվին։ Այս տոնակատարու-
թյունն ուժեղ կերպով օգնեց բանվորուհիներին՝ հասկանալու կա-
պիտալիզմի դեմ բանվոր դասակարգի մղած կռվում կանանց
մասնակցության վողջ կարևորությունը։
Հետևյալ 1914 թվին, ինչպես մենք գիտենք, վոստիկանու-
թյունը ձերբակալեց տոնակատարությունը կազմակերպողներին,
թեև այնուամենայնիվ այդ օրը լույս տեսավ «Ռաբոտնիցա»-յի
համարը, և արդյունագործական մեծ քաղաքներում առանձին ժո-
ղովներ կայացան։
Պատերազմի տարիներում ցարական կառավարությունը
խստությամբ հետամուտ էր լինում բանվորական շարժմանը։
Հավաքվելու հնարավորություն չկար, բանվոր դասակարգը խեղդ-
վում էր ամեն տեսակ բռնությունների ու հալածանքների տակ։
Պատերազմի արյունոտ մղձավանջից հուսահատության հասած՝
Լենինգրադի բանվորուհիները մարտի 8-ին (փետրվարի 23-ին),
ինչպես մենք գիտենք, փողոց յելան ու պահանջեցին հաց և ա-
մուսինների վերադարձը կռվի ճակատից։ Դա հեղափոխության
սկիզբն էր։
Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո կանանց կոմմու-
նիստական միջազգային օրը տոնում են վոչ միայն բանվորու-
հիներն ու գեղջկուհիները, այլ և ամբողջ աշխատավորությունը։
Քաղաքներում և գյուղերում միտինգներ, ժողովներ, յեր-
թեր են սարքվում։

Արևելքի ճնշված կանայք—մեր քույրերը հազարներով արթ-
նանում են նոր կյանքի համար, շպրտում են իրենց յերեսից
խեղդող, սև փարաջաները ու յերդվում՝ պրոլետարական շարժման
իրենց գիտակից ներկայացուցիչների հետ ձեռք ձեռքի տված
գնալ դեպի կոմմունիզմ։
Յուրաքանչյուր մարտի 8-ը մեր Միության բանվորուհինե-
րին ու գեղջկուհիներին միացնում ե ամբողջ աշխարհի բանվո-
րուհիների լավագույն մասի հետ։
Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո անցնող յուրա-
քանչյուր տարին նշվել ե իր անհետաձգելի կարևոր խնդիրներով
և այդ խնդիրները միշտ ցոլացել են միջազգային օրվա լո-
զունգներում։
1924 թվի մարտի 8-ը նշանակալից ե յեղել բանվորուհի-
ների և գեղջկուհիների մեծ վշտով՝ ընկ. Լենինի մահվան առ-
թիվ, վորն այլ ևս մեզ հետ չեր։ «Մենք կկատարենք Իլյիչի պատ-
գամները»,—ահա այն լոզունգը, վորով տոնում եյին այդ տարի
նրանք իրենց օրը։
Բնական ե, վոր հետևյալ տարին վորևե գործողությամբ
ցանկանում եյին հաստատել Լենինի դերեզմանի վրա արած խոս-
տումը։ Չե՞ վոր նա յիր կոչ արել բանվորներին և գյուղացինե-
րին, բանվորուհիներին ու գեղջկուհիներին դեպի մի ամուր միու-
թյուն։ Այդ օրը բանվորուհին ձեռք ե մեկնում գեղջկուհուն և
ամեն կերպ աշխատում օգնել նրան՝ գյուղատնտեսությունը բա-
րելավելու և բանվորուհու հետ քայլ առ քայլ առաջ գնալու
համար։
1926 թ. կանանց միջազգային օրը, ինչպես միշտ, կոմմու-
նիստական կուսակցությունը կոչ ե անում Խ. Ս. Հ. Մ-յան աշխա-
տավորությանը՝ ամրապնդել արևմտյան յերկրների և գաղութների
հարստահարված բանվորա-գյուղացիական մասսաների միու-
թյունը։ Միտինգներում, ժողովներում, կանանց ամսագրերում
պարզաբանվում ե բուրժուական, գաղութային ու կիսագաղու-
թային յերկրների աշխատավոր կանանց դրությունը և նրան հա-
կադրվում կնոջ դրությունը Խ. Ս. Հ. Մ-յան մեջ ու Խորհրդային
Արևելքում։ Բացատրվում են XIV կուս համագումարի վորոշում-
ները, և կոչ ե արվում Խ. Ս. Հ. Մ. բանվորուհիներին ու գեղջ-
կուհիներին օգնել կուսակցությանը և խորհրդային իշխանու-
թյանը՝ նրանց առաջ դրված խնդիրների իրականացման գոր-
ծում։

Նույն տարում, արդյունագործության առաջ դրված խնդիր-
ներին կից՝ կուսակցությունը կոչ ե անում բանվորուհիներին՝
վորակավորել իրենց աշխատանքը և բարձրացնել կուլտուրական
մակարդակը։
Կոոպերացիային և շեֆերին կոչ եր արվում՝ առաջին հեր-
թին օգնել այն չքավոր տնտեսություններին, վորոնց գլուխը
կանգնած ե գեղջկուհին։
Վերջապես, 1927 թվին, յերբ մեր սոցիալիստական շինա-
րարության հաջողությունները ամբողջ բուրժուական աշխարհի
զայրույթն եյին բորբոքում, և մեր հորիզոնում սկսում ե յերևան
գալ պատերազմի վտանգը, միջազգային կանանց օրը կոմմունիս-
տական կուսակցությունը կոչ ե անում բանվորուհիներին և գեղջ-
կուհիներին՝ բողոքել այն կատաղի հալածանքի դեմ, վորը վա-
րում են իմպերիալիստները Խ. Ս. Հ. Մ-յան դեմ։ «Հեռու ձեռներդ
Խ. Ս. Հ. Մ-ից, հեռու Չինաստանից, կորչի ժողովուրդների իմ-
պերիալիստական սպանդանոցը»,—ահա 1927 թվի միջազգային
օրվա հիմնական լոզունգը։
Վորովհետև 1927 թվի մարտի 8-ը զուգադիպեց խորհուրդ-
ների վերընտրության աշխատանքներին, բանվորուհիները և
գեղջկուհիներն այդ օրը գնում եյին իրենց ցույցերին, վորոնց
դրոշակների վրա գրված եյին. «բանվորուհիներ և գեղջկուհի-
ներ, ընտրեցեք աշխատավորության լավագույն ներկայացուց-
չուհիներին», և դիմելով Արևելքի աշխատավորուհիներին, մենք
ասում եյինք նրանց. «ընտրված պատգամավորներից պահանջե-
ցեք, վոր նրանք ամեն ջանք գործ դնեն՝ աշխատավորուհիներին
ազատագրելու համար»։
Մեր յերկրի ինդուստրիալիզացիայի հետ կապված հսկայա-
կան խնդիրները, խստագույն խնայողությունը և աշխատանքային
դիսցիպլինան նույնպես անդրադարձան այդ օրվա լոզունգներում։
Կանանց միջազգային օրը Խ.Ս.Հ.Մ-յան կանանց աշխատա-
վոր մասսաների ստուգման օրն ե։ Այդ օրը հարյուր հազարավոր
բանվորուհիներ և գեղջկուհիներ, Արևելքի կանայք, առաջին ան-
գամ քաշվում են կանանց կողմից իրենց ազատագրման համար
տարվող ընդհանուր կռվի մեջ, հազարավոր բանվորուհի և գեղջկու-
հի պատգամավորուհիներ այդ օրը հանդիսավորությամբ բաց են
թողնվում անգրագիտության դպրոցներից, և շատերը նրանցից
մտնում են կուսակցության շարքերը։
Սովորաբար միջազգային օրվանն են հարմարեցնում մը-

տուրների, կոնսուլտացիաների, հասարակական ճաշարանների, գյուղկոոպներին կից «մայր և մանուկ» անկյունների բացումը:

1925 թվին միջազգային որվա տոնակատարությանը մասնակցել է 3,225,789 մարդ, վորոնցից 1,977,473-ը կամ 60% — գեղջկուհիներ են: 27 նահանգներում այդ որը կուսակցության մեջ են մտել 8,876 բանվորուհիներ և գեղջկուհիներ: 2,227 աղջիկներ մտել են կոմյերիտմիության շարքերը: Նույն տարվա մարտի 8-ին 30 նահանգներում բացվել են ակումբներին և հանրակացարաններին կից 759 բանվորուհու անկյուն, 351 անկյուն գեղջկուհիների համար: Նույն նահանգներում բացվել են 559 մանկ. մսուրներ ու կոնսուլտացիաներ և 154 մանկ. հրապարակներ: 13 նահանգներում վորակյալ աշխատանքի յեն անցել 1273 բանվորուհիներ: Այդ տարին առանձին ուշադրություն է դարձվել գեղջկուհիների վրա, վորոնց տրվում եյին գյուղատնտեսական հարկի արտոնություններ, իսկ այրիները և կարմիր բանակայինների կանայք բոլորովին ազատվեցին հարկից: Շատ միայնակ տնտեսուհիներ ձրի փայտեղեն ստացան: 7 նահանգներում 30,000 գեղջկուհիներ արտոնյալ պայմաններով անդամագրվեցին կոոպերացիային:

Գեղջկուհիներն իրենք են սարքում իրենց տոնը: Վլադիմիրսկի նահանգի, Պերեյասլավսկի գավառի, Ռյազանցևսկի գավառակի գեղջկուհիներն այս տարի մի առանձին ջանքով անցկացրին մարտի 8-ի կամպանիան: Մարտի 8-ի նախորյակին, գիշերվա ժամը 2-ին, կին-ընկերը, վորը յեկել էր հետևյալ որը զեկուցելու, պատգամավորուհիներին գտավ վոտքի վրա: Խրճիթ ընթերցարանում նստած՝ նրանք դրոշակներ և իրենց հնարած պլակատներն եյին պատրաստում: Հետևյալ որը յերեկոյան պլակատները կախված եյին այն հրապարակում, վորտեղ միտինգներ կազմակերպվում: Վոչ միայն գեղջկուհիները, այլ և գյուղացիք յեկել եյին նայելու գեղջկուհիների պատրաստած այդ լուսավոր պլակատներին, վորի միջոցին լսեցին նաև բանվորուհիների ու գեղջկուհիների միջազգային որվա մասին: Այդ պլակատներն ոգտագործեցին գավառակի և՛ մյուս գյուղերը:

1926 թվին միայն կենտրոնական արդյունագործական 5 քաղաքներում մասնակցել է 300,000 մարդ: Առանձին վոգևորությամբ անցան ցույցերը խորհրդային Արևելքում:

Հյուսիս-արևմտյան շրջանում 1368 բանվորուհիներ անցան բարձր վորակի և 124 բանվորուհիներ առաջ քաշվեցին վարչատնտեսական աշխատանքի:

1927 թվին մի շարք նահանգներում մսուրներ, կոնսուլտացիաներ, կոոպերատիվ հիմունքներով ճաշարաններ բացվեցին: Այսպես՝ տարեցտարի բանվորուհիները գեղջկուհիները Խ.Ս.Հ.Մ-յան Արևելքի կանայք աշխույժ քայլերով առաջ են գնում իրենց ազատագրման դժվար ուղիով: Նրանք մասնակից են դառնում պրոլետարական սոցիալիստական շինարարության ընդհանուր գործին: Միջազգային որը նրանք հաշվի յեն առնում իրենց նվաճումները:

Դա մի որ է, յերբ ամբողջ աշխարհի աշխատավորուհիները միանում են՝ հետամնացության, տարկության կնիքը դեն շպրտելու և նոր լուսավոր կյանք կառուցողների ընդհանուր ընտանիքի մեջ մտնելու ուժեղ ձգտումով:

Կանանց միջազգային որը՝ մեր ամբողջ Միության բանվորուհիներն ու գեղջկուհիները իրենց վողջյունների մեջ յերբեք չեն մոռանում կանանց բանվորական շարժման միջազգային որվա ղեկավար ընկ. Կլարա Ցետկինային:

1910 թվին Կոպենհագենում, միջազգային III սոցիլ. կոնֆերենցիայում, նրա առաջարկությամբ վորոշվեց ամբողջ աշխարհում կազմակերպել կանանց միջազգային որը, վորպեսզի հետամնաց բանվորուհիներին և գեղջուհիներին գրավեն դեպի բանվոր դասակարգի ընդհանուր կռիվը:

Կլարա Ցետկինան Գերմանիայի պրոլետարիատի ղեկավարն է, ուստի, չնայած իր ծեր հասակին, նա գերմանական կառավարության կողմից հալածանքի յենթարկվեց: Մենք հպարտանում ենք նրանով, վոր նա ապրում է մեզ մոտ — Խ. Ս. Հ. Մ-յան մեջ:

Մոսկվա քաղաքի և Մոսկվայի նահանգի, ինչպես և այլ քաղաքների բանվորուհիներն ու գեղջկուհիները, վորոնց մեջ լինում է ընկ. Կլարա Ցետկինան, բախտ ունեն իրենց ժողովներում տեսնելու նրա՝ ամեն մի բանվորուհու, գեղջուհու, Արևելքի աշխատավորուհու համար անսահման մոտիկ և թանկագին դեմքը ու լսել նրա քաջալերիչ կոչը՝ դեպի կռիվ, դեպի շինարարություն:

Հենց այս տարի մենք տոնեցինք Կլարա Ցետկինայի 70-ամյակը: Թող դեռ յերկար, յերկար ապրի մեր սիրելի, թանկագին Կլարան, վորպեսզի աշխուժությամբ լցնե բանվորուհիների և գեղջկուհիների սիրտը, վորպեսզի կիսե նրանց հետ ուրախությունն ու վիշտը, վորպեսզի վարակե նրանց իր ռազմական վոգով:

30. ԸՆԿ. ԼԵՆԻՆԸ, ԲԱՆՎՈՐՈՒՀԻՆ ՅԵՎ ԳԵՂՋԿՈՒՀԻՆ

(Վերջաբանի փոխարեն)

Բանվորուհիների, գեղջկուհիների և Արևելքի աշխատավորուհիների համար ընկ. Լենինը կար, կա և կմնա ընդմիշտ՝ իբրև մեծ ղեկավար, ուսուցիչ, ընկեր: Դեպի Լենինն էին ուղղվում նրա կենդանության ժամանակ բանվորուհիների և գեղջկուհիների միլլիոնավոր մասսաների մտքերը: Լենինի մահվանից հետո՝ այն թախծոտ օրերին նրանք Լենինի մահն էին վողբում: Նրանց համար ընկ. Լենինը այժմ էլ մնում է իբրև մի վառ փարոս, վորը լուսավորում է դեպի սոցիալիզմ տանող ուղին:

Վոր բանվորուհիներն ու գեղջկուհիները ջերմագին սիրում էին Իլյիչին, յերևում է նրա մահվան բոթը կսկիծով ընդունելուց:

«Այնտեղ, վորտեղ ծանր էր շնչելը, վորտեղ կարիքը ճնշում էր հոգին՝ ստիպելով սև գրոշներով ծախել մկանները, այնտեղ ավելի, քան այլ տեղերում սիրում էին Իլյիչին: Թեկուզ դա առաջվա տարիներում «Կենիգ» գործարանի բանվորուհի — Պուտիլովի գործարանի բանվորի պառավ-մայրը լինի: Ինչո՞ւ յեն մթագնած նրա աչքերը, ինչո՞ւ նա, վորը յերբեք լրագիր կարդացած չէր, յերկու անգամ խնդրեց վորդուն լրագիրը կարդալ:

Չէ՞ վոր դեռ յերեկ նա քրթմնջալով իշխանության և կուսակցության հասցեյին, գնաց յեկեղեցի՝ քավելու իր և յուր կոմյերիտական վորդու մեղքերը: Հիմա գրոշակի համար տվեց իր ստորինի վերջին գոգնոցը, յերբեք որ ե՞ կանթեղ է վառում, պատրաստվում է՝ «Աստծու ծառա Վլադիմիրի» համար հոգեհանգիստ կատարել տալ. նրա անունը չմոռացավ գրել «հանգուցյալ հուշատետրում»: Յեվ հենց վոր խոսում են հանգուցյալի մասին, նա սրտամորմոք լալիս է:

— Տատիկ, ինչո՞ւ յես լալիս, չէ՞ վոր Լենինը հավատացյալներին չէր սիրում, — փորձում է վորևէ մեկը կիսկատակով խելքի բերել նրան:

— Գիտեմ, վոր չէր սիրում: Յեվ հայհոյում էր: Սիրում ենք մենք բոլորս նրան. նա լավն էր: Յեվ գոգնոցով աչքերը սրբում, սիրով պատմում էր, թե ինչպես յերիտասարդ ժամանակ ինքը գործարանում աշխատելիս՝ տեսել է նրան. վո՜րքան լավն էր նա, վո՜րքան բարի»:

Ընկ. Բելլեր, վորն ապրում է Դոնի Բասսեսկայա ստանիցայում, գրում է բանֆակի ուսանող իր վորդուն.

— Իսկ յերբ հեռագիրն ստացվեց մեր թանգագին առաջնորդ Վլադիմիր Իլյիչ Լենինի մասին, թե նա մահացել է, մեր տխրությունն ու վիշտն այնքան մեծ էր, վորպիսին յերբեք չենք զգացել:

Բոլորը սգի մեջ են, սգի մեջ է պրոլետարական իշխանությունը, նաև յես, Նինան, Պոլյան. բոլորը, բացի բուրժույներից:

Վասյա, հիմա խնդրում եմ քեզ, գրիր մեզ, թե ինչպե՞ս թաղեցին Վլադիմիր Իլյիչին: Գնիր նրա կենդանի ժամանակվա նկարը և հետո, յերբ մեռած էր: Այս մասին քեզ խնդրում են Նինան և Պոլյան:

Յեթե դու իմանաս, թե ինչպես ենք ցանկանում մենք գոնե մեկ աչքով նայել Մոսկվային Լենինի թաղման ժամանակ:

Լենինի թաղման ժամանակ մեր ամբողջ հրապարակը լիքն էր բազմությամբ. մենք բոլորս թաղման ազերթի յերգ էինք յերգում:

Քեզ սիրող մայրդ:

(«Կրեստյանկա» ամսաթերթ, № 1, 1927 թ.):

Ընկեր Լենինը կարողացավ հասկանալ և պարզ, հասարակ խոսքերով տալ այն բոլորը, ինչից վոր տառապում է աշխատավորուհի կինը, և այն անքակտելի կապը, վորը նրա բախտը կապում է ամբողջ բանվոր դասակարգի բախտի և կոմմունիզմի հաղթանակի հետ:

Խորհրդային իշխանության հրատարակած առաջին դեկրետներից մեկը, վորին մոտ մասնակցություն է ունեցել ընկ. Լենինը, այն դեկրետն էր, վորը հաստատում էր կանանց լիակատար իրավահավասարությունը տղամարդկանց հետ: «Խորհրդային իշխանության մեջ քարը քարի վրա չմնաց այն օրենքներից, վորոնք կնոջը յենթարկվողի դրության մեջ էին դնում»: Այն բոլոր ստորացուցիչ օրենքները, վորոնք մինչև հեղափոխությունը ստրկացնում էին կնոջը, վերացվեցին: Կինն իրավունք ստացավ պահանջ ներկայացնել հորը՝ ծնված զավակին ապահովելու համար, յեթե նույնիսկ ամուսնությունը վավերացված չէ: Ընկ. Լենի-

նի խոսքով՝ «Խորհրդային իշխանությունը աշխատավորական մասսաների համար՝ հին, անտանելի, անիրավ օրենքներից քարը քարի վրա չթողեց»:

Ընտանիքի և ամուսնության մասին օրենքներ հրատարակվեցին, վորոնք իրավաբանական նշանակությունից զրկեցին յեկեղեցական պսակը, և փոխադարձ համաձայնությամբ կամ ամուսիններից մեկի ցանկությամբ ամուսնալուծության նոր օրենք սահմանվեց: Այդ օրենքները վոչնչացրին օրինական ճանաչված, ինչպես և օրենքից դուրս կենակցությունից ծնված յերեխաների միջև յեղած տարբերությունը: Հիմնականում այդ բոլոր դրույթյունները պահպանված են ընտանիքի և ամուսնության մասին 1926 թվին հրատարակված կոդեքսում: Այս նոր օրենքը ճանաչելով հանդերձ վավերացված ամուսնությունը, գտնում է, վոր փաստական ամուսնությունն ևս պարտավորեցնում է ամուսիններին՝ ինչպես անաշխատունակության և անգործության դեպքում սննդադրամ վճարել անկար ամուսնուն, նույնպես և ամուսնության ընթացքում վաստակած գույքը յերկուսի սեփականությունը ճանաչել: Այս նոր կոդեքսը բարելավում է կնոջ դրությունը իբրև կողմի, վորը տնտեսապես վատ է ապահովված:

Բայց այս օրենքները կյանքում կիրառելու համար՝ բավական չէ միայն օրենսդրական պաշտպանությունը:

Խորհրդային իշխանությունը, հենց վոր պրոլետարիատի ձեռքն անցավ իշխանությունը, իր օրգանների միջոցով անմիջապես զանազան միջոցների ձեռնարկելով, առաջին քայլերն արավ՝ կանանց ստացած իրավունքները կյանքում փաստորեն կիրառելու համար:

Անմիջականորեն դիմելով աշխատավոր կանանց, ընկ. Լենինն իր ճառերում և հոդվածներում նշեց այն խնդիրները, վոր դրված են նրանց առաջ և վոր լուծել կարող են նրանք միմիայն պրոլետարիատի հետ ձեռք ձեռքի տված: Նա կոչ եր անում նրանց իրենց ուժերը գործադրել կառուցելու այնպիսի հիմնարկություններ, վորոնք աշխատավոր կանանց ուսերից կվերցնեն տնային տնտեսության «մանր, բթացնող և անարդյունք աշխատանքը», ինչպես անվանում եր ընկ. Լենինը:

Խոշոր նշանակություն տալով սոցիալիզմի այդ բողբոջներին, ընկ. Լենինը կոչ եր անում աշխատավորությանը՝ ամեն

երպ պահպանել նրանց: Նա կոչ եր անում բանվորուհիներին՝
շինարարության այս բնագավառում գործադրել իրենց կազմա-
կերպչական տաղանդը. «կին-բանվորուհիների ազատագրումը
պետք է հենց իրենց կանանց—բանվորուհիների գործը լինի»: Ընկ.
Լենինի այս լոզունգը ուղեցույց է հանդիսանում շինարարության
բնագավառում բանվորուհու կատարելիք աշխատանքի համար:
Մեր անմահ ղեկավարի մյուս մեծ լոզունգը ևս լուսավորում
է բանվորուհու, գեղջկուհու, Արևելքի կնոջ ուղին. «Ամեն մի խո-
հարարուհի պետք է սովորի յերկիր. կառավարել»:
Կապիտալիստական հասարակության որով քաղաքակա-
նությանը մասնակցելու համար՝ ընկեր Լենինի խոսքերով՝
«առանձին նախապատրաստություն եր պահանջվում. այդ պատ-
ճով էլ քաղաքականության մեջ կանանց ունեցած մասնակցու-
թյունը կապիտալիստական նույնիսկ ամենաառաջավոր և ազատ
յերկրներում՝ չնչին եր: Խորհուրդների իշխանությունը դեպի քա-
ղաքականություն, այսինքն՝ դեպի պետությունը կառավարելու
գործն է քաշում բոլոր աշխատավորներին, դրանց թվում և նը-
րանց, վորոնք դարերի ընթացքում ավելի յեն ճնշված յեղել, քան
ուրիշ վորևէ մեկը:
Սրանից տասը տարի առաջ, սկսած 1917 թ. հոկտեմբերից,
Խորհրդային Միության աշխատավոր կինը համարձակ կերպով
թևակոխել է ընկ. Լենինի մատնանշած ուղին: Դժվարանց է այդ
ուղին, բայց և միակն է, վորը նրան կհասցնե հաղթանակին:

Публ. Библиотека

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

Առաջաբան 3

1. Մինչև փետրվարը 5
2. Բանվորուհիները փետրվարյան հեղափ. ժամանակ . . . 12
3. Խորհուրդների համար մղվող կռվում. 17
4. Իրավահավասարուհիների մասին 20
5. Հոկտեմբերի նախօրյակին 23
6. Բանվորուհին Հոկտեմբերին. 27
7. Բանվորուհիներն ու գեղջկուհիները քաղաքացիական կռվի ճակատում 30
8. Բանվորուհիների և գեղջկուհիների առաջին համագումարը 41
9. Կին բաժինները 50
10. Ընկածների հիշատակին 53
11. Բանվորուհիներն ու գեղջկուհիներն իրենց կոնֆերենցիաներում 56
12. Աշխատանքային ընդհանուր պարտադիր ծառայություն 58
13. Բանվորուհիները և գեղջկուհիները շաբաթօրյակներում 60
14. Բանվորուհի և գեղջկուհի-պատգամավորուհիները . . . 65
15. Բանվորուհի-շեֆերը 77
16. Բանվորուհին ու գեղջկուհին մայրության և մանկության պաշտպանության ասպարեզում 78
17. Բանվորուհիները և գեղջկուհիները խորհուրդներում . . 81
18. Մեր հասարակական աշխատանք տանող կանայք . . . 90
19. Բանվորուհիների և գեղջկուհիների առաջ քաշումը. . . 93
20. Պրոֆշարժումը, բանվորուհիները և գեղջկուհիները . . 96
21. Բանվորուհիները վորակավորում են իրենց աշխատանքը 101
22. Կանանց աշխատանքի պաշտպանությունը 103
23. Բանվորուհին արտադրության համաչափ բաշխման աշխատանքների մեջ 106
24. Բանվորուհին և գեղջկուհին կոոպեր. աշխատանքներում 108
25. Կինը, կոմյերիտմիությունը և պիոներները 114
26. Կանանց մամուլի մասին 119
27. Բանվորուհին և գեղջկուհին կուսակցության մեջ . . . 124
28. Արևելքի կինը. 128
29. Կանանց կոմունիստական միջազգային օրը 134
30. Ընկ. Լենինը, բանվորուհին և գեղջկուհին. 139

ՀՀ Ազգային գրադարան
NL0232027

56. 189

90 ԿՈՊ.

ЗАККНИГА